

Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ

Տարեկան հաշվետվություն

2025

Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ

Տարեկան հաշվետվություն

2025

ՈՒՂԵՐՁ 10

01 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 12
- ՄԵՐ ՄԱՍԻՆ 14
- ՀՀ ԿԲ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 18
  - ՀՀ ԿԲ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 18
  - ՀՀ ԿԲ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 25

02 ՀՀ ԿԲ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 28
- ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ/ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 30
- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ/ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 35

03 ՀՀ ԿԲ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 38
- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ 40
- ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ 45
- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 46
- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՆՍԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ 52
- ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՋՈՐԱԿՑՈՒՄ 54

04 ՀՀ ԿԲ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: ԿԲ ԿԱՌՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 60
– ՄԱՐԴԻԿ 64
– ՀԱՄԱԿԱՐԳԵՐ 72
– ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 74
– ՏՎՅԱԼՆԵՐ 77

05 ՀՀ ԿԲ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ 82

06 ՀՀ ԿԲ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՐԺՈՒՅԹԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ, ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ 100

07 ՀՀ ԿԲ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 106

2025
ԹՎԱԿԱՆԸ՝ ԱՄՓՈՓ

ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

12-ամսյա գնաճ

▲ **3%** թիրախ երեք տարվա համար

3.3% եռամյա ժամկետում

Քաղաքականության տոկոսադրույք

▼ **6.5%** 2025

7.0% 2024

Բնականոն գնաճ

▲ **4.3%** 2025

0.9% 2024

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքություն

▲ **20.7%** 2025

20.2% 2024

Հավելյալ կապիտալ

174 ՄԼՐԴ Դ

Վարկ/գրավ հարաբերակցություն (LTV)

դրամի դեպքում

▶ **90.0%** 2025

90.0% 2024

արտարժույթի դեպքում

▶ **70.0%** 2025

70.0% 2024

Կապիտալի հակացիկլիկ բուֆեր

ընթացիկ դրույքաչափը — ընթացիկ դրույքաչափը

▲ **1.75%** 2025

1.50% 2024

Իրացվելիության ծածկույթի գործակից

դեկտեմբերի միջինը՝ բոլոր արժույթներով

▲ **231.6%** 2025

230.6% 2024

Ֆինանսական համակարգի ակտիվներ/ՀՆԱ

▲ **137.1%** 2025

130,9% 2024

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Տարվա ընթացքում ստացված զանգերի և դիմումների քանակ՝ ըստ բնույթի

զանգ

▲ 13470 2025

12024 2024



Հարցում
▲ 8037 7117

Խնդրանք
▲ 3952 3505

Բողոք
▲ 1476 1317

Առաջարկություն
▼ 3 33

Իրազեկում
▼ 2 52

դիմում

▲ 1514 2025

1204 2024



Բողոք
▲ 1023 652

Խնդրանք
▲ 313 312

Հարցում
▼ 143 198

Իրազեկում
▼ 28 33

Առաջարկություն
▼ 7 9

Ֆեյսբուքյան էջի հետևորդների թիվը

▲ 19041 2025

17067 2024

Յութուբի հետևորդների թիվը

▲ 1237 2025

970 2024

Լինկդինյան էջի հետևորդների թիվը

▲ 19506 2025


14987 2024

2025
ԹՎԱԿԱՆԸ՝ ԱՄՓՈՓ

ԱՆՁՆԱԿԱԶՄ


Անձնակազմի միջին թիվ

▼ **767** 2025 **779** 2024



Տարվա վերջի դրությամբ «Դիլիջանի ՈՒՀԿ»-ում աշխատակիցների թիվը

▼ **122** 2025 **132** 2024



Դիլիջան և հարակից տարածքներ

▼ **49** 2025 **55** 2024



«Դիլիջանի ՈՒՀԿ»-ում աշխատանքային պրակտիկա անցած արտասահմանյան բուհերի ուսանողներ

▲ **24** 2025 **11** 2024



ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամական զանգված

▲ **1,152,022,629.02 ՀԱՅԱՐ Դ** 2025

986,374,018.64 ՀԱՅԱՐ Դ 2024

որից՝

▲ մետաղադրամ, հազ. դրամ **37,431,553.83** 2025

մետաղադրամ, հազ. դրամ **34,810,579.26** 2024

▲ թղթադրամ, հազ. դրամ **1,114,591,075.19** 2025

թղթադրամ, հազ. դրամ **951,563,439.38** 2024

ՀՆԱ-ում ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի զանգված

▲ **10.18%** 2025

9.68% 2024

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

Պահուստների ներմուծման ծածկույթ

▲ **3.8 ԱՄԻՍ** 2025


2.2 ԱՄԻՍ 2024

Միջազգային պահուստների մակարդակ

▲ **5,088 ՄԼՆ $** 2025

3,685 ՄԼՆ $ 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ




Դիլիջանի ուսումնա-հետազոտական կենտրոն
Ռիսկերի կառավարման կենտրոն
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի գրասենյակ
Վճարային ծառայությունների և տվյալների կառավարման կենտրոն
Համապատաս-խանության ծառայություն
Անձնակազմի և կորպորատիվ մշակույթի տնօրինություն
ՏՏ և կիբեռանվտանգության տնօրինություն
Կորպորատիվ ծառայությունների տնօրինություն
Ֆինանսական տնօրինություն
Իրավաբանական վարչություն
Տաղանդների կառավարման և բիզնես գործընկերության բաժին
Անձնակազմի հաշվառման և սպասարկման բաժին
Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն
Տեղեկատվական և կիբեռանվտանգության վարչություն
Թվային լուծումների զարգացման վարչություն
Գույքի կառավարման վարչություն
Ֆիզիկական անվտանգության ծառայություն
Գործընթացների անընդհատության կառավարման խումբ
Որակի հավաստիացման խումբ
Ֆինանսական հաշվառման բաժին
Ֆինանսական հաշվետվությունների և վերլուծությունների բաժին
Բյուջետավորման բաժին
Իրավական խորհրդատվության և զարգացման բաժին
Ֆինանսական վերահսկողության իրավական սպասարկման բաժին
Իրավական սպասարկման բաժին
Իրավական բարեփոխումների բաժին

Սիրելի ընթերցող



Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Կենտրոնական բանկի 2025 թվականի գործունեության հաշվետվությունը: Հաշվետվությունն ամփոփում է Կենտրոնական բանկի առաջընթացը 2025-2027 թվականների ռազմավարության իրականացման շրջանակում, անդրադառնում է նաև Կենտրոնական բանկի գործունեության այլ ուղղություններին, ներառում է 2025 թվականի մեր գործունեության ֆինանսական արդյունքները: Հաշվետվության մեջ Դուք կգտնեք բացառապես այն աշխատանքները, որոնք ավարտին են հասել 2025 թվականի ընթացքում, սակայն մենք ունենք նաև շատ այլ նախաձեռնություններ, որոնք դեռ ապագայում են տալու իրենց պտուղները, և դրանց հաջողությունների մասին, հուսով եմ, առիթ կունենանք խոսելու ապագայում:

2025 թվականի ընթացքում Կենտրոնական բանկը վստահորեն իրականացրել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ իրեն վերապահված խնդիրները:

2025 թվականն առաջին տարին էր, երբ գնաճի թիրախը սահմանվեց 3 տոկոս: Այդ ընթացքում գնաճը պահպանվել է կայուն, ցածր մակարդակներում՝ տարեվերջին կազմելով 3.3 տոկոս: Միևնույն ժամանակ, տարվա ընթացքում տնտեսական աճն արագացել է՝ կազմելով 7.2%: Այս պայմաններում Կենտրոնական բանկը շարունակել է քաղաքականության տոկոսադրույքի նվազեցումը և վարել հետևողական դրամավարկային քաղաքականություն՝ նպատակաուղղված գների կայունության ապահովմանը:

Մեր ֆինանսական համակարգը շարունակել է զարգանալ առաջանցիկ տեմպերով՝ պահպանելով կայունության և ռիսկերի խելամիտ կառավարման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Բանկային համակարգը բնութագրվել է կապիտալի և իրացվելիության բարձր մակարդակներով, ինչպես նաև ռիսկերին դիմակայելու զգալի կարողությամբ՝ դրականորեն նպաստելով ընդհանուր մակրոտնտեսական միջավայրի ձևավորմանը: 2025 թվականին շարունակել ենք բանկերի կապիտալի հակացիկլիկ բուֆերի կուտակման գործընթացը՝ դրույքաչափը բարձրացնելով 0.25 տոկոսային կետով և սահմանելով 1.75% մակարդակում, ինչը ենթադրում է շուրջ 174 մլրդ դրամ լրացուցիչ կապիտալի կուտակում:

Կենտրոնական բանկը շարունակել է առաջնորդվել կարգավորման միջազգային լավագույն չափորոշիչներով և ռիսկերի վրա հիմնված վերահսկողության մոտեցումներով: Ընդ որում՝ ռիսկերի կարգավորման մեր նախաձեռնությունները մշակելիս Կենտրոնական բանկն առավել ուշադրություն է դարձնում, որ ընդունվող լուծումները չսահմանափակեն նորարարությունը և ֆինանսական համակարգի բնականոն զարգացումը: Ֆինանսական կազմակերպությունների վերահսկողության գործընթացում շարունակել ենք զարգացնել ռիսկերի վրա հիմնված վերահսկողական գործընթացը՝ առաջին անգամ հրապարակելով առևտրային բանկերի մասով վերահսկողական առաջնահերթությունները:


2025 թվականը նշանավորվեց նաև նրանով, որ Ազգային ժողովը Կենտրոնական բանկի խնդիրների շրջանակն ընդլայնեց՝ այն համալրելով նաև կրիպտոակտիվների շուկայի կարգավորման հանձնառությամբ: Վերջինս ներառում է տվյալ ոլորտում ներդրողների շահերի պաշտպանությունը, ինչպես նաև շուկայի բնականոն գործունեության և կայուն զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Ընդունված օրենսդրական փաթեթի ներքո Կենտրոնական բանկն արդեն ձեռնամուխ է եղել լայնածավալ կարգավորումների մշակման և ներդրման գործընթացին՝ ուղղված վերոնշյալ նպատակների իրագործմանը:

Նախորդ տարում ամփոփեցինք նաև վերջին երեք տարիների մեր ներքին վերափոխման ծրագիրը, որի արդյունքներով կարող ենք արձանագրել, որ էական առաջընթաց է գրանցվել Կենտրոնական բանկի կազմակերպական մշակույթի բոլոր ուղղություններով: Աշխատաշուկայի հարցումների համաձայն՝ Կենտրոնական բանկը Հայաստանի ամենացանկալի գործատուներից մեկն է, և աշխարհի լավագույն համալսարաններից հարյուրավոր ուսանողներ ցանկանում են իրենց ուսումնական պրակտիկան կազմակերպել Հայաստանի Կենտրոնական բանկում: Միևնույն ժամանակ, մենք չենք սահմանափակվելու ձեռք բերվածով և շարունակելու ենք կատարելագործել Կենտրոնական բանկի գործունեությունը՝ մեր հասարակությանը լավագույնս ծառայելու նպատակով:

Նշեմ նաև, որ վերջին տարիներին հետազոտական ոլորտում իրականացված մեր ներդրումներն արդեն սկսել են տալ տեսանելի և նշանակալի արդյունքներ: Կենտրոնական բանկի հետազոտություններն արդեն հրապարակվում են աշխարհի առաջատար տնտեսագիտական պարբերականներում, ինչպես նաև էապես ընդլայնվել է համագործակցությունն առաջադեմ ակադեմիական հաստատությունների հետ: Այս համագործակցության շրջանակում Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանի J-PAL կենտրոնի հետ կնքվել է համագործակցության հուշագիր, որի արդյունքում Կենտրոնական բանկը իր սոցիալական պատասխանատվության շրջանակում Հայաստանի պետական կառույցների մասնագետների համար կազմակերպել է քաղաքականության վերլուծության ոլորտի լավագույն դասընթացներից մեկը:

Ցանկանում եմ վստահեցնել, որ Կենտրոնական բանկը, հավատարիմ մնալով իր առաքելությանն ու տեսլականին, շարունակելու է մնալ առաջադեմ կառույց և ապահովել իր առջև դրված բոլոր նպատակների իրականացումը՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բարեկեցության:


ՀՀ ԿԲ նախագահ
Մարտին Գալստյան



ԳԼՈՒԽ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

– ՄԵՐ ՄԱՍԻՆ
– ՀՀ ԿԲ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
  – ՀՀ ԿԲ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
  – ՀՀ ԿԲ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ



ՄԵՐ ՄԱՍԻՆ

Մենք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն ենք և պատասխանատու ենք երկրում գների և ֆինանսական կայունության համար: Մեր սահմանած չափանիշներով է կարգավորվում և վերահսկվում ֆինանսական համակարգը: Մենք պաշտպանում ենք ֆինանսական ծառայությունների սպառողներին և պատասխանատու ենք Հայաստանի վճարահաշվարկային համակարգի, ֆինանսական և արտաքին հատվածի վիճակագրության և արժույթի թողարկման համար: Մեր առջև դրված հիմնական խնդիրների իրագործումն ուղղված է մեր քաղաքացիների բարեկեցության բարելավմանը:

Արագ փոփոխվող, մարտահրավերներով և անորոշություններով լի աշխարհում իրագործելու ենք մեր առաքելությունը: Մեր ամենօրյա գործունեության հիմքում բացառապես մեր քաղաքացիների բարեկեցության ապահովումն է: Մեր նախանշած գործողությունների հետևողական կատարմամբ, հետազոտական գերազանցության, նորարարական լուծումների միջոցով ձգտում ենք ապահովել հանրային բարիք և երկխոսության միջոցով բարձրացնել հաշվետվողականության ու մեր գործընկերների վստահության մակարդակը:

Միայն մեր անկյունաքարային արժեքների պահպանման և կիրառման շնորհիվ կարող ենք հասնել մեր տեսլականին և առաքելությանը:

Ձգտում ենք գերազանցության, գործում բարեվարքությամբ և ցուցաբերում հարգանք:

Ռազմավարություն:

Նոր՝ 2025-2027 թթ. ռազմավարությամբ սահմանվել են զարգացման նոր առաջնահերթություններ՝ նպատակաուղղված ֆինանսական համակարգի, մակրոտնտեսական քաղաքականության, ներքին կարողությունների զարգացման և արդյունավետ հաղորդակցման շարունակական բարելավմանը: Ընդ որում, յուրաքանչյուր ռազմավարական ուղղության ներքո գիտակցաբար սահմանափակվել ենք 3–5 առաջնահերթություններով՝ կենտրոնացնելով ջանքերն առավել ազդեցիկ նախաձեռնությունների վրա և ապահովելով ռեսուրսների նպատակային ու արդյունավետ բաշխումը:

Գործող ռազմավարության իրականացումը հիմնված է եռամյա պլանավորման և հստակ չափողականության սահմանման մոտեցման վրա, որը նախատեսում է

նպատակների փուլային իրականացում, գործողությունների համակարգված հաջորդականություն և արդյունքների պարբերական գնահատում:

Լինելով գլոբալ զարգացման մի մասնիկը՝ մենք ևս անմասն չենք մնացել բնակլիմայական, սոցիալական և կառավարչական չափորոշիչներին հետևելուց: Այս ռազմավարությամբ կարևորել ենք կենսակայունության չափորոշիչների ներդրումը և՛ որպես կարգավորող, և՛ որպես կառույց: Ներքին կարողություններում, որպես զարգացման նոր ուղղություն, նշել ենք Տվյալները, քանի որ, կարծում ենք, տվյալները թե՛ հանրային քաղաքականության որոշումների կայացման, թե՛ կազմակերպչական գործառույթների արդյունավետության բարձրացման հիմնարար երկարաժամկետ երաշխիքն են: Առանձնահատուկ կարևորում ենք նաև արդյունավետ հաղորդակցումը, որը համախմբում է ռազմավարության բոլոր ուղղությունները և առանցքային դեր ունի շահառուների կողմից ռազմավարության ճիշտ ընկալման, հետադարձ կապի և հանրային ռազմավարական մտածելակերպի ձևավորման գործում:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ, ՏԵՍԼԱԿԱՆ, ԱՐԺԵՔՆԵՐ



ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Արագ փոփոխվող աշխարհում լինել հուսալի գործընկեր, նպաստել համազգային բարեկեցությանը՝ գների և ֆինանսական կայունության ապահովման միջոցով: Մեր առաքելության իրագործման ճանապարհին պարզորոշ պատկերացնում ենք Հայաստանի մարտահրավերները: Բարեկեցության մեր ընկալումը ներառում է հարատև տնտեսական աճ, կայուն զարգացում, ֆինանսական անվտանգություն, մարդկանց կենսամակարդակի բարձրացում՝ անհատի մրցունակությունը խթանելու միջոցով, ով ունակ է հասնելու բազմակողմանի զարգացման և ավելի մեծ բարիքի ստեղծման նպատակներին:



ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել առաջատար կենտրոնական բանկ, որի գործունեությունը հիմնված է հետազոտական գերազանցության և նորարարական լուծումների վրա: Մեր տեսլականն իրագործելու ճանապարհին ուղղորդվում է բոլորի համար ընկալելի, գործընկերների հարգանքը վայելող և տաղանդների համար գրավիչ հաստատություն լինելու ձգտմամբ: Դրան հասնելու համար ապահովում ենք մեր գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, երկրի ներսում և երկրից դուրս գործընկերների հետ բազմակողմ համագործակցությունը, ինչպես նաև ստեղծում ենք հնարավորություններ ազատ մտածող, պրպտող ու թիմային աշխատանքին ապավինող անհատների մասնագիտական աճի և ներուժի լիարժեք իրացման համար:




ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Գերազանցություն. Մենք ձգտում ենք գերազանցության՝ առաջատար հետազոտության, վերլուծության, արտաքին ու ներքին համագործակցության և մեր գործունեության բոլոր ոլորտներում նորարարության միջոցով:

Բարեվարքություն. Մեր նպատակները ներկայացնում ենք բաց, արդյունավետ հաղորդակցման եղանակով, և հաշվետու ենք մեր գործողությունների համար:

Հարգանք. Մենք հարգում ենք միմյանց և հաջողության հասնում՝ գնահատելով մարդկանց և գաղափարների բազմազանության արժեքը:



Ռազմավարական առաջնահերթություններ

ՀՀ ԿԲ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԿԲ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

«ՀՀ Սահմանադրության» հոդված 201-ի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկում կառավարման գլխավոր մարմիններն են ՀՀ ԿԲ նախագահը և ՀՀ ԿԲ խորհուրդը:

ՀՀ ԿԲ ԽՈՐՀՈՒՐԴ: «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինը Կենտրոնական բանկի խորհուրդն է և կազմված է Կենտրոնական բանկի նախագահից, երկու տեղակալներից, հինգ անդամներից:

ԿԲ խորհրդի անդամները, ներառյալ՝ նախագահին ու տեղակալները, ընտրվում են ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: ՀՀ ԿԲ խորհրդի անդամների փոփոխությունը տեղի է ունենում փոխակերպման (ռոտացիոն) սկզբունքով: Խորհրդի յուրաքանչյուր անդամի պաշտոնավարման վերջնաժամկետին հաջորդում է նոր անդամի ընտրությունը, որն էլ, իր հերթին, ապահովում է ՀՀ ԿԲ անկախությունը:

Օրենքով նախատեսված չափանիշների համաձայն՝ ՀՀ ԿԲ խորհուրդը ձևավորվում է այնպես, որ Խորհրդի անդամներն ունենան բանկային, աուդիտի, SS, ֆինանսական հաշվետվությունների և այլ ոլորտների վերաբերյալ գիտելիքներ, իսկ Խորհրդի անդամների առնվազն կեսն ունենա մակրոտնտեսագիտության բնագավառում մասնագիտական աշխատանքային փորձ:

ԿԲ խորհրդի անդամները ներկայացնում են բանկի շահերն ու տեսակետները Կառավարության կողմից ստեղծված և գործող նախարարական կոմիտեներում, ինչպես նաև այլ միջգերատեսչական հանձնաժողովներում: Նրանք ԿԲ ռազմավարության, Խորհրդի կողմից կայացված որոշումների, վարվող քաղաքականության հաղորդակցման առաջնային օղակն են: Նաև ապահովում են ակտիվ ներգրավվածություն պետական մարմինների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև տարածաշրջանային այլ կազմավորումների հետ համագործակցություններում:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդն իր որոշումները կայացնում է հետևյալ ուղղություններով՝

- ԿԲ-ի կողմից վարվող քաղաքականություններ (դրամավարկային, մակրոպրուդենցիալ):
- Ֆինանսական համակարգի կարգավորմանն ուղղված որոշումներ (պարտադիր պահուստավորման և կարգավորող նորմատիվների սահմանում, բանկային գործունեության և այլ լիցենզիաների տրամադրում, նորմատիվ իրավական ակտերի, անհրաժեշտության դեպքում՝ պատժամիջոցների կիրառում):
- Հսկողությանն ուղղված որոշումներ (ռիսկերի կառավարում, բյուջեի, ֆինանսական հաշվետվությունների հաստատում, ներքին աուդիտ, ներքին հսկողություն):
- Իր իրավասությունների շրջանակում այլ որոշումներ:

ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀ: «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Կենտրոնական բանկի նախագահը Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձն է: ՀՀ ԿԲ նախագահը և նրա երկու տեղակալները իրականացնում են գործադիր գործառույթներ և համակարգում են բանկի բնականոն աշխատանքը: Նախագահը չի կարող պաշտոնավարել երկու ժամկետից ավելի:

ԿԲ նախագահը պատասխանատու է Կենտրոնական բանկի նպատակների իրագործման համար: Կենտրոնական բանկի նախագահը՝

- համակարգում և ապահովում է Կենտրոնական բանկի, նրա Խորհրդի և Խորհրդի անդամների բնականոն աշխատանքը.
- նախագահում է Կենտրոնական բանկի խորհրդի նիստերը, ստորագրում է Կենտրոնական բանկի խորհրդի ակտերը և խորհրդի նիստերի արձանագրությունները.
- կազմակերպում է Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ ակտերի կատարումը.
- ներկայացնում է Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում.
- տալիս է լիազորագրեր.
- հաստատում է Կենտրոնական բանկի կառուցվածքը, աշխատակիցների հաստիքացուցակը.
- նշանակում և ազատում է աշխատանքից Կենտրոնական բանկի ստորաբաժանումների ղեկավարներին և մյուս աշխատակիցներին.
- ընդունում է անհատական և ներքին որոշումներ ու կարգադրություններ, այդ թվում՝ վերստուգվող անձանց ստուգումներ նշանակելու մասին որոշումներ.
- իրականացնում է օրենքով Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ:

Մարտին Գալստյան

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ





Հովհաննես Խաչատրյան

Նախագահի տեղակալ

Արմեն Նուրբեկյան

Նախագահի տեղակալ





Արմեն Քթոյան

Խորհրդի անդամ

Դավիթ Նահապետյան

Խորհրդի անդամ





Արտակ Մանուկյան

Խորհրդի անդամ

Լևոն Սահակյան

Խորհրդի անդամ





Նարեկ Ղազարյան

Խորհրդի անդամ

ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

53

որոնցից՝ հսկողության վերաբերյալ

4

ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նորմատիվ որոշումներ

51

Անհատական որոշումներ

203

Լոկալ որոշում

18

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ


Հաշվետու տարվա ընթացքում Կենտրոնական բանկի (Բանկի) ներքին աուդիտը շարունակել է իր առաքելությունը՝ աջակցելով Բանկին՝ իրագործելու իր նպատակները:

Տարվա ընթացքում կատարված աշխատանքները ներառել են Խորհրդի կողմից հաստատված տարեկան ծրագրով նախատեսված աուդիտ հանձնառություններ և նախաձեռնություններ՝ նպատակ ունենալով ապահովելու միջազգային լավագույն փորձի կիրառումը և գործունեության համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին: Կենտրոնական բանկի ներքին աուդիտը յուրաքանչյուր տարի մշակում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում ռիսկերի վրա հիմնված աուդիտի տարեկան ծրագիրը: Հաշվի առնելով ռիսկերի տարեկան գնահատումը, ինչպես նաև Կենտրոնական բանկի ռազմավարական նպատակների իրագործումը՝ 2025 թվականի ընթացքում դիտարկվել են Բանկի գործունեության այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝ ֆինանսական համակարգի վերահսկողություն, SS պլանավորում և կառավարում, վիրտուալացում, համապատասխանություն, ֆինանսական համակարգի կարգավորում և այլն:


Ներքին աուդիտի գործառույթի փոխակերպման շրջանակում, որպես Կենտրոնական բանկի ռազմավարական գործընկեր, Ներքին աուդիտի գլոբալ նոր ստանդարտներին համահունչ՝ (Global Internal Audit Standards), հատուկ ուշադրություն ենք դարձրել ռազմավարական պլանավորման և գործառույթի դիրքավորման ամրապնդմանը: Փոխակերպումը նպատակ ունի ապահովելու գործառույթի լիարժեք համապատասխանությունը միջազգային լավագույն փորձին և մեծացնելու դրա ազդեցությունը կառավարման որակի վրա:

2025 - 2027 թթ. Ներքին աուդիտի ռազմավարությունը հաստատվել է Խորհրդի կողմից՝ ապահովելով դրա համահունչությունը Կենտրոնական բանկի ընդհանուր ռազմավարությանը և շահառուների ակնկալիքներին: Դա խորացրել է Ներքին աուդիտի գործունեության ինտեգրումը Կենտրոնական բանկի 2025 - 2027թթ. ռազմավարությանը՝ ապահովելով աուդիտի պլանավորման և իրականացման համադրումը Բանկի ռազմավարական նպատակների հետ, դրանով իսկ նպաստելով ռազմավարական նպատակների իրագործմանը՝ հետևողական մոտեցմամբ գնահատելով և բարելավելով ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման գործընթացների արդյունավետությունը:

2025 թվականի ընթացքում հրապարակվել են երկու թեմատիկ հոդվածներ և փորձագիտական նյութեր՝



“Governance audits in central banks: the CBA experience”[1] քննարկման հոդվածի վերաբերյալ ստացվել են 16 երկրների կենտրոնական և ազգային բանկերի գլխավոր աուդիտորների մասնագիտական կարծիքներ, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամից, ԱՄՆ Նյու Յորքի դաշնային պահուստային բանկից, Գերմանիայի Բունդեսբանկից, Իտալիայի, Մոնտենեգրոյի, Նիդեռլանդների, Էկվադորի, Մակեդոնիայի, Ծրի Լանկայի և այլ բանկերից: Հոդվածը կարծիքի է ներկայացվել նաև Ներքին աուդիտորների ինստիտուտ (IIA global): Գործընկեր կառույցների ներկայացուցիչները բարձր են գնահատել հոդվածում ներկայացված փորձն ու մոտեցումները: Հոդվածը մասնագիտական հետաքրքրություն է առաջացրել տարբեր երկրների կենտրոնական բանկերի և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում, դրա վերաբերյալ տրվել են բազմաթիվ դրական մեկնաբանություններ:



“Designing an Effective Onboarding Program for Audit Committees: The Central Bank of Armenia’s Experience”[2] քննարկման հոդվածի վերաբերյալ, որի համահեղինակը ԿԲ խորհրդի անդամ Արտակ Մանուկյանն է, մասնագիտական կարծիք են հայտնել Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչները: Հոդվածը կարծիքի է ներկայացվել նաև Ներքին աուդիտորների ինստիտուտ (IIA global):

1 https://www.cba.am/en/Publication/9251/
2 https://www.cba.am/en/analytical-materials/9081/

Կենտրոնական բանկերի ներքին աուդիտորների տարեկան կոնֆերանսին ներկայացվել է Ներքին աուդիտի ռազմավարության մշակման ԿԲ փորձը: Այս բնագավառում ԿԲ փորձը գործընկեր կառույցները գնահատել են առաջավոր, ինչը նպաստել է գործառույթի ճանաչելիության և հեղինակության բարձրացմանը:

Միաժամանակ, շարունակվել է Ներքին աուդիտի գործառույթի զարգացումը՝ ուղղված Կենտրոնական բանկի արժեքի ստեղծման, պաշտպանության և պահպանման կարողության ամրապնդմանը՝ ապահովելով անկախ, ռիսկերի վրա հիմնված և անաչառ հավաստիացում, խորհրդատվություն, ներըմբռնում և կանխատեսում:

Որակի ապահովման և բարելավման ծրագիրը (QAIP) գնահատում է ներքին աուդիտի համապատասխանությունը Ներքին աուդիտի միջազգային ստանդարտներին՝ բացահայտելով բարելավման հնարավորությունները: Կենտրոնական բանկի ներքին աուդիտը որակի ապահովման և բարելավման իր ծրագրի շրջանակում 5 տարին մեկ անցնում է որակի արտաքին գնահատում, իսկ յուրաքանչյուր տարի՝ որակի ներքին գնահատում: Հաշվետու տարվա ընթացքում Կենտրոնական բանկի ներքին աուդիտի թիմը որակի ներքին գնահատում է իրականացրել ներքին աուդիտորների ինստիտուտի միջազգային նոր ստանդարտներով, որի արդյունքում ներքին աուդիտի գործառույթը ԿԲ-ում «հիմնականում համապատասխանում է» (General conformance) Ներքին աուդիտի միջազգային ստանդարտներին:

ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱ ԹԻՄՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐՆ ՈՒՆԵՆ ՏԱՐԲԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Certified Internal Auditor

CISA

Information Security Management System ISO 27001 Certified

ACCA

PMI

CISM

CRMA

COBIT

AI QUALITY ASSESSOR

PUBLIC SECTOR INTERNAL AUDIT

ՆԻՍՏԵՐԻ ԵՎ ՎԵՐՀԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Աուդիտի կոմիտեի անցկացրած նիստերի քանակ

26

Աուդիտի հաշվետվություններով վերհանված խնդիրներ

53

Բարելավման առաջարկ

51

ՀՀ ԿԲ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դրամավարկային քաղաքականության զեկույց (Դրամավարկային քաղաքականության ծրագիր)

Եռամսյակային, տարեկան 4 անգամ – մարտի 18, հունիսի 17, սեպտեմբերի 16, դեկտեմբերի 16

Դրամավարկային քաղաքականության զեկույցը սկսվում է Գլխավոր ամփոփագրով (դրամավարկային քաղաքականության հաղորդագրություն): Ներառում է Դրամավարկային քաղաքականության որոշման վերաբերյալ Խորհրդի հաղորդագրությունը, ինչպես նաև տնտեսական իրավիճակի և հիմնարար պայմանների ամփոփագիրը:

Գլուխ 2-ում ներկայացվում են դրամավարկային քաղաքականության երկարաժամկետ նպատակների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի հաղորդագրությունն ու դրամավարկային քաղաքականության մշակման գործող համակարգի ամփոփ նկարագիրը:

Գլուխ 3-ը ներառում է տնտեսական ընթացիկ իրավիճակի և հիմնարար պայմանների վերլուծությունը, ինչպես նաև ԿԲ-ի կողմից «նվազագույն ափսոսանքի քաղաքականության» հայեցակարգի և համակարգի ներքո ռիսկերի կառավարման մոտեցման արդյունքները: Վերջինս կազմված է դրամավարկային քաղաքականության ընթացիկ փուլի համար առավել իրատեսական և կարևոր սցենարների բազմությունը ամփոփող



աղյուսակից, որը կառուցվել է ԿԲ խորհրդի հիմնական ռիսկերի, անորոշությունների և մտավախությունների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա: Այս համատեքստում դրամավարկային քաղաքականության զեկույցը ներկայացնում է նաև երկու (կամ ավելի) տիպային սցենարներ, որոնք ներառում են սցենարներում դիտարկված գործոնների պայմաններում գների կայունության ապահովման նպատակով դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի համապատասխան արձագանքը:



Ֆինանսական կայունության հաշվետվություն

Տարեկան 1 անգամ – Մայիսի 5

Ներկայացնում է ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող հնարավոր ռիսկերի, ինչպես նաև այդ ռիսկերին դիմակայելու ունակության ընդհանուր գնահատականը:



«Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» Տարեկան հանդես

Տարեկան 1 անգամ – Հունիսին

Ներկայացնում է թողարկված ՀՀ հուշադրամների մասին տեղեկատվություն, տվյալ տարում թողարկված ՀՀ հուշադրամների մասնակցությամբ անցկացված մրցույթների արդյունքներ, ՀՀ հուշադրամներին առնչվող այլ նյութեր:

ՀՀ ԿԲ տեղեկագիր

Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երկրորդ ամսվա 15-րդ օրը

Ներկայացնում է Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ և անհատական որոշումները, Կենտրոնական բանկի նախագահի որոշումները, այլ իրավական ակտեր, ինչպես նաև վիճակագրական ամփոփագիրը:




Ֆինանսական դիտարկումների կենտրոնի տարեկան հաշվետվություն

Տարեկան 1 անգամ – Ապրիլի 15-ից հետո

Ներկայացնում է հաշվետու տարվա ընթացքում ՖԴԿ-ի կողմից ՓԼ/ԱՖ/ՋՈՋ ՏՖ դեմ պայքարի ոլորտում իրականացված աշխատանքների ընդհանուր նկարագիրը:






ԳԼՈՒԽ 2

ՉՀ ԿԲ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

– ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ/ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
– ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ/ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ/ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին ՀՀ կենտրոնական բանկի իրականացրած դրամավարկային քաղաքականությունն ուղղված է եղել 3 տարվա հորիզոնում 12-ամսյա գնաճի 3% թիրախային մակարդակի ապահովմանը:

Ելնելով տարվա ընթացքում ստեղծված մակրոտնտեսական իրավիճակից, ինչպես նաև առաջնորդվելով գների կայունության նպատակին հասնելու իր հանձնառությամբ և առկա անորոշություններից բխող հնարավոր ռիսկերը խելամիտ կառավարելու անհրաժեշտությամբ՝ 2025 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է աստիճանաբար նվազեցնել քաղաքականության տոկոսադրույքը, ընդհանուր առմամբ, 0.5 տոկոսային կետով: Արդյունքում՝ 12-ամսյա գնաճը տարվա ընթացքում ավելացել է 1.8 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 3.3%, իսկ 12-ամսյա բնականոն գնաճն ավելացել է 3.4 տոկոսային կետով՝ տարին ամփոփելով 4.3% մակարդակով:

Գծապատկեր 1

2025 թ. 12-ամսյա գնաճն աստիճանաբար ավելացել է՝ տարեվերջին ձևավորվելով նպատակային մակարդակի շուրջ



Դրամավարկային քաղաքականության մշակման գործընթացի և արտաքին հաղորդակցության բարելավում և կատարելագործում

ՀՀ ԿԲ ռազմավարությամբ ամրագրված հիմնական ուղենիշերի շրջանակում, մի շարք ներքին ու արտաքին շահագրգիռ կառույցների, ինչպես նաև տարբեր փորձագետների ու տնտեսագետների հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքում, 2025 թվականին ԿԲ-ն վերանայել է գնաճի նպատակային ցուցանիշը: Դա ամրագրվել է «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում, որի համաձայն՝ 2025 թվականի ընթացքում Կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումները պետք է ընդուներ՝ առաջնորդվելով 12-ամսյա գնաճի 3% նպատակային ցուցանիշով՝ ±1.0 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում: Գնաճի նպատակային ցուցանիշի նվազեցումը և 3% մակարդակում սահմանումը ՀՀ տնտեսության երկարաժամկետ կայուն զարգացման և տնտեսությունում գների կայունության ապահովման ճանապարհով հասարակության բարեկեցության բարելավման կարևոր նախապայման է: Հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում ԿԲ-ի կողմից հասարակության և ֆինանսական շուկայի մասնակիցների շրջանում անցկացված հարցումները, ինչպես նաև եկամտաբերության կորի, հատկապես երկարաժամկետ հատվածի, զգալի նվազումը վկայում են գնաճային սպասումների աստիճանական նվազման մասին:

Նոր ռազմավարությամբ ամրագրել ենք, որ մենք պետք է լինենք լավագույն դրամավարկային քաղաքականության ռազմավարություն ունեցող երկրների շարքում: Այս ուղղությամբ նախատեսում ենք ունենալ:

- *Դրամավարկային քաղաքականության կանխատեսումների և վերլուծությունների (FPAS) որակյալ ու դինամիկ փոփոխվող համակարգ:*
- *Դրամավարկային քաղաքականության համակարգի կամ դրա առանձին տարրերի մասով նորարարական մոտեցումներ:*
- *Դրամավարկային քաղաքականության ռազմավարության հիմնարար տարրերի ու սկզբունքների վերաբերյալ հստակ և աջակցող հանրային ընկալման ձևավորում, այդ թվում՝ ֆինանսական շուկաների մասնակիցների կողմից:*
- *ԿԲ գործիքակազմի իրացվելիության կառավարման և դրամավարկային քաղաքականության գործառնությունների թափանցիկ ու ֆինանսական շուկայի մասնակիցների համար ընկալելի մոտեցումներ:*

Դրամավարկային քաղաքականության կանխատեսումների և վերլուծության (FPAS)՝ 2024 թ-ից ներդրված նոր համակարգի և դրամավարկային քաղաքականության արտաքին հաղորդակցման ռազմավարության շրջանակներում 2025 թ. կատարվել են դրամավարկային քաղաքականության հաշվետվողականության նոր ձևաչափի մշակման և ներդրման աշխատանքներ: Հաշվետվողականության համակարգի նպատակը գների կայունության ապահովման համար Կենտրոնական բանկի իրականացրած դրամավարկային քաղաքականության արդյունքների համակարգված և ամփոփ ներկայացումն է: Սա դրամավարկային քաղաքականությունն առավել ընկալելի դարձնելու և հասարակության տարբեր շրջանակների հետ բաց ու թափանցիկ երկխոսությունն ամրապնդելու ևս մեկ կարևոր քայլ է: Նշենք, որ 2025 թվականին պատրաստվել են հաշվետվողականության զեկույցի տիպային օրինակ և ուղեցույց (handbook):

ՀՀ ԿԲ խորհրդի նոր անդամների՝ ԴՎՔ քննարկումներում և որոշումների կայացման գործընթացներում հնարավորինս արագ և արդյունավետ ինտեգրումն ապահովելու նպատակով 2025 թվականի ընթացքում իրականացվել են դրամավարկային քաղաքականության և դրամավարկային տնտեսագիտության զարգացման, ինչպես նաև ԴՎՔ նոր ռազմավարության մոտեցումների և առանձնահատկությունների վերաբերյալ «On-boarding» փաթեթի պատրաստմանն ուղղված աշխատանքներ: Այս փաթեթը ներառում է ինչպես վերոնշյալ ուղղություններով առանձին, հակիրճ թեմատիկ նյութեր՝ նոթերի և տեսաձայնագրությունների ձևաչափով, այնպես էլ առանձին թեմաներին առնչվող հարց ու պատասխան՝ հատկապես նոր ռազմավարության առանձնահատկություններն ու նրբությունները խոր ըմբռնելու համար: “On-boarding” փաթեթը ներկայումս վերջնականացման և ԿԲ ներքին համակարգում տեղադրման փուլում է:

Կարևորելով ռիսկերի խելամիտ կառավարման մոտեցման ներքո գների կայունության ապահովման տրամաբանության և սկզբունքների համակարգված, ամբողջական և մատչելի ներկայացման անհրաժեշտությունը՝ 2025 թվականին շարունակվել և ավարտին են հասցվել ԴՎՔ նոր համակարգը նկարագրող փաստաթուղթ-գրքի («Prudent Risk Management Approach to Monetary Policy”) հետ կապված աշխատանքները:

2025 թվականի ընթացքում ակտիվորեն շարունակվել է ռիսկերի խելամիտ կառավարման մոտեցման ներքո գների կայունության ապահովման ռազմավարության ներկայացումը միջազգային և ներքին տարբեր հարթակներում: Մասնավորապես՝ հունիսին, Անգլիայի բանկի կողմից անցկացված բարձր մակարդակի կոնֆերանսի շրջանակում, մի շարք առաջատար կենտրոնական բանկերի գլխավոր տնտեսագետների և որոշում կայացնող անձանց ներկայացվել է ԴՎՔ նոր համակարգը, որի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերել հատկապես Անգլիայի բանկի ներկայացուցիչները: Համակարգի մոտեցումներն ու փիլիսոփայությունը հետաքրքրել են նաև Ուզբեկստանի կենտրոնական բանկին, որի հրավերով 2025 թ. հոկտեմբերին կազմակերպվել է ԴՎՔ նոր համակարգի ներկայացումը Ուզբեկստանի ԿԲ ներկայացուցիչներին:

2025 թ. տարածաշրջանի ԿԲ ներկայացուցիչների և ՀՀ ֆինանսական շուկայի մասնակիցների համար անցկացվել

են ռիսկերի խելամիտ կառավարման մոտեցման կիրառումը ԴՎՔ մշակման գործընթացում, ԴՎՔ հաղորդակցումը, սցենարային վերլուծությունը թեմաներով սեմինարներ և աշխատարաններ: Մասնավորապես՝ տարածաշրջանային ԿԲ ներկայացուցիչների համար կազմակերպվել են ԴՎՔ նոր շրջանակի ներքո դրամավարկային քաղաքականության հաղորդակցում և սցենարային վերլուծություն թեմաներով սեմինար/աշխատարաններ, որտեղ անդրադարձ է կատարվել ինչպես նոր շրջանակի տեսական հիմքերին և փիլիսոփայությանը, այնպես էլ աշխատարանների միջոցով ամրապնդվել է ձեռք բերված գիտելիքը՝ հնարավորություն տալով մասնակիցներին կիրառելու ԴՎՔ նոր համակարգի մոտեցումները տարբեր երկրների օրինակով: ՀՀ ֆինանսական շուկայի մասնակիցների համար կազմակերպված աշխատարանների հիմնական շեշտադրումը եղել է ԴՎՔ նոր համակարգի առանձնահատկությունների և այդ շրջանակում ֆինանսական շուկայի մասնակիցների սպասումների ճիշտ գնահատման/վերհանման կարևորության հաղորդակցումը, ինչպես նաև սցենարային մտածողության և վերլուծությունների կատարման կարողությունների ընդլայնումը: Սեմինար-աշխատարանների արդյունքներից մասնակիցների գոհունակությունը եղել է բավականին բարձր:

2025 թվականին, առաջնորդվելով միջազգային մակարդակում դրամավարկային քաղաքականության մրցունակ թիմի ձևավորման տեսլականով, ԿԲ-ում քաղաքականության վերլուծությունները շարունակվել են նոր չափորոշիչների և հետազոտական գերազանցության սկզբունքի հիման վրա: Այս շրջանակում կարևորվել են մարդկային կապիտալի, գիտելիքի ու հետազոտական-վերլուծական գործիքների շարունակական ընդլայնումն ու կատարելագործումը՝ նորարարական մոտեցումների կիրառմամբ: Մարդկային կապիտալի զարգացման և նոր ռազմավարության տարածման խնդրի ներքո 2025 թվականին ՀՀ ԿԲ-ն պարբերաբար կազմակերպել է դրամավարկային քաղաքականության տեսանկյունից կարևոր հարցերի վերաբերյալ քննարկումներ, որոնց մասնակցել են ինչպես ՀՀ ու այլ երկրների ԿԲ-ների աշխատակիցներ ու ղեկավար անդամներ, այնպես էլ առաջատար փորձագետներ ու տնտեսագետներ աշխարհի տարբեր անկյուններից: 2025 թ. հունվարին ԿԲ-ում կազմակերպվել է «Դրամավարկային քաղաքականություն՝ հիմնված ռիսկերի խելամիտ կառավարման մոտեցման վրա» խորագրով սիմպոզիում, որտեղ քննարկվել են ԴՎՔ նոր համակարգի մարտահրավերներին առնչվող հարցեր և մատնանշվել դրա աստիճանական կատարելագործման, առանձին տարրերի զարգացման հնարավոր ուղիները:

Ուշադրության կենտրոնում

Դրամավարկային քաղաքականության արտաքին հաղորդակցման ռազմավարության շրջանակում 2025 թ. կատարվել են քաղաքականության թափանցիկության և հաշվետվողականության բարելավման ակտիվ աշխատանքներ: Դրամավարկային քաղաքականության երկարաժամկետ նպատակների վերաբերյալ հայտարարության մեջ ՀՀ կենտրոնական բանկն ամրագրել է իր՝ որպես հանրային հատվածում գործող անկախ կառույցի քաղաքականության հստակ և արդյունավետ հաղորդակցության, թափանցիկության և հաշվետվողականության կարևորությունը: ԿԲ այս հանձնառության հիմնական բաղադրիչներից մեկը ԴՎՔ հաշվետվողականության շրջանակն է, որը նպատակաուղղված է լայն հասարակությանը քաղաքականության որոշումներն առավել ընկալելի և թափանցիկ ներկայացնելուն:

ԴՎՔ հաշվետվողականության զեկույցը[3] ներկայացնում է գների կայունության նպատակի ապահովման համար նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում Կենտրոնական բանկի իրականացրած դրամավարկային քաղաքականության արդյունքները, ԿԲ խորհրդի կողմից քաղաքականության տոկոսադրույքի վերաբերյալ որոշումների կայացման և հաղորդակցման գործընթացը և հաշվետու տարվա ընթացքում հիմնական ռիսկերի ու անորոշությունների վերաբերյալ Խորհրդի անդամների անհատական կարծիքների և մտահոգությունների փոփոխությունը: Այն նաև ներկայացնում է քաղաքականության տոկոսադրույքի որոշումների և հաղորդակցման վերաբերյալ ֆինանսական շուկայի արձագանքի վերլուծությունը: Զեկույցում անդրադարձ է կատարվում հաշվետու ժամանակահատվածում դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ առավել հաճախ տրվող հարցերին՝ հիմնվելով լրատվամիջոցների, ակադեմիական շրջանակի, ֆինանսական շուկայի և լայն հանրության կողմից բարձրաձայնված հարցերի և/կամ մեկնաբանությունների վրա:


3 https://www.cba.am/file_manager/Monetary%20policy/Reports/Accountability_Report_Arm.pdf

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ/ ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին ՀՀ ֆինանսական համակարգն աճել է բնականոն տեմպերով՝ ապահովելով ֆինանսական միջնորդության գործառույթի անխափան իրականացումը ՀՀ տնտեսությունում: Տարվա ընթացքում ապահովվել է նաև ֆինանսական համակարգի կայունությունը, ինչը դրական ազդեցություն է ունեցել մակրոտնտեսական զարգացումների վրա:

Գծապատկեր 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ ԸՍՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



Բանկեր
79.1%
Կենսաթոշակային ֆոնդեր
8.9%
Վարկային կազմակերպություններ
5.4%
Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդ
3.4%
Ներդրումային ընկերություններ
1.7%
Այլ ֆինանսական կազմակերպություններ
0,8%
Ապահովագրական ընկերություններ
0.7%

2025 թվականի ընթացքում բանկերը շարունակել են մնալ բարձր կապիտալացված և իրացվելի՝ պահպանելով դիմակայունությունը հնարավոր շոկերի նկատմամբ: Բանկային համակարգում արձանագրվել է նաև բավարար շահութաբերություն, որը նպաստել է կապիտալի բնականոն կուտակման գործընթացին՝ կարևոր դեր ունենալով համակարգի կորուստների կլանման կարողությունների ընդլայնման տեսանկյունից:

2025 թվականին բանկային համակարգը շարունակել է աճել կայուն տեմպերով՝ ինչպես ավանդների, այնպես էլ վարկային պորտֆելի մասով: Ընդ որում, տնային տնտեսությունների և բիզնես վարկերը ունեցել են համադրելի նպաստումներ այս աճի կառուցվածքում: Ամբողջ տարվա ընթացքում գրանցվել է նաև ավանդների կայուն աճ, որի էական մասը պայմանավորված է եղել ռեզիդենտներից ներգրավված միջոցներով:

Հիպոտեկային վարկերի աճի որոշակի դանդաղումը 2025 թվականին պայմանավորված է մի կողմից՝ եկամտային հարկի վերադարձի ծրագրի դադարեցման և անշարժ գույքի պահանջարկի աստիճանական հագեցման գործոններով, մյուս կողմից՝ բազայի էֆեկտով՝ կապված նախորդ տարիներին (հատկապես 2024 թ. չորրորդ եռամսյակում) հիպոտեկային պորտֆելի մեծածավալ աճի հետ: Այդուհանդերձ, հոսքերի տեսանկյունից 2025 թվականի հիպոտեկային տրամադրումները փոքր չափով են զիջում 2024 թ. տրամադրումներին:

Տարվա կտրվածքով մեծ աճ է գրանցվել նաև կապիտալի շուկայում, մասնավորապես՝ շրջանառվող կորպորատիվ արժեթղթերի ծավալներում: Աճի կառուցվածքում շարունակել են գերակայել ֆինանսական համակարգի կողմից թողարկված արժեթղթերը:

2025 թ. մայիսի 1-ից ուժի մեջ է մտել կապիտալի հակացիկլիկ բուֆերի խստացված դրույքաչափը՝ ռիսկով կշռված ակտիվների 1.75%-ի չափով: Վերջինս միտված է բարելավելու բանկային համակարգի դիմակայունությունը հնարավոր շոկերի նկատմամբ, ինչպես նաև ապահովելու տնտեսության վարկավորման անընդհատությունը:

Նոր ռազմավարությամբ ամրագրել ենք, որ մենք պետք է ունենանք ֆինանսական համակարգում ձևավորվող և կուտակվող համակարգային ռիսկերի գնահատման ու արագ արձագանքման լավագույն համակարգերից մեկը:


- ***Մակրոպրուդենցիալ գործիքների կիրառության վերլուծական հենք:***
- ***Մակրոպրուդենցիալ քաղաքականության իրականացման կառուցակարգ:***
- ***Համակարգային ռիսկի գնահատման արդի գործիքակազմ, այդ թվում՝ նոր գործիքների մշակում և ներդրում:***


2025 թվականի ընթացքում Կենտրոնական բանկում կատարվել են իրացվելիության ծածկույթի (LCR) և զուտ կայուն ֆինանսավորման (NSFR) նորմատիվների բարելավման աշխատանքներ, այն է՝ արտարժույթի մասով արտահոսքի կշիռների վերանայման ուղղությամբ: Իրացվելիության կարգավորումների փոփոխությունը, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի մայիսի 1-ից, միտված է արտարժութային ավանդների կենտրոնացմանը, ինչպես նաև ոչ ռեզիդենտների խոշոր ավանդների հնարավոր ոչ կայունության ռիսկերի հասցեագրմանը:

ԳԼՈՒԽ 3

ՆՀ ԿԲ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

– ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ
– ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ
– ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
– ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՆՍԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ
– ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՋՈՐԱԿՑՈՒՄ





ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Նոր ռազմավարությամբ մեր նպատակն է զարգացնել ու ներդնել զարգացող շուկաներին, բիզնես մոդելներին և տեխնոլոգիաներին համահունչ, կարգավորման մրցունակ, հավասարակշռված և սթրեսակայուն կառուցակարգեր:

- ***Միջազգային ստանդարտներ սահմանող կառույցների (FSB, BIS, IOSCO, IOPS, IAIS և այլն) առաջարկներին և միջազգային լավագույն փորձին համահունչ, ապագային միտված կարգավորման դաշտ, որը հիմնված է «նույն գործունեություն, նույն ռիսկ, նույն կարգավորում» սկզբունքի վրա:***
- ***Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց համար միջազգային չափորոշիչներին համապատասխան և կանխատեսելի կարգավորման ու վերահսկողության դաշտ:***
- ***Ֆինանսական կայունության ապահովման նպատակով բանկերի ձախողումների կառավարման, արդյունավետ կարգավորման կառուցակարգեր:***
- ***ԿԲ ներկայացվող տեղեկատվության վերափոխում՝ հիմնված մանրամասն տվյալների վրա:***

2025 թվականին Կենտրոնական բանկը, բոլոր ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների և նշանակալից մասնակիցների նկատմամբ պահանջները Ֆինանսական գործողությունների աշխատանքային խմբի (FATF) ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով, մի շարք նորմատիվ իրավական ակտերում կատարել է փոփոխություններ: Փոփոխությունների արդյունքում հստակեցվել է, որ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում ներառված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված հանցագործության համար չմարված կամ չվերացված կամ չհանված դատվածություն ունեցող անձինք չեն կարող լինել ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ և նշանակալից մասնակիցներ:

Բանկային համակարգ: Բանկերի՝ հնարավոր կորուստների կլանման կարողությունները ընդլայնելու և ընդհանուր կապիտալի կազմում ընդգրկվող տարրերը Բազելյան ստանդարտներին համապատասխանեցնելու համար հնարավորություն է տրվել կարգավորմամբ սահմանված պահանջները բավարարող անժամկետ գործիքներով ներգրավված միջոցները ևս ներառել առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի հաշվարկում:

Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկում բանկային համակարգի

համար անհրաժեշտ արտարժութային բուֆերներ ստեղծելու և իրացվելիության կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով, 2019 թվականից սկսած, Կենտրոնական բանկն իրականացնում է արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց ամբողջությամբ արտարժույթով պահուստավորման աստիճանական ներդրման քաղաքականություն: 2025 թվականին նշված գործընթացն ավարտվել է, և 2025 թվականի հոկտեմբերի 15-ից սկսած՝ արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նորմատիվը սահմանվել է 15%, որն ամբողջությամբ պետք է ապահովվի եվրոյով՝ եվրոյով ներգրավված միջոցների համար և ԱՄՆ դոլարով՝ այլ արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց: Միևնույն ժամանակ, վերանայվել է իրացվելիության ծածկույթի նորմատիվի և զուտ կայուն ֆինանսավորման նորմատիվի հաշվարկման կարգը:[4]

Ապահովագրական համակարգ: Ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստների ձևավորման կարգն ապահովագրության վերահսկողության միջազգային ստանդարտներ սահմանող կառույցների (EIOPA, IAIS և այլն) առաջարկներին և միջազգային լավագույն փորձին համահունչ դարձնելու ռազմավարական նպատակով մշակվել են Solvency II ստանդարտներին համապատասխան կանոնակարգերի նախագծեր, որոնք նպատակաուղղված են ապահովագրական ընկերությունների կողմից ձևավորվող տեխնիկական պահուստների ճշգրտության մակարդակի բարձրացմանը: Նախագծերը ընկերությունների հետ անցկացվող թեստավորման փուլում են:

2025 թվականի ընթացքում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի բարեփոխման շրջանակներում Կենտրոնական բանկը համագործակցել է Համաշխարհային բանկի հետ՝ գործող համակարգի խնդիրների վերլուծության և նոր, կենսունակ համակարգի ներդրման ուղղությամբ: Գործող համակարգի հիմնարար բարեփոխումների անհրաժեշտությամբ պայմանավորված՝ մշակվել է նոր մոդելի ներդրման փուլային տարբերակը: Արդյունքում, որպես սկիզբ, 2026 թվականից ապահովագրական ընկերությունները գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության պայմանագրերը կնքելու են համապահովագրության եղանակով:

Արժեթղթերի շուկա: 2025 թվականին Կենտրոնական բանկը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) տեխնիկական աջակցությամբ և Ճապոնիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ ներդրել է հայկական իրավունքով կարգավորվող և միջազգային չափորոշիչներին համահունչ պայմանագիր՝ Armenian Standard Derivatives Agreement (ASDA), որը կարող է կիրառվել ռեպո, ածանցյալ և արժեթղթերի փոխառության (securities lending) գործարքների համար:

Փաստաթուղթը մշակվել է՝ հիմք ընդունելով 2002 թվականի ISDA (International Swaps and Derivatives Association) գլխավոր համաձայնագիրը, ինչպես նաև 2022 թվականին ներդրված ISDA արժեթղթերի ֆինանսավորման գործարքների հավելվածը:

Ներդրվող ստանդարտ պայմանագիրը ֆինանսական շուկայի մասնակիցներին կարող է ընձեռել մի շարք

4 Տե՛ս «Ֆինանսական համակարգի կայունություն/Մակրոպրուդենցիալ քաղաքականություն» բաժնում:

առավելություններ, ներառյալ՝ ընտրել կիրառելի օրենսդրությունը, օգնել արդյունավետ կերպով զսպելու ֆինանսական ռիսկերը, կրճատել գործարքների համաձայնեցման երկարատև ու բարդ գործընթացները, նվազեցնել անհատական պայմանագրերի պայմանների համաձայնեցմամբ պայմանավորված լրացուցիչ իրավաբանական ծախսերը, ինչպես նաև հեշտացնել միջազգային գործընկերների հետ վստահելի և լայնածավալ գործարքների իրականացումը:

Այս պայմանագրով իրականացվող բորսայական ռեպո գործարքները կարող են հիմք հանդիսանալ դրամական շուկայի վստահելի ուղենշային տոկոսադրույքի ձևավորման համար, որը ֆինանսական շուկայի մյուս հատվածները խորացնելու կարևոր նախապայման է:

2025 թվականի փետրվարի 27-ին ուժի մեջ է մտել ««Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-23-Ն օրենքը, որով նախատեսվել են համապարփակ կարգավորումներ ոչ հրապարակային ֆոնդերի և դրանց կառավարումն իրականացնող անձանց համար: Պայմանավորված օրենքի փոփոխությամբ՝ ՀՀ ԿԲ խորհուրդը 29. 07. 2025 թ. թիվ 127-Ն որոշմամբ հաստատել է «Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարման թույլտվության տրամադրման կարգը» կանոնակարգ 10/41-ը, որով ոչ հրապարակային ֆոնդերի կառավարումն իրականացնող անձանց համար սահմանվում են մուտքի պահանջներ:

2025 թ. հուլիսի 4-ին ուժի մեջ են մտել «Կրիպտոակտիվների մասին» օրենքը և հարակից մի շարք օրենքների նախագծեր, որոնք նախատեսում են կրիպտոակտիվների առաջարկի և դրանցով մատուցվող ծառայությունների համապարփակ կարգավորում՝ ձևավորելով ոլորտի կայուն և կանխատեսելի զարգացման համար անհրաժեշտ հիմքերը: Օրենսդրական փաթեթով սահմանվել են կրիպտոակտիվների հրապարակային առաջարկի, առք ու վաճառքի, ծառայությունների տրամադրման և շուկայի վերահսկման ընդհանուր կանոնները: Այս կարգավորումը, պահելով նորարարությունների խթանման և ռիսկերի արդյունավետ կառավարման միջև հավասարակշռությունը, իրավական դաշտում մտցնում է որոշակիություն՝ հնարավորություն ստեղծելով, որ բիզնեսը գործի առավել կանխատեսելի և ապահով միջավայրում: Օրենքը նախատեսում է նաև կարգավորման այնպիսի մեխանիզմներ, որոնք շուկա մուտք գործելու հնարավորություն են տալիս միայն վստահելի և թափանցիկ ընկերություններին, ինչն անհրաժեշտ նախապայման է կրիպտոակտիվներ ձեռք բերողների իրավունքները պաշտպանելու և այս շուկայի նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու տեսանկյունից:

Կարգավորման համար հիմք է ընդունվել «նույն գործունեություն, նույն ռիսկ, նույն կարգավորում» սկզբունքը, համաձայն որի՝ կրիպտոակտիվներով գործունեության իրականացումը, որն իր էությամբ նման է որևէ ավանդական ֆինանսական գործունեությանը և առաջացնում է նմանատիպ ռիսկեր, պետք է կարգավորվի նմանատիպ ձևով:

2025 թվականին Կենտրոնական բանկի խորհուրդը ընդունել է նաև կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց գործունեությունը կարգավորող կանոնակարգերի առաջին փաթեթը: Փաթեթի շրջանակում հաստատվել են կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց

լիցենզավորմանը (թույլտվությանը), ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափերին, ղեկավարների գրանցմանը, ինչպես նաև կրիպտոակտիվների հրապարակային առաջարկի փաստաթղթի ձևին և բովանդակությանը առնչվող կանոնակարգերը:

«Կրիպտոակտիվների մասին» օրենքն ուժի մեջ մտնելու պահից (հուլիս 4, 2025 թ.) սկսած՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցելու համար անձինք պետք է պարտադիր գրանցվեն և լիցենզավորվեն Կենտրոնական բանկի կողմից, իսկ կրիպտոակտիվներով հրապարակային առաջարկ հնարավոր է իրականացնել միայն Կենտրոնական բանկի կողմից ընդունված համապատասխան կանոնակարգի պահանջները բավարարող առաջարկի փաստաթղթի հրապարակման պարագայում:

Միևնույն ժամանակ, «Կրիպտոակտիվների մասին» օրենքով սահմանվել է անցումային շրջան այն իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար, որոնք մինչև օրենքի ուժի մեջ մտնելն արդեն իսկ մատուցել են կրիպտոակտիվներով ծառայություններ կամ իրականացրել են կրիպտոակտիվների հրապարակային առաջարկ:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ-ում POS տերմինալների քանակ

98,200

հատ

ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով գործարքները ՀՀ տարածքում

	ԾԱՎԱԼ, միլիոն դրամ	6,477,204	ՔԱՆԱԿ	542,822,726
arca		854,744		68,176,973
VISA		4,019,814		346,963,780
		1,456,773		121,223,052
Այլ		145,872		6,458,921

Ուշադրության կենտրոնում

Ներկայումս Կենտրոնական բանկն աշխատում է «Կրիպտոակտիվների մասին» օրենքով նախատեսված կրիպտոակտիվներով մատուցվող 10 ծառայությունների մանրամասն կանոնների շուրջ:

Աշխատանքի շրջանակում մշակվում են կրիպտոակտիվներով գործարքները լավագույն պայմաններով կատարելու կանոնները, հաճախորդի և կրիպտոակտիվի համապատասխանության գնահատման գործընթացը, հաճախորդի հետ կնքվող պայմանագրերի նվազագույն պայմանները, պատվերների և գործարքների գրանցման կարգը, հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության նկատմամբ սահմանվող կանոնները և հաճախորդների վարվելակերպի նկատմամբ այլ պահանջներ: Միևնույն ժամանակ, մշակվում են յուրաքանչյուր ծառայությանը բնորոշ հարակից կարգավորումները, այդ թվում՝ կրիպտոակտիվների պահառության ծառայությունից օգտվող հաճախորդների կրիպտոակտիվների պահպանության կանոնները, ակտիվին կցված թոքենի թողարկման և մարման նվազագույն պայմանները և այլ դրույթներ:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ստեղծել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց հաճախորդների օրինական շահերի և իրավունքների պաշտպանության երաշխիքներ, ինչպես նաև կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց գործունեությանը բնորոշ ռիսկերի զսպման նվազագույն կանոններ:

2025 թվականին Կենտրոնական բանկը մշակել և շրջանառել է «Բանկերի վերակառուցման մասին» օրենքի նախագիծը, որի ընդունման արդյունքում կներդրվեն ճգնաժամերի կառավարման արդյունավետ և միջազգային չափանիշներին համահունչ մեխանիզմներ և գործիքներ՝ ֆինանսական համակարգի կայունությունն ապահովելու համար: Մասնավորապես՝ նախագծով նախատեսվում է ճգնաժամերի կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրում՝ բանկերի ձախողման դեպքում բանկերի կրիտիկական գործունեության (գործառնության) անընդհատությունն ու ֆինանսական համակարգի կայունությունն ապահովելու համար: Նախագծով սահմանվում են այն հիմնարար նպատակները, որոնց հասնելու համար Կենտրոնական բանկը, որպես վերակառուցման լիազոր մարմին, կարող է բանկը վերակառուցելու որոշում կայացնել, և այն սկզբունքները, որոնցով անհրաժեշտ է առաջնորդվել բանկերի վերակառուցումն իրականացնելիս: Ներդրվում է նաև վերակառուցման գործիքակազմ՝ բանկի վաճառքի գործիքը, կամուրջ բանկի գործիքը, ակտիվների առանձնացման գործիքը, ներքին աջակցության գործիքը և դրանց կիրառման մեխանիզմները:

2025 թվականին Կենտրոնական բանկի կողմից փոփոխություններ են իրականացվել դրամական փոխանցումների վերաբերյալ բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում: Արդյունքում ապահովվել է ավելի համապարփակ և մանրամասն տեղեկատվության ստացումը բանկերի կողմից իրականացվող ինչպես անդրսահմանային, այնպես էլ ներպետական դրամական փոխանցումների վերաբերյալ: Փոփոխությունների արդյունքում Կենտրոնական բանկը հնարավորություն է ստացել բարելավելու արտաքին հատվածի վիճակագրությունը՝ այն համապատասխանեցնելով միջազգային սկզբունքներին և ստանդարտներին, ինչպես նաև բարձրացնելու Կենտրոնական բանկի կողմից վերահսկողության և ոլորտային համապատասխան վերլուծությունների իրականացման արդյունավետությունը:

Ելնելով ԿԲ ներկայացվող տեղեկատվությունը վերափոխելու ռազմավարական նպատակից՝ մշակվել է ֆինանսական կազմակերպություններից տվյալների հավաքագրման տվյալահենք (data-driven) մոդելի վերաբերյալ հայեցակարգ: Հայեցակարգի ներքո աստիճանաբար ներդրվելու են տվյալների հավաքագրման նոր մեխանիզմներ, որոնք նպաստելու են տվյալահենք որոշումների կայացմանը:

ՎՃԱՐԱՀԱԾՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Նոր ռազմավարությամբ մեր նպատակն է ունենալ շարունակաբար և ակտիվորեն ձևափոխվող, սահուն, անվտանգ և ներառական թվային վճարային համակարգ:

Այս ուղղության իրականացմամբ ակնկալում ենք ունենալ.

- *Ապագային միտված, միջազգային չափորոշիչներին համահունչ գործող վճարային ենթակառուցվածքներ:*
- *Վճարային համակարգի համապարփակ քաղաքականություն, այդ թվում՝ թվային արժույթի և թոկենիզացիայի վերաբերյալ:*

ՆԱԽԱԳԻԾ: ԷՎՀ (Էլեկտրոնային վճարումների համակարգ) արդիականացման նախագիծ:

Նպատակ. Նախագիծը նպատակ ունի արդիականացնելու և բարեփոխելու Կենտրոնական բանկի ԷՎՀ համակարգը՝ ամրապնդելով վերջինիս անվտանգությունը, արդյունավետությունն ու մասշտաբայնության հնարավորությունները:

DoD. ԷՎՀ առկա յուրաքանչյուր մասնակցի՝ նոր համակարգին միացման ապահովում և առնվազն մեկ գործարքի իրականացում՝ նոր համակարգի տիրույթում:

***Նախագծի ժամկետներ:** 2024 եռ. 2 – 2027 եռ. 2*

***2025 թ. կատարված աշխատանքները:** 2025 թվականին ԷՎՀ արդիականացման նպատակը կենտրոնացած էր ամուր ճարտարապետական հիմքի ստեղծման վրա: Հիմնական համակարգի ճարտարապետությունն ամբողջությամբ ավարտվել է՝ ապահովելով համապատասխանությունը ապագա մասշտաբայնությանը, փոխգործելիությանը և ISO 20022 ստանդարտներին: Տարին նաև նշանավորվեց գնման գործողությունների մեկնարկով՝ հաղորդագրությունների ծառայության և RTGS հարթակի համար մրցույթների անցկացման միջոցով:*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Նոր ռազմավարությամբ մեր նպատակն է հավաստիանալ, որ ֆինանսական համակարգում, ենթակառուցվածքներում և կազմակերպություններում էական ռիսկերը պատշաճ կառավարվում են, իսկ խնդիրների կամ ճգնաժամերի դեպքում դրանց հետևանքները հասցված են նվազագույնի:

Այս ուղղության իրականացմամբ ակնկալում ենք ունենալ.

- ***Ռիսկերի վրա հիմնված՝ ապագային միտված, ժամանակակից և օրինակելի վերահսկողական համակարգ:***
- ***Վերահսկողական թափանցիկության և հաշվետվողականության ավելի բարձր մակարդակ:***
- ***Առավել մրցակցային և ներառական ֆինանսական համակարգ, որը կապահովի հասանելի, որակյալ, անվտանգ ու նորարարական ծառայություններ սպառողների և ներդրողների համար:***

Կենտրոնական բանկը տարվա ընթացքում շարունակել է բնականոն իրականացնել իր գործառնությունները ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, ղեկավարների գրանցման, պրուդենցիալ, սպառողների շահերի պաշտպանության, ֆինանսական շուկայում չարաշահումների, մրցակցային հարցերի նկատմամբ վերահսկողության և ֆինանսական համակարգից ելքի կազմակերպման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, շարունակվել են ԿԲ ռազմավարությամբ ամրագրված՝ ապագային միտված և ժամանակակից, օրինակելի վերահսկողական համակարգին միտված նախաձեռնությունները՝ վերահսկողական կարողությունների ընդլայնման, վերահսկողական մեթոդաբանությունների լավարկման, վերահսկողության գործընթացների թվայնացման, վերահսկողական թափանցիկության մակարդակի բարձրացման, միջազգային համագործակցությունների բարելավման ուղղությամբ:

Լիցենզավորում և գրանցում:
Լիցենզավորման գործընթացների օպտիմալացման նպատակով 2025 թ. ընթացքում բարելավվել է ղեկավարների և նշանակալից մասնակիցների (այդ թվում՝ նաև իրական շահառուների) անաղարտության և համապատասխանության շարունակական գնահատման գործընթացը՝ գործընթացի շրջանակներում կատարվող հարցումների մի մասի ավտոմատացման միջոցով:

Շարունակվել է պարտատոմսերի թողարկումների քանակի և ծավալի աճի դինամիկան, այդ թվում՝ իրական հատվածի ընկերությունների կողմից: Տարվա ընթացքում իրական հատվածի կողմից թողարկումների քանակը կազմել է 17՝ 2024 թվականին 4-ի համեմատությամբ: Նշվածը

պայմանավորված է նաև ՀՀ Կառավարության կողմից իրականացվող սուբսիդավորման և հարկային արտոնությունների քաղաքականությամբ:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ

2025 թ. ընթացքում լիցենզավորվել է

1 ներդրումային ընկերություն

2 վարկային կազմակերպություն

1 գրավատուն

25 փոխանակման կետ

2025 թ. ընթացքում գրանցվել է

18 բանկի մասնաճյուղ

10 վարկային կազմ. մասնաճյուղ

2 դրամ. փոխանց. իրակ. ընկեր. մասնաճյուղ

14 ներդրումային ֆոնդ

152 ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ

որը կազմում է ֆինանսական կազմակերպությունների գրանցված ղեկավարների

14%

Զեղծարարություն

1690

Իրավապահ մարմիններին է ներկայացվել զեղծարարության դեպքերի վերաբերյալ

55 հաղորդում

Պրուդենցիալ վերահսկողություն:
2025 թ. ընթացքում պրուդենցիալ վերահսկողության մասով իրականացված աշխատանքները միտված են եղել ֆինանսական համակարգում կորպորատիվ կառավարման որակի, ռիսկերի կառավարման գործընթացի, ներքին հսկողության համակարգերի արդյունավետության բարձրացմանը, ինչն ուղեկցվել է վերահսկողական գործընթացների (նոր վերլուծական գործիքներ, գնահատման համակարգեր, մոդելներ) բարելավման, թափանցիկության և հետևողական վերահսկողական միջամտությունների կիրառմամբ: Նշված ուղղությունների ապահովման և

Կենտրոնական բանկի ռազմավարական առաջնահերթությունների իրագործման նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

Շարունակվել են բանկերի վերահսկողական վերլուծության և գնահատման նոր նախագծված համակարգով պիլոտային գնահատման աշխատանքները: Դրա շրջանակներում իրականացվել է բոլոր բանկերի ռազմավարության և բիզնես մոդելի, կորպորատիվ և ռիսկերի կառավարման համակարգերի, կապիտալին սպառնացող ռիսկերի, այդ թվում՝ գործառնական դիմակայունության և իրացվելիության ռիսկի մակարդակի գնահատում: Նոր նախագծված համակարգի նպատակն է բանկերին սպառնացող ռիսկերը կանխորոշել վաղ փուլում և ձեռնարկել վերահսկողական անհրաժեշտ միջոցառումներ:

2025 թ. ընթացքում իրականացվել է բոլոր բանկ և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների ՓԼ/ԱՖ մնացորդային ռիսկերի և նախորդ տարվա գնահատման արդյունքներով կազմակերպություններին արված առաջարկությունների իրագործման կարգավիճակի գնահատում: Գնահատման արդյունքները, բացահայտված խնդիրները և ՓԼ/ԱՖ ռիսկի կառավարման գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկները հաղորդակցվել են բոլոր կազմակերպություններին: Բարձր ռիսկի մակարդակ ունեցող ֆինանսական կազմակերպություններում կազմակերպվել են ստուգումներ և իրականացվել են առավել կոշտ վերահսկողական միջոցառումներ: Միևնույն ժամանակ՝ բոլոր բանկերում և ապահովագրական ընկերություններում ուսումնասիրվել է թիրախային ֆինանսական պատժամիջոցների ցանկերի դիտանցման համակարգերի ու գործընթացների արդյունավետությունը, արձանագրված խնդիրները հաղորդակցվել են կազմակերպությունների հետ, և դրանց զգալի մասը լուծվել է:

Գնահատվել է ԱՊՊԱ ոլորտում պատահարների հետևանքով տուժողների առողջությանը պատճառված վնասների մասով կանխավճարների տրամադրման գործընթացի արդյունավետությունը, բացահայտված խնդիրները և դրանց լուծման առաջարկները հաղորդակցվել են Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի (Բյուրո) հետ: Ակնկալվում է, որ հաղորդակցման շնորհիվ Բյուրոյի կողմից նախաձեռնված աշխատանքները կապահովեն գործընթացների արագությունն ու թափանցիկությունը՝ նպաստելով ԱՊՊԱ համակարգի կայունության ամրապնդմանը, շահառուների իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացմանը, նրանց տրամադրվող ծառայությունների որակի բարելավմանը: Վերլուծվել են ապահովագրական ընկերությունների մշակած և Բյուրոյի կողմից հաստատված սակագնային մոդելները՝ գնահատելու համար դրանց համապատասխանությունը օրենսդրության պահանջներին, դիտարկվել են ապահովադիրների անհատական ռիսկերի վրա հիմնվածությունը և նույն ռիսկայնությունն ունեցող ապահովադիրների նկատմամբ խտրական մոտեցումների կիրառման հնարավորությունը:

ՀՀ բանկային համակարգի հուսալիության ապահովման, համակարգի նկատմամբ հանրության վստահության և ավանդատուների շահերի պաշտպանության շարունակականությունն ապահովելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը մշտադիտարկման կենտրոնում է պահել Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ)

գործունեությունը: 2025 թ. ընթացքում կատարվել են երաշխավորված ավանդների հատուցման գործընթացների արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝ ԿԲ վերահսկողական հաղորդակցումների արդյունքում Հիմնադրամում իրականացվել են գործող ընթացակարգերի վերանայմանն ու կատարելագործմանն ուղղված աշխատանքներ՝ երաշխավորված ավանդների հատուցման դեպք տեղի ունենալու պարագայում Հիմնադրամի գործառնական պատրաստվածության և դրա հետ կապված կարողությունների բարելավման ուղղությամբ: Գործընթացների բարելավման համար հաշվի է առնվել տվյալ ոլորտի միջազգային լավագույն փորձը: Երաշխավորված ավանդների հատուցման գործընթացի պատրաստվածությունը պարզելու նպատակով մի շարք առևտրային բանկերում կատարվել են ստուգումներ: Ստուգումների, վերահսկողական միջամտությունների և հաղորդակցումների արդյունքում բարելավվել են առևտրային բանկերի գործառնական գործընթացները:

Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովման նկատմամբ վերահսկողություն:
2025 թվականին հետևողականորեն շարունակվել են ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովմանն ուղղված վերահսկողական աշխատանքները:

Իրականացված միջոցառումներն ընդգրկել են մի շարք կարևոր ուղղություններ, որոնցից առավել հատկանշական են ձեռք բերված հետևյալ արդյունքները.

- կատարվել է ֆինանսական կազմակերպությունների և նրանց կողմից մատուցվող ծառայությունների ուսումնասիրություն, ինչպես նաև պայմանագրի գործողության ընթացքում սպառողներին տրամադրվող տեղեկատվության պատշաճ մատուցման (հրապարակման) դիտարկում՝ ձեռնարկված միջոցառումների արդյունքում ապահովելով տեղեկատվության ամբողջական և հստակ բացահայտումը,
- վարկային բյուրոյի կողմից սպառողների վարկային զեկույցների տրամադրման գործընթացի ուսումնասիրության և վարկային բյուրոյի հետ հաղորդակցման միջոցով Բյուրոն ապահովել է վարկային զեկույցի տրամադրումն արգելելու՝ սպառողի իրավունքի իրացման գործընթացը,
- եկամուտների հայտարարագրման գործընթացի հետ կապված հանրային հարմարավետություն ձևավորելու նպատակով բանկերի հետ տարվել են համապատասխան աշխատանքներ և հաղորդակցումներ, որոնց արդյունքում բանկերի կողմից ապահովվել է հայտարարագրման համար անհրաժեշտ քաղվածքների/տեղեկանքների տրամադրումը նաև էլեկտրոնային եղանակով,
- ստացված ազդակների հիման վրա բանկերի կողմից նախաձեռնվել են սոցիալական փաթեթի հաշվետեր սպառողների բնականոն սպասարկմանն ուղղված միջոցառումներ, որոնց շնորհիվ ապահովվել է սոցիալական փաթեթի հաշիվների բացման և վարման վերաբերյալ ՀՀ Կառավարության համապատասխան որոշման պատշաճ կիրարկումը, ներառյալ հաշիվների բացումն այլ ծառայություններով չպայմանավորելը, հաշիվները չսպասարկող բանկերից այլ բանկեր տեղափոխելը:

Բացի դրանից՝ 2025 թվականին ֆինանսական համակարգում զեղծարարությունների կանխարգելման և սպառողների իրավունքների ու շահերի պաշտպանության նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Զեղծարարության դեպքերի հետ կապված՝ դիտարկվել է տարվա ընթացքում ԿԲ-ում ստացված ավելի քան 320 դիմում, ներկայացված խնդիրների վերաբերյալ ֆինանսական կազմակերպություններում իրականացվել են ստուգումներ, որոնց արդյունքում ռիսկերի նվազեցման նպատակով կատարվել են համապատասխան հաղորդակցումներ:

  Արդյունքում.

- Բանկերում խստացվել են անվտանգության համակարգերը և կիրառվել են նոր լուծումներ զեղծարարությունների դեմ պայքարում, մասնավորապես՝ գործարկվել են բանկերի մոբայլ բանկինգ համակարգերին մուտքի անվտանգության մեխանիզմներ, ինչի շնորհիվ զեղծարարության մի շարք սխեմաներ այլևս չեն գործել այդ բանկերում:

- Ֆինանսական կազմակերպությունները հայտարարել են վարկերի տոկոսների հաշվեգրման դադարեցման և վարկային պարտավորությունների հետաձգման (վարկերի սառեցում) մասին, որի արդյունքում ավելի քան 800 քաղաքացիների՝ զեղծարարությամբ ձևակերպված վարկերի տոկոսների հաշվեգրումը դադարեցվել է, և վարկային պայմանագրերը կասեցվել են մինչև քրեական գործի ավարտը:

- Շուրջ 120 քաղաքացիների սեփական միջոցները հետ են վերադարձվել փոխառության պայմանագրի համաձայն՝ մինչև քրեական գործի ավարտը:

- 2026 թ. հուլիսից ուժի մեջ է մտնելու հավելվածների կամ որոշակի պրոդուկտների կամ հաշիվներից ելքերի ինքնասահմանափակման գործիքը, որի շնորհիվ սպառողները կարող են ինքնուրույն արգելափակել հավելվածը կամ սահմանափակել գումարների ելքագրումը:

- ԿԲ պաշտոնական կայքէջում սկսել են հրապարակվել ԿԲ-ի կողմից բացահայտված՝ չլիցենզավորված կազմակերպությունների դեպքերը և համապատասխան տեղեկատվությունը:

- Չլիցենզավորված գործառնությունների 55 դեպքի վերաբերյալ իրավապահ մարմիններին ներկայացվել են հաղորդումներ:

Տարվա ընթացքում ԿԲ-ն սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակներից շարունակել է իր ակտիվ համագործակցությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ՝ ինչպես գրասենյակին ներկայացված բողոքների հետ կապված ազդակների փոխանակման, այնպես էլ առկա խնդիրների լուծման և կանխարգելմանն ուղղված հնարավոր լուծումների վերաբերյալ:

Վերահսկողական թափանցիկության և հաշվետվողականության բարելավում:
Վերահսկողական թափանցիկության և հաշվետվողականության բարելավման շրջանակներում.

- 2025 թվականին առաջին անգամ հրապարակվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ բանկերի նկատմամբ 2025-2027 թթ. իրականացվող պրուդենցիալ վերահսկողության

առաջնահերթությունները: Դրա նպատակն է եղել հաղորդակցել բանկային համակարգի մասնակիցներին առկա կամ նոր ծագող ռիսկերի մասին, որոնց դիմակայելու համար ԿԲ-ն և բանկերը պետք է համարժեք կարողություններ զարգացնեն: Ընդ որում, վերահսկողական առաջնահերթությունները կազմելիս հաշվի են առնվել ընթացիկ սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունները, ապագա հնարավոր մարտահրավերները, ԿԲ կառավարման մարմիններից, ֆինանսական համակարգից, ինչպես նաև ներքին և արտաքին տարբեր աղբյուրներից ստացված ազդակները:

2025 թվականի հուլիսի 1-ից Կենտրոնական բանկը բարելավել է պատասխանատվության միջոցների հրապարակման իր քաղաքականությունը. այն դարձել է առավել ընդգրկուն, ներառում է պատասխանատվության կիրառված բոլոր միջոցները և հրապարակվում է հանրության համար առավել մատչելի բովանդակությամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՆՍԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Նոր ռազմավարությամբ մեր նպատակն է բարձրացնել ֆինանսական շուկայի մասնակիցների տեղեկացվածության և թափանցիկության մակարդակը բնակլիմայական, սոցիալական և կառավարչական (ԲՍԿ) ռիսկերի կառավարման ու նվազեցման վերաբերյալ՝ խթանելով կենսակայուն (sustainable) ֆինանսական համակարգի ձևավորումը և ԲՍԿ ռիսկերի արդյունավետ կառավարումը:

Այս ուղղության իրականացմամբ մենք պետք է ունենանք.

- ***ԲՍԿ և կլիմայական ռիսկերի վերաբերյալ տեղեկացվածության բարձր մակարդակ ֆինանսական շուկայի մասնակիցների շրջանում:***
- ***Կայուն ֆինանսական գործիքների, այդ թվում՝ կանաչ վարկերի, պարտատոմսերի և այլ պրոդուկտների տեսականու սահմանում ֆինանսական համակարգում:***
- ***ԲՍԿ և կլիմայական ռիսկերի արդյունավետ կառավարման ու նվազեցման սկզբունքների ներդրման ուղիով՝ ֆիզիկական և անցումային ռիսկերից բխող ֆինանսական ռիսկերի նվազեցում:***
- ***Կենսակայուն ֆինանսական համակարգ և ավելի կայուն տնտեսական զարգացում:***

Լինելով գլոբալ զարգացման մի մասնիկը՝ մենք ևս անմասն չենք մնացել ԲՍԿ չափորոշիչներին հետևելուց: Այս առնչությամբ ԿԲ 2025-2027 թվականների ռազմավարական առաջնահերթությունների մեջ տեղ է գտել նաև ֆինանսական համակարգի կենսակայունությունը[5], որի ներքո սահմանված ռազմավարական արդյունքների գծով կատարված աշխատանքները ներկայացնում ենք ստորև:

2025 թվականի նախաձեռնություններից էր կենսակայունության հաշվետվության ձևաչափի մշակումը Վերակառուցման և զարգացման բանկի հետ համագործակցությամբ, որը բանկերը լրացրել են 2024 թվականի իրենց կենսակայունության գործունեության համար: Հաշվետվության առաջնային փուլի մեկնարկն ազդարարել է բանկային համակարգում անցումային և ֆիզիկական կլիմայական ռիսկերի վերաբերյալ տվյալների հավաքագրման սկիզբը՝ շեշտադրելով բանկերում նմանօրինակ ռիսկերի կառավարման և նվազեցման մեխանիզմների ու քաղաքականության մոտեցումների անհրաժեշտությունը[6]:

5 Sustainability բառի թարգմանությունն է:
6 Հաշվետվողականության վերոնշյալ ձևաչափը նախնական տարբերակ է, որը դեռևս հաստատված չէ ԿԲ խորհրդի կողմից: Հաշվետվողական պարտադիր ձևաչափի ներդրման առնչությամբ քննարկումներն ընթացքի մեջ են ԿԲ-ում, ինչպես նաև Ֆինանսների նախարարության հետ համատեղ: Վերջինս աշխատանքներ է իրականացնում տնտեսության մակարդակով հաշվետվողականության պարտադիր համակարգի ներդրման ուղղությամբ:

Կենտրոնական բանկը հրապարակել է իր կենսակայունության առաջին հաշվետվությունը, որը ամփոփել է 2023-2025 թվականների գործունեության ամփոփումը[7]: Վերջինս ամփոփում է ֆինանսական համակարգում և Կենտրոնական բանկում ոլորտի ընթացիկ զարգացումները: Այն ներկայացնում է ԿԲ-ի կողմից ոլորտում կատարված աշխատանքներն ու համագործակցությունը միջազգային գործընկերների հետ, մասնավոր հատվածում առկա կենսակայուն պրոդուկտների ամփոփ ցուցանիշների նկարագրությունը և բանկային համակարգի կենսակայունության առաջընթացի տվյալները:

2025 թվականին Բունդեսբանկի գործընկերների հետ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում անցկացված սեմինարի շրջանակներում քննարկվեցին հաշվետվողականությանն առնչվող խնդիրներն ու հնարավոր մոտեցումները:

7 https://www.cba.am/hy/Reports/9635/

ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ԶՈՐԱԿՑՈՒՄ

Կենտրոնական բանկի ուշադրության առանցքում շարունակում են մնալ սպառողների զորակցման էկոհամակարգի ձևավորումն ու զարգացումը: Կենտրոնական բանկի ռազմավարական նպատակն է ստեղծել այնպիսի միջավայր և գործիքներ, որոնց միջոցով ֆինանսական համակարգում սպառողները զորակցություն ստանան՝ կարողանալով անվտանգ, գիտակցված և իրենց կարիքներին համապատասխան օգտվել ֆինանսական ծառայություններից, նպաստելով իրենց ֆինանսական բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Սպառողների զորակցման նպատակով ռազմավարությամբ արմրագրել ենք հետևյալ արդյունքները.

- *Սպառողների զորակցման գործուն կառուցակարգ:*
- *Անհատների ֆինանսական ներառում՝ ապահովելով, որ անհատները և հատկապես հասարակության խոցելի խմբերը հասանելիություն ունենան իրենց կարիքներին համապատասխանող հիմնարար ֆինանսական ապրանքներին ու ծառայություններին և պատասխանատվությամբ ու ապահով օգտագործեն դրանք: Հիմնարար են բանկային հաշիվները, վճարումները, խնայողությունները, վարկը և ապահովագրությունը: Սկզբնական շրջանում հիմնարար ֆինանսական ծառայություններից կարևորելու ենք բանկային հաշվի օգտագործումը, քանի որ սա նախապայման է՝ այլ ֆինանսական ծառայություններից օգտվելու և կարևորագույն գործիք է մարդու համար՝ իր առօրյա ֆինանսական միջոցները արդյունավետ պլանավորելու և կառավարելու համար:*
- *Ֆինանսական ծառայություններից գրագետ օգտվելու ունակ անհատներ, սպառողների զորակցման էկոհամակարգի առանցքային հենասյուների (ֆինանսական կրթում, սպառողների շահերի պաշտպանության կարգավորման ու վերահսկողության և ֆինանսական համակարգում սպառողների վեճերի լուծման համակարգ) պահպանում և անհրաժեշտության դեպքում զարգացում:*
- *Սպառողի զորակցմանն ուղղված ազդեցիկ (impactful) քաղաքականության, կարգավորումների և ինտերվենցիաների համար վարքագծային հետազոտական գործիքակազմ և կարողություններ:*
- *Սպառողի կարծիքի և պահանջմունքների բարձրաձայնման և ֆինանսական ծառայությունների գնահատման մեխանիզմներ:*

2025 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է զարգացնել սպառողների զորակցման էկոհամակարգը և գործուն կառուցակարգերը՝ միաժամանակ ամրապնդելով սպառողների շահերի պաշտպանությունը, խթանելով

ֆինանսական ներառումն ու կրթումը, ինչպես նաև զարգացնելով վարքագծային մոտեցումների վրա հիմնված քաղաքականությունն ու գործիքակազմը: Հաշվետու տարվա ընթացքում իրականացված աշխատանքները միտված են եղել սպառողների անձնական տվյալների պաշտպանության, ֆինանսական ծառայությունների անվտանգ և արդյունավետ օգտագործման, խոցելի խմբերի ներառման, ֆինանսական կարողությունների բարելավման, ֆինանսական վեճերի լուծման համակարգերի կատարելագործման, ինչպես նաև տվյալահենք և հետազոտության վրա հիմնված քաղաքականության մշակման կարողությունների զարգացմանը:

Հաշվետու տարում ամփոփվել է ՀՀ Կառավարության կողմից հաստատված Ֆինանսական կրթման ծրագրի 2021-2025 թթ. գործողությունների պլանի գործարկումը, որի նպատակն է բարձրացնել հանրության իրազեկվածության մակարդակն ու հարստացնել գիտելիքները՝ ֆինանսական ծառայությունների անվտանգ և արդյունավետ օգտագործման նպատակով: Այն գնահատելու նպատակով իրականացվել է «Ֆինանսական կարողությունների բարոմետր - 2025» ազգային հետազոտություն, որի արդյունքներով ֆինանսական կարողությունների ինդեքսը 2025 թվականին կազմել է 56.5%՝ գերազանցելով ինչպես 2025 թվականի համար սահմանված 50% ազգային թիրախը, այնպես էլ 2031 թվականի երկարաժամկետ նպատակային ցուցանիշը՝ 55%: Ընդհանուր առմամբ, վերջին հինգ տարիների ընթացքում ֆինանսական կարողությունների ինդեքսն աճել է 9.7 տոկոսային կետով: Դրական դինամիկային զուգահեռ առկա են նաև մի շարք մարտահրավերներ: Մասնավորապես՝ հետազոտության տվյալներով հարցվողների 55.5%-ը ունեցել է պարտք, իսկ վարկ ունեցող քաղաքացիների 19.1%-ը՝ ժամկետանց պարտավորություններ: Միևնույն ժամանակ, խարդախությունների նկատմամբ առկա է գերվստահություն և ֆինանսական գիտելիքների խորացման անհրաժեշտություն:

Ֆինանսական ներառում: Ֆինանսական ներառման ուղղությամբ 2025 թվականին իրականացվել են նպատակային նախաձեռնություններ՝ միտված խոցելի խմբերի համար ֆինանսական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովմանը, ինչպես նաև թվային ֆինանսական ծառայությունների վստահ և արդյունավետ օգտագործման խթանմանը: Մասնավորապես՝

- Ֆինանսական ներառման խթանման շրջանակում մշակվել և ԿԲ խորհրդի կողմից հավանության է արժանացել «Հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցման և ծառայությունների մատուցման ուղեցույցը», որը սահմանում է ֆինանսական կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման ցանկալի վարքագծի շրջանակը: Արդյունքում ակնկալվում է, որ ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակում կձևավորվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի և ներառական սպասարկման միասնական չափորոշիչներ ու վարքագծի կանոններ, կբարձրանա ֆինանսական ծառայությունների հասանելիության աստիճանը և նշված անձանց ներգրավվածությունը համակարգում, ինչպես նաև կձևավորվի հստակ ու կանխատեսելի սպասարկման մոդել:

- Հիմնվելով «Դրամ 30-30. դեպի ֆինանսական բարեկեցություն» վարքագծային հաջողված փորձարարության վրա՝ Կենտրոնական բանկը որոշում է կայացրել առևտրային բանկերի հետ համագործակցությամբ լայնածավալ կիրառել նախագծի ընթացքում փորձարկված «ուղեկցման»/ (handholding) մոդելը՝ թիրախավորելով թվային ֆինանսական ներառման ընդլայնումը: Այս համատեքստում փորձարկվում են երկու հիմնական վարքագծային նախաձեռնություններ, որոնք միտված են մոբայլ բանկինգի հավելվածների որակյալ և անվտանգ օգտագործմանը: Հետազոտության արդյունքների հիման վրա «Թվային ուղեկից» նախագծի միջոցով փորձարկվելու է անհատական «ուղեկցման» (handholding) մեթոդաբանությունը, որը նախնական/պիլոտային փուլում արդեն իսկ արձանագրել է հաճախորդների ակտիվության և գիտելիքի էական աճ: Զուգահեռաբար, նախատեսվում է բանկային հավելվածներում ներդնել վարքագծային խթաններ (nudges), որոնք կօգնեն օգտատերերին կայացնել առավել գիտակցված ֆինանսական որոշումներ: Այս ծրագրերը հիմք կհանդիսանան ինչպես սահմանամերձ բնակավայրերում, այնպես էլ Հայաստանի ողջ տարածքում թվային ծառայությունների նկատմամբ վստահության ամրապնդման և ֆինանսական վարքագծի բարելավման համար:

Էկոհամակարգի զարգացում: Սպառողների տվյալների պաշտպանության ամրապնդման և զեղծարարության ռիսկերի նվազեցման նպատակով 2025 թվականին իրականացվել են կարգավորումների զարգացման և ինստիտուցիոնալ համագործակցության ուղղությամբ մի շարք աշխատանքներ՝ միտված անվտանգ և վերահսկելի ֆինանսական միջավայրի ապահովմանը: Մասնավորապես՝

- Սպառողների անձնական տվյալների պաշտպանության մակարդակի բարձրացման նպատակով կատարվել են կարգավորումների կատարելագործմանն ուղղված աշխատանքներ, որոնց շրջանակում մշակվել է «Ֆինանսական կազմակերպության կողմից հաճախորդի անձնական տվյալների մշակման նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/08-ը՝ սահմանելով տվյալների մշակման գործընթացների հստակ կանոններ և երաշխիքներ՝ միջազգային լավագույն չափորոշիչներին համապատասխան: Միաժամանակ, իրականացվել են փոփոխություններ գործող կարգավորումներում՝ ապահովելով անձնական տվյալների մշակման համաչափությունը և սահմանափակելով դեսպանատներին ներկայացվող քաղվածքների տվյալների ծավալը:

- Սպառողների տվյալների պաշտպանության ոլորտում ինստիտուցիոնալ համագործակցության ամրապնդման նպատակով 2025 թվականի մարտի 21-ին կնքվել է համագործակցության հուշագիր Անձնական տվյալների պաշտպանության գործակալության հետ: Այս հուշագրի շրջանակում նախատեսվել է, ի թիվս համագործակցության այլ ուղղությունների, գործակալության կողմից ստացված ֆինանսական կազմակերպությունների դեմ ուղղված դիմումների և բողոքների փոխանցում Կենտրոնական բանկին: Այս համագործակցությունը նպաստում է սպառողների պաշտպանության կառուցակարգի ամբողջականությանը և արդյունավետության բարձրացմանը:

Ֆինանսական կրթում: 2025 թվականին ևս ՀՀ կենտրոնական բանկն իրականացրել է ֆինանսական կրթմանը նպատակաուղղված նախաձեռնություններ՝ ընդլայնելով թիրախային խմբերն ու կիրառելով հանրային իրազեկման նորարարական գործիքներ: Այսպես՝

- Ֆինանսական կրթությունը դպրոցում. շարունակվել է հանրակրթական դպրոցների 2-րդից 11-րդ դասարաններում ֆինանսական կրթության ինտեգրման գործընթացը: Ֆինանսական կրթությունը ներառված է 4 առարկաներում՝ «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» և «Հասարակագիտություն»: Նոր չափորոշիչների և դասագրքերի ներդրման շնորհիվ աշակերտներն ուսումնասիրել են անձնական բյուջեի պլանավորման, խնայողությունների արդյունավետ կառավարման, ֆինանսական ծառայություններից անվտանգ օգտվելու, ֆինանսական իրավունքների պաշտպանության և անձնական ֆինանսների կառավարման այլ թեմաներ՝ կիրառելով գործնական և իրավիճակային մոտեցումներ:

- Ֆինանսական կրթման ներդրում երիտասարդական կենտրոններում. ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՄԱԿ-ի միջազգային արտակարգ մանկական հիմնադրամի (UNICEF) հետ համատեղ իրականացվել է մարզային երիտասարդական կենտրոնների աշխատակիցների վերապատրաստման ծրագիր: 14 կենտրոնների ներկայացուցիչներ հմտացել են ֆինանսական բարեկեցության, ներդրումների և ռիսկերի կառավարման հարցերում՝ ստանալով անհրաժեշտ կրթական նյութեր ու խաղեր, որոնք կիրառվելու են մարզաբնակ երիտասարդների հետ ամենօրյա աշխատանքում:

- «Փողի միջազգային շաբաթ» և հանրային իրազեկում. Հայաստանը շարունակել է իր ակտիվ դերը որպես ՏՀԶԿ «Փողի միջազգային շաբաթ» նախաձեռնության համանախագահող երկիր: 2025 թվականին արշավն առանձնացել է նոր ձևաչափերով. Երևանի մետրոպոլիտենի 10 կայարաններում տեղադրված կրթական վահանակների միջոցով ուղևորներն իրազեկվել են ֆինանսական զեղծարարություններից պաշտպանվելու կանոնների մասին: Բացի այդ, ոլորտի առաջատար ինֆլյուենսերների հետ համատեղ ստեղծված կրթական հոլովակները ապահովել են լայն հանրային ընդգրկվածություն և թվային հարթակներում ֆինանսական գրագիտության խթանում:

- Կամավորական ցանցի ընդլայնում. Ֆինանսական կրթման ծրագրերի իրականացման հարցում անկյունաքարային է մնում կամավորների ներառումը: 2025 թվականին ծրագրերում ներգրավված են եղել 40 կամավորներ, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով նպաստել են տարբեր սոցիալական խմբերի հետ տարվող աշխատանքների արդյունավետությանը:

Հետազոտություններ: 2025 թվականին իրականացվել են մի շարք հետազոտություններ՝ ուղղված սպառողների վարքագծի և ֆինանսական որոշումների խորքային ուսումնասիրությանը:

- Արտասահմանյան ակադեմիական ոլորտի հեղինակավոր գործընկերների հետ համագործակցությամբ իրականացվել է գերպարտքի

վերաբերյալ լայնածավալ հետազոտություն: Այն հնարավորություն է տվել բացահայտելու Հայաստանում գերպարտքի խնդիր ունեցող տարբեր խմբերի և գնահատելու նրանց այնպիսի վարքագծային գործոնները, ինչպիսիք են ներքին վերահսկողության զգացումը (internal locus of control) և հասակակիցների ազդեցությունը (peer effect): Հետազոտությունը իրականացվել է համապետական հարցմամբ՝ ընդգրկելով 385 սովորական վարկառուի և 1540 գերպարտքի խնդիր ունեցող անհատի: Հետազոտության արդյունքները կամփոփվեն 2026 թվականին և կծառայեն ապագա քաղաքականությունների մշակմանը:

- 2025 թվականին իրականացվել են երկու հաջորդական exploratory հետազոտություններ՝ գնահատելու վարկային սքորի և վարկային պատմության մասին հաճախորդներին տեղեկացնելու պարտավորության վերաբերյալ իրականացված փոփոխությունների ազդեցությունը: Հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ այն հաճախորդները, ովքեր վերջին 6 ամիսների ընթացքում օգտվել են վարկից և հիշում են համապատասխան տեղեկացման մասին, ունեն ավելի բարձր իրազեկվածության և գիտելիքի մակարդակ, քան նրանք, ովքեր չեն հիշում նման տեղեկացման մասին: Միաժամանակ արձանագրվել է, որ վարկային պատմությունը սպառողների կողմից ավելի լայնորեն է ընկալվում և քննարկվում, քան վարկային սքորը: Արդյունքները նաև վկայում են, որ բանավոր հաղորդակցումն առավել հիշվող է, մինչդեռ կարգավորման բոլոր պահանջների իրականացումը շարունակում է մնալ մասնակի:

ՀԵՌԱՎԱՐ

1,8 ՄԻԼԻՈՆ +

սպառող

- Տարեկան շուրջ 85,000 մարդ տեղեկացված որոշում է կայացնում fininfo.am -ում ծառայության գները համեմատելու միջոցով:
- Տարեկան ավելի քան 164,000 սպառողներ հեռավար կրթվում են Abcfinance.am կայքի միջոցով (785,000 կայքի դիտումներ):
- Սոց. հարթակներում Fininfo.am գործիքի օգտակարության վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման նպատակով իրականացված արշավներն ընդգրկել են շուրջ 550 000 մարդու:
- Abcfinance.am կայքի սոց. հարթակներում համանուն օգտահաշվի միջոցով անձնական ֆինանսների արդյունավետ կառավարմանն ուղղված կրթական արշավներն ընդգրկել են շուրջ 1 միլիոն սպառողների և ապահովել 3,4 միլիոն դիտումներ:
- Շուրջ 70,000 սպառող ֆինանսների կառավարման մասին գիտելիքներ է ստանում newsarmenia.am կայքի հետ համագործակցությամբ վարվող «Դրամապանակ» հարթակի միջոցով:

abcfinance.am
ԱՅԲ ԲԵՆ ԳԻՄ ՖԻՆԱՆՍՆԵՐ

էջի հասանելիություն
832,300
օգտատեր

էջի դիտումներ
7 ՄԼՆ
դիտում

fininfo

էջի հասանելիություն
650,000
օգտատեր

էջի դիտումներ
5,5 ՄԼՆ
դիտում

ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒՄ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ

ԱՌԵՐԵՍ

6500
երեխա և չափահաս

425,000
երեխա առերես դպրոցում

Այդ թվում՝

- Ավելի քան 2127 սպառող մասնակցել է «Անձնական ֆինանսների կառավարում» թեմայով սեմինարների
- Շուրջ 2652 սպառող ֆինանսապես կրթվել է Այցելուների կենտրոնի հետ համատեղ իրականացված սեմինարների ընթացքում թե ԿԲ Այցելուների կենտրոնում, թե Մեղրի և Ստեփանավան քաղաքներում
- 55 աշակերտ և 22 ուսուցիչ ՀՀ բոլոր մարզերից և Երևանից մասնակցել են «Ֆինանսական Բրեյն ռինգ» խաղ-մրցույթին
- 16 երիտասարդական աշխատակից 8 մարզի 14 երիտասարդական կենտրոններից մասնակցել են «Անձնական ֆինանսների կառավարման» վերապատրաստման
- 11-13 տարեկան 1000 երեխա ճամբարում մասնակցել են Ֆինանսական հաշտարարի իրազեկման ծրագրի
- 150 աշակերտ ստացել է «Զարթնիր» ՀԿ-ի հետ համատեղ ծրագրի շրջանակում
- 500 սպառող ստացել է անձնական ֆինանսների կառավարման գիտելիքներ «FinnoWay ցուցահանդեսի» շրջանակում

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՐՇԱՎՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

500,000
սպառող

- Շուրջ 500,000 սպառող իրազեկվել է ֆինանսական զեղծարարությունների դեմ պայքարի կանոնների մասին Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի բոլոր կայարաններում

ԱՌՑԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒՄ

900,000 +
սպառող


12,5 ՄԼՆ
դիմում


- Տարեկան շուրջ 70,000 մարդ տեղեկացված որոշում է կայացնում fininfo.am -ում ֆինանսական ծառայությունների պայմանները համեմատելու միջոցով
- Սոց. հարթակներում Fininfo.am գործիքի օգտակարության վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման նպատակով իրականացված արշավներն ընդգրկել են շուրջ 650,000 օգտատիրոջ և գրանցել են շուրջ 5,5 մլն դիտում
- Սոց. հարթակներում Abcfinance.am օգտահաշվի միջոցով անձնական ֆինանսների արդյունավետ կառավարմանն ուղղված կրթական արշավներն ընդգրկել են շուրջ 832,300 սպառող և ապահովել 7 մլն դիտում
- Շուրջ 85,435 սպառող ֆինանսների կառավարման մասին գիտելիքներ է ստանում newsarmenia.am կայքի հետ համագործակցությամբ վարվող «Դրամապանակ» հարթակի միջոցով
- «Փողի միջազգային շաբաթ» ծրագրի շրջանակում 3 ինֆլյուենսերների հետ համատեղ պատրաստված կրթական հոլովակներ ունեցել են շուրջ 528,000 դիտում

ԳԼՈՒԽ 4

ՉՀ ԿԲ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: ԿԲ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

– ՄԱՐԴԻԿ
– ՀԱՄԱԿԱՐԳԵՐ
– ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
– ՏՎՅԱԼՆԵՐ





ԿԲ կարողությունների զարգացման ռազմավարական ուղղության լավագույն իրականացմամբ միայն մենք կկարողանանք իրականություն դարձնել ազդեցության տիրույթում որդեգրած անելիքները:

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԾՐԱԳԻՐ


Նպատակ: *ԿԲ-ում մտցնել շարունակական վերափոխման և բարելավման օրակարգ:*

DoD. *Նախագծի արդյունքում նախատեսվում է ունենալ՝*

- *մշակույթ, որն ուղղված է վարքագծի և մտածելակերպի վերափոխմանը,*
- *կատարողականի կառավարում, որը ներառում է նպատակների սահմանում,*
- *կառավարման բարեփոխում, որն ընդգրկում է որոշումների կայացման մեխանիզմներ, լիազորությունների պատվիրակում և հաշվետվողականության վերանայում ու վերափոխում,*
- *աշխատանքային գործընթացներ, որոնք պետք է հստակեցվեն, օպտիմալացվեն և շարունակաբար բարելավվեն,*
- *նախագծային կառավարում, որը կոչված է բարդ և երկարաժամկետ նախագծերի իրականացման կարողությունների ձևավորմանը:*

Նախագծի ժամկետներ. *2023 – 2026*

2025 թ. կատարված աշխատանքները: *2025 թվականը ծրագրի ավարտական փուլն էր, որի ընթացքում ավարտին է հասցվել նախագծի պլանով նախատեսված արդյունքների մեծամասնությունը, իրականացվել է ներքին մշակույթի վերագնահատում՝ ծրագրի արդյունքները ամփոփելու նպատակով: Արդյունքները ներկայացված են բերված պատկերում, ըստ որի՝ բոլոր ուղղություններով արձանագրվել է դրական տեղաշարժ: Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հետագա բարեփոխումներն այսուհետև իրականացվելու են հիմնականում ներդրված համակարգերի բարելավման միջոցով՝ Նախագծային կոմիտեի որոշմամբ ծրագիրը համարվել է հաջողությամբ ավարտված: Միայն մեկ ծրագրային բաղադրիչ՝ գործընթացների օպտիմալացումն ու բարելավումը ձևակերպվել է որպես առանձին նախագիծ՝ 2026-2028 թթ. իրականացման համար:*


Ուղղություն
47
+13
Հաշվետվողականություն
49
+8
Համակարգում և հսկում
36
+6
Արտաքին փոխազդեցություններ
67
+7
Առաջնորդում
69
+9
Նորարարություն և ուսուցում
45
+13
Կարողություններ
71
+17
Մոտիվացիա
27
+8
Աշխատանքային միջավայր
62
+8
Բարձր
Միջինից բարձր
Միջինից ցածր
Ցածր

ՄԱՐԴԻԿ

Մեր աշխատակիցները Կենտրոնական բանկում աշխատելն ընկալում են որպես կոչում՝ իրենց ներդրումն ունենալով հանրային բարեկեցության ապահովման մեջ:

Մենք ստեղծում ենք միջավայր և պայմաններ, որտեղ մեր աշխատակիցները՝

- ***ունեն աշխատանքի նկատմամբ սեփականության և պատասխանատվության հստակ զգացում, առաջնորդվում են ընդհանուր թիմային ոգով և պատրաստ են համագործակցության,***
- ***աշխատում են արդյունքի ապահովման ուղղությամբ՝ միաժամանակ պահպանելով փոխադարձ հարգանքն ու վստահությունը,***
- ***արժևորում են գիտելիքը, մշտապես պատրաստ են փոխանցել այն և սովորել, ձգտում են ինքնակատարելագործման,***
- ***վստահ են բազմազանության, հավասարության և ներառականության սկզբունքների ապահովման մեջ՝ բացառելով խտրականության ցանկացած դրսևորում:***

2025 թվականին Կենտրոնական բանկում շարունակվել է կատարողականի կառավարման համակարգի բարելավման գործընթացը: Տարվա ընթացքում իրականացված բարեփոխումներն ուղղված են եղել անհատական պատասխանատվության բարձրացմանը, արդյունքահենքության ապահովմանը և Կենտրոնական բանկում համագործակցային մշակույթի զարգացմանը: Այս ուղղությամբ ձեռնարկված քայլերը նպատակ են ունեցել ձևավորելու առավել թափանցիկ համակարգ և հստակեցնելու յուրաքանչյուր աշխատակցի կատարած աշխատանքի կապը Կենտրոնական բանկի ռազմավարական նպատակների հետ:

Համակարգի արդյունավետության բարձրացմանը նպաստել է հետադարձ կապի մշակույթի ձևավորումը, որի շրջանակում կիրառվել է նաև 360° գնահատման մեթոդաբանությունը: Դա հնարավորություն է տվել բազմակողմանիորեն գնահատելու ոչ միայն ձեռք բերված արդյունքները, այլև դրանց հասնելու ընթացքում դրսևորված վարքագծային առանձնահատկությունները:

Տարվա ընթացքում իրականացվել են նպատակային բարելավումներ՝ ուղղված բացահայտված խնդիրների լուծմանը, բացերի նվազեցմանը և համակարգի ընդհանուր արդյունավետության բարձրացմանը: Այդ համատեքստում ներդրվել և կատարելագործվել են նախագծերի իրականացման մոտեցումները, հստակեցվել են կոմիտեներում որոշումների կայացման և կատարողականի գնահատման

գործընթացները, կիրառվել են թիրախների կասկադավորման համապատասխան մեխանիզմներ, ինչպես նաև կատարողականի և վարձատրության միջև ձևավորվել է առավել հստակ կապ: Գործընթացների հաշվետվողականության մակարդակի բարձրացման նպատակով սահմանվել է հանձնարարականների կատարման ցուցանիշ: Կորպորատիվ արժեքները՝ գերազանցությունը, բարեվարքությունը և հարգանքը, ինտեգրվել են գնահատման համակարգին՝ արժեքների, վարքագծի և չափելի արդյունքների միջև ձևավորելով հստակ փոխկապվածություն:

Զուգահեռաբար բազմազանության, հավասարության և ներառականության սկզբունքները հետևողականորեն ներառվել են անձնակազմի կառավարման բոլոր գործընթացներում՝ հավաքագրման, աշխատակիցների ադապտացման և ինտեգրման, ինչպես նաև ուսուցման և զարգացման փուլերում:

Տաղանդների կառավարման համակարգի ձևավորումն իրականացվել է շարունակական զարգացման տրամաբանությամբ: Հիմնվելով միջազգային լավագույն փորձի և այլ կենտրոնական բանկերի օրինակների վրա՝ փուլային սկզբունքով իրականացվել են աշխատանքներ՝ ուղղված կրիտիկական աշխատատեղերի բացահայտմանը և դասակարգմանը, ինչպես նաև փոխարինողների և հաջորդողների պատրաստմանը: Այս նախաձեռնությունները միտված են Կենտրոնական բանկի ինստիտուցիոնալ դիմակայունության բարձրացմանը մրցակցային միջավայրում:

Կենտրոնական բանկում բարելավվել է նաև սովորող կազմակերպության մշակույթը՝ գիտելիքը դիտարկելով որպես ռազմավարական ակտիվ: Գիտելիքի փոխանակման միջոցառումները նպաստել են մասնագիտական փորձի տարածմանը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարթակներում՝ բարձրացնելով Կենտրոնական բանկի հեղինակությունը և նպաստելով միջազգային լավագույն փորձի ներմուծմանը:

Տարվա ընթացքում մեկնարկել է «Երիտասարդ մասնագետների ներգրավման երկրորդ ծրագիրը»: Կենտրոնական բանկում աշխատելու հնարավորությամբ հետաքրքրվել է մոտ 700 ուսանող, որոնցից 40-ը, հաջողությամբ հաղթահարելով ընտրության բոլոր փուլերը, միացել են ծրագրին:

Ներդրված մոտեցումները նպաստել են անկողմնակալության ապահովմանը և հավասար հնարավորությունների ձևավորմանը՝ ստեղծելով միջավայր, որտեղ բազմազանությունը դիտարկվում է որպես ռազմավարական առավելություն, իսկ հավասարությունն ու փոխադարձ հարգանքը՝ որպես Կենտրոնական բանկի կայուն զարգացման հիմք:

Ինձ ամենաշատը դուր եկավ գիտելիք ստանալու հնարավորությունը գիտակ մասնագետից, ով այս կարճ ժամանակահատվածում հասցրեց բացատրել Հայաստանի կենտրոնական բանկի ընդհանուր գործառույթը, մասնավորապես՝ բանկի ֆինանսական ռիսկերի մոդելավորման և սթրես թեստավորման ոլորտները: Այժմ ես տիրապետում եմ այս բաժնի հետ կապված կարևոր գիտելիքների:

ԼԻԱՆԱ ԲԱՂԴԻՉՅԱՆ
Ամերիկյան համալսարան

ԿԲ-ում տիրում է միանգամայն աշխատանքային, բայց միևնույն ժամանակ հանգիստ և ոչ ճնշող միջավայր, ինչը բավականին հաճելի էր ինձ համար, քանի որ նախընտրում եմ աշխատել հենց նման պայմաններում: Անձնակազմի բոլոր այն անդամները, որոնց հետ շփում եմ ունեցել փորձառության ընթացքում, շատ հարգալից, բանիմաց, կենսուրախ ու կատակասեր էին, ինչը թույլ էր տալիս զգալ ավելի ազատ և միևնույն ժամանակ ձևավորում էր բարձր պատասխանատվության զգացում:

ԱՐԱՔՍԻ ՄԻՍԿԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
(2025 թվականից ԿԲ աշխատակից)

ԿԲ-ում ինձ ամեն ինչ դուր էր գալիս, ամենից շատ՝ միջավայրը: Մարդիկ միշտ պատրաստ էին օգնելու, և դա ստեղծում էր թիմային միասնականության զգացում: Բացի դրանից, շատ ոգեշնչող էր տեսնել, թե ինչպես է յուրաքանչյուր աշխատակից անընդհատ փորձում զարգացնել իր գիտելիքները, սովորել նոր բաներ: Այդպիսի միջավայրում ինքնաբերաբար դու էլ ես ուզում աճել ու դառնալ ավելի լավը:

ՀՈՎԻԿ ԱՓԻՆՅԱՆ
Վաշինգտոնի համալսարան

Ամռանը ԿԲ-ում երկամսյա հրաշալի փորձառությունից հետո այժմ սովորում եմ Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքագիտության համալսարանում (LSE)՝ տնտեսագիտության մագիստրատուրայում: Բակալավրի կրթությունս ստացել եմ Մանչեսթրի համալսարանում, որն ավարտել եմ գերազանց և ստացել եմ ուսումնական հաջողությունների մրցանակներ:
Փորձառությունն ինձ հնարավորություն տվեց ավելի լավ ծանոթանալու Կենտրոնական բանկի գործունեությանն ու աշխատանքային մշակույթին, որի արդունքում մտադիր եմ ավարտելուց հետո հետ վերադառնալ:

ԴԱՎԻԹ ՇԱՀԲԱԶՅԱՆ
Մանչեսթրի համալսարան


ՄԱՐԴԻԿ

Անձնակազմի միջին թիվ

767

295
արական

472
իգական



«Դիլիջանի ՈՒՀԿ»-ում աշխատակիցների թիվը

122

49
Դիլիջան և հարակից տարածքներ



Նոր աշխատակիցների թիվ

86

Հոսունության տոկոս

13%


Աշխատակիցների միջին աշխատանքային փորձ

11
տարի

ԿԲ ուսանող աշխատակիցների թիվ

23

ԿԲ աշխատակիցների բաշխում ըստ տարիքի



ՄԱՐԴԻԿ

ԿԲ աշխատակիցների գործուղումները (վայրը ներառյալ), մասնակցությունը սեմինարների, կուրսերի, դասընթացների

Ներքին դասընթացների քանակ
85

Ներքին դասընթացներին մասնակիցների թիվ
238

Արտաքին դասընթացների թիվ
153

Արտաքին դասընթացներին մասնակիցների թիվ
226


Աշխատակիցների ստացած որակավորումներ

CAMS CERTIFIED ANTI-MONEY LAUNDERING SPECIALIST
CIA
CISM
ACCA
CIPS
FSA CREDENTIAL
SHRM

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության միջոցառում
5

Դիլիջանի կենտրոնական դպրոցի աշակերտներ
195



որից՝ ԿԲ աշխատակիցների երեխաներ
56

Դիլիջանի կենտրոնական մանկապարտեզի աշակերտներ
59



որից՝ ԿԲ աշխատակիցների երեխաներ
24

Հետազոտական կարողությունների զարգացում

Հաշվետու տարում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված ԿԲ-ում հետազոտական միջավայրի ինստիտուցիոնալ զարգացմանը: Մասնավորապես՝

- Ներդրվել է Կենտրոնի նոր կազմակերպական կառուցվածք և կատարողականի կառավարման համակարգ՝ հիմնված արդիականացված հետազոտական չափանիշների վրա:
- Հաստատվել է ԿԲ-ում հետազոտական գործունեության կարգը, որը սահմանում է հետազոտությունների իրականացման, որակի վերահսկման և հրապարակման հիմնական նպատակները, չափանիշները և ընթացակարգերը:
- ԿԲ-ում ձևավորվել է արտաքին գիտական խորհուրդ՝ միջազգային հեղինակավոր համալսարանների առաջատար ներկայացուցիչների ներգրավմամբ՝ Քրիստոֆեր Պալմեր (MIT), Ռուբեն Ենիկոլոպով (Universitat Pompeu Fabra), Մատիաս Պոլբորն (Vanderbilt University), Վլադիմիր Ասրիյան (Center for International Economics, Barcelona School of Economics), Վարդգես Լևոնյան (University of Zurich), որը նպատակ ունի ապահովելու հետազոտական աշխատանքների համապատասխանությունը միջազգային առաջատար գիտական համայնքի լավագույն փորձին:

2025 թվականի ընթացքում ԿԲ-ի կողմից հրապարակվել է 7 հետազոտական աշխատանք (Working Papers), որոնք ընդգրկում են ֆինանսական կայունության, դրամավարկային քաղաքականության, վարքագծային տնտեսագիտության և բանկային համակարգի արդիական հարցեր: Բացի այդ, International Advances in Economic Research գիտական հանդեսում հրապարակվել է Կենտրոնի աշխատակիցների համահեղինակությամբ «Unveiling Price Adjustment Dynamics: Insights from Armenia» գիտական հոդվածը[8]:

Working Papers	
1	**Measuring systemic risk and macroprudential policy impact in Armenian financial system: a Growth-at-Risk approach**
2	**The Role of Information in Shaping Inflation Expectations and Perceptions: A Survey Experiment**
3	**Can Financial Behaviour Predict Driving Risk? Evidence from Armenia's Auto Insurance Market**
4	**When Risk Shifts, not Shrinks: Bank Portfolio Responses to FX Macroprudential Regulation**
5	**Exchange Rate Pass-Through To Inflation In Armenia: A Disaggregated And Shock-Based Analysis**
6	**Silent Runs in a Dollarized Banking System: Depositor-level Evidence from Financial and Geopolitical Shocks**
7	**Elasticities at the crossroads: Measuring Competition in Armenia's Banking Sector**

8 Unveiling Price Adjustment Dynamics: Insights from Armenia

Նշված հետազոտությունների արդյունքները ներկայացվել են տեղական և միջազգային հեղինակավոր գիտաժողովներում, ինչը նպաստել է միջազգային համագործակցության ընդլայնմանը և ԿԲ ճանաչելիության ընդլայնմանը:

Ներկայացված արդյունքներ	
1	51st EBES Conference – Rome
2	EcoMod Conference (International Conference on Economic Modeling)
3	5th Workshop on Financial Econometrics and Empirical Modeling of Financial Markets: New Challenges for Monetary Policy and Financial Markets
4	BEE 2025 Workshop
5	Transforming Economy - Yerevan State University
6	Annual Meetings 2025 – Armenian Economic Association

Միևնույն ժամանակ, հրապարակվել են 6 հետազոտական ամփոփագրեր՝ ուղղված արդիական տնտեսական և ֆինանսական խնդիրների հանրամատչելի ներկայացմանը և մասնագիտական քննարկումների խթանմանը:

Հետազոտական ամփոփագրեր	
1	Կենտրոնական բանկերը գլոբալ տաքացման պայմաններում
2	Կյանքի «արժեքը» թվերով. ինչո՞ւ է կարևոր այն չափել
3	Կապիտալի ընդհանուր պահանջներից ունեցած հեռավորության ազդեցությունը ՀՀ բանկերի՝ռիսկի գնալու վարքագծի վրա
4	Ո՞վ է ավելի լավ վարում. ավտովթարների վրա ազդող գործոնները Հայաստանում
5	Նոբելյան մրցանակ 2025. ինչպե՞ս են գիտելիքն ու ստեղծագործական «ոչնչացումը» միասին ապահովում կայուն աճ
6	Ի՞նչ է պատմում վարկային պատմությունը ավտովթար ունենալու ռիսկերի մասին

Հաշվետու տարում կազմակերպվել են նաև միջազգային մակարդակի վերապատրաստման դասընթացներ և գիտելիքի փոխանակմանը միտված միջոցառումներ, այդ թվում՝

- ՀՀ 6 բուհի 40 ուսանողի մասնակցությամբ տնտեսագիտական հաքաթոն՝ նվիրված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության հիմնահարցերին:
- Երևանի տնտեսագիտական դպրոցի և Չիկագոյի համալսարանի հետ համատեղ կազմակերպված «Socioeconomic Opportunity and Inequality» թեմայով ամառային դպրոց՝ 16 արտասահմանյան և հայկական բուհերի 24 ներկայացուցիչների մասնակցությամբ:
- Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության հետ համատեղ կազմակերպված «ՀՀ թվայնացման գործընթացի առաջնորդում» թեմայով աշխատաժողով, որի շրջանակում քննարկվել են թվայնացման ռազմավարության իրականացման մարտահրավերները, միջազգային լավագույն փորձը (այդ թվում՝ Էստոնիայի մոդելը), ինչպես նաև տվյալների կառավարման և միջգերատեսչական համագործակցության հարցերը:

Միաժամանակ, ՀՀ կենտրոնական բանկը և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտին (MIT) կից J-PAL հետազոտական կենտրոնը համատեղ կազմակերպել են «Քաղաքականության մշակում և գնահատում» թեմայով աշխատաժողով՝ նպատակ ունենալով զարգացնելու ԿԲ և պետական մարմինների աշխատակիցների կարողությունները տնտեսական քաղաքականության մշակման և գնահատման ոլորտում՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա:

Կազմակերպվել է «Հետազոտական մեթոդներ» դասընթաց Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների կենտրոնական բանկերի աշխատակիցների համար, որի նպատակն էր մասնակիցների շրջանում զարգացնել կիրառական հետազոտությունների իրականացման կարողությունները և ամրապնդել ժամանակակից փորձառական գործիքների կիրառման հմտությունները:

2025 թվականին Կենտրոնում անցկացվել է ԿԲ-ի և Հայաստանի ամերիկյան համալսարանի համատեղ աշխատաժողով, որի ընթացքում քննարկվել են ՀՀ տնտեսության վերաբերյալ իրականացվող հետազոտական նախագծերը, ինչպես նաև հետագա համագործակցության հնարավորությունները:

Առաջատար միջազգային համալսարանների, այդ թվում՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (MIT), Կոլումբիայի և Քոլգեյթի համալսարանների հետ կնքվել են փոխըմբռնման հուշագրեր, որոնց նպատակը ոչ միայն համագործակցության ինստիտուցիոնալացման և հետազոտական կապերի ընդլայնումն է, այլև Կենտրոնի ամառային փորձառության ծրագրերում վերոնշյալ հաստատությունների ուսանողների ներգրավման հարթակի ստեղծումը:

ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Համակարգերի միջոցով մենք ապահովում ենք այն ամենը, ինչն անհրաժեշտ է մարդկանց՝ իրացնելու իրենց կարողությունները և ստեղծելու հանրային նոր արժեք:

Դրանք՝

- ***ապահովում են աշխատակիցներին հարմար ֆիզիկական ենթակառուցվածք, որը նաև խթանում է մարդկանց, համագործակցությունը հոգ է տանում շրջակա միջավայրի մասին,***
- ***հնարավություն են տալիս աշխատանքը կատարելու ամենաառաջադիմական սարքավորումների և ՏՏ միջավայրում՝ միավորելով միջավայրը և մարդակենտրոնությունը,***
- ***նախագծվում և ներդրվում են «արժեք՝ փողի դիմաց» սկզբունքով,***
- ***պահպանում են ֆիզիկական և տեղեկատվական անվտանգության ամենաբարձր չափանիշները՝ առանց սահմանափակելու մարդկանց գործունեությունը:***

2025 թվականին շրջակա միջավայրի պահպանության և հարմարավետ ֆիզիկական ենթակառուցվածք ունենալու նպատակով Ծաղկաձորի ՈՒԿ-ի և «Վան» հանգստյան տան շենք-շինություններին տեղադրվել է արևային ֆոտովոլտային մեկական կայան: 2025 թվականին դրանց արտադրած էլեկտրաէներգիան ընդհանուր սպառման մեջ կազմել է համապատասխանաբար՝ 63 և 81 տոկոս, ինչը, դրամային արտահայտությամբ, հանգեցրել է համապատասխանաբար՝ 6.7 և 1.5 մլն դրամ խնայողության:

Շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից՝ արտադրված էլեկտրաէներգիան համադրելի է համապատասխանաբար ավելի քան 2000 և 500 ծառի տնկման հետ:

«Արժեք՝ փողի դիմաց» սկզբունքի կիրառման առումով էական բարեփոխումներ են իրականացվել Գնումների պլանավորման և նախաձեռնման ընթացակարգերում, որի արդյունքում զգալիորեն բարելավվել է Գնումների պլանի ընդգրկունությունը[9], հստակեցվել է գնման նախաձեռնման գործընթացը՝ կարգավորելով ֆինանսական ռիսկի կառավարումը և ներդնելով լրացուցիչ օրենսդրական համապատասխանության հավաստիացման մեխանիզմ: Գնումների պլանավորման բարեփոխումը թույլ կտա հետագայում բարելավել վերլուծական և հաշվետվողական բաղադրիչները, ապահովել «արժեք՝ փողի դիմաց» սկզբունքի հետևողական կատարելագործումը:

9 https://www.cba.am/hy/Board-decisions/8937/

Անվտանգության ապահովման նպատակով տեղադրվել է տեսադիտարկման նոր կենտրոնացված համակարգ, մասնավորապես՝ Դիլիջանում 252 հատ, Սիսիանում 41 հատ, Ծաղկաձորում 60 հատ նոր տեսախցիկներ, որոնց միջոցով տեսադիտարկումն իրականացվում է կենտրոնացված կարգով՝ գլխամասից, որի շնորհիվ բարձրացել է անվտանգության կազմակերպման և հսկման արդյունավետությունը:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կառավարման ներքո մենք պետք է առաջնորդվենք մեր արժեքներով ու համախմբվենք առաջնահերթությունների շուրջ:

Կառավարման նպատակն է՝

- ***ապահովել նպատակների և գործընթացների հստակություն,***
- ***համադրել աշխատակիցների պատասխանատվությունը և անհրաժեշտ ու բավարար իրավասությունները,***
- ***նպաստել հիմնավոր՝ տվյալների և հետազոտությունների վրա ձևավորված արդյունավետ որոշումների կայացմանը,***
- ***խրախուսել ստեղծագործությունը և նորարարությունը՝ միաժամանակ օգնելով աշխատակիցներին՝ կառավարելու ռիսկերը:***

2025 թվականը Կատարողականի կառավարման համակարգի ներդրման առաջին տարին էր, որը պետք է աշխատակիցների համար ապահովեր իրենց նպատակների հստակությունը և կապը ԿԲ խնդիրների հետ: Տարվա արդյունքներով կատարվել է ԿԲ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների և աշխատակիցների թիրախների հստակեցում, ներառյալ ռազմավարական և նախագծային թիրախների սահմանումը, ինչպես նաև հանձնարարականների կատարումը: Գործընթացների հստակության ապահովման տեսանկյունից վերանայվել և բարելավվել են մի շարք գործընթացներ, ինչպիսիք են արտաքին և ներքին փաստաթղթաշրջանառությունն ու հանձնարարականների կառավարումը, ինչպես նաև ճշգրտվել են գործընթացների կանոնակարգման մոտեցումները: Արդյունքում՝ հստակեցվել են գործընթացի մասնակիցների դերը և պարտականությունները: Տարեվերջին Կենտրոնական բանկը ձեռք բերեց նաև Գործընթացների կառավարման ծրագրային համակարգ, որը թույլ կտա ապահովել ԿԲ գործընթացների պարզեցումը, փոխկապվածությունը և ավտոմատացումը:

Ստեղծարարության ու նորարարության խրախուսման ներքո անհրաժեշտ է անդրադառնալ նախագծային կառավարման առաջընթացին և արդյունքներին: 2025 թվականին արդեն ավարտին են հասցվել հետևյալ նախագծերը՝

ա. ՀՀ ԿԲ ուղարկվող ներքին իրավական ակտերի ստացման համակարգ

բ. ԿԲ կայքի բարելավում

գ. Լիցենզավորման և գրանցման համակարգում առկա տվյալների՝ միջազգային պատժամիջոցների ցանկերի հետ ավտոմատ համադրման համակարգ:

2025 թվականին արդեն նախաձեռնվել է «Ֆինանսական հաղորդագրությունների փոխանցման համակարգի արդիականացում» նախագիծը:

ԿԲ նախագծերի քանակ

2025 թվական **45**

2024 թվականին 55

Ավարտված նախագծեր

2025 թվական **3**

2024 թվականին 1

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կարևորելով ոչ ֆինանսական ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացումը՝ 2025 թվականին փոփոխություն է կատարվել Բանկի կազմակերպական կառուցվածքում՝ հիմնելով Ռիսկերի կառավարման կենտրոնը՝ որպես ոչ ֆինանսական ռիսկերի կառավարման կենտրոնացված մարմին:

Այս մոտեցմամբ նպատակ ենք ունեցել ձևավորելու ռիսկերի կառավարման դրական մշակույթ և ունենալու դրանց կառավարման միասնական քաղաքականություն, աջակցելու ռիսկերի կառավարման գործընթացում ռիսկերի սեփականատերերին, ապահովելու ոչ ֆինանսական ռիսկերի կառավարումը ռիսկերի մշտադիտարկման և հաշվետվողականության միջոցով:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԵՐԻ ԵՎ ՎԵՐՀԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գումարված նիստեր **8**

Քննարկված թեմաներ **10**

Համաձայնեցված գործողություններ **30**

ԿՈՄԻՏԵՆԵՐ/ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Տվյալների կառավարման կոմիտե
3 նիստ, 10 հարց

Բյուջետային հանձնաժողով
24 նիստ, 47 հարց

Գեղարվեստական կոմիտե
10 նիստ, 18 հարց

Գույքագրման կոմիտե
5 նիստ, 7 հարց

Անձնակազմի կոմիտե
1 նիստ, 1 հարց

Ֆինանսական կայունության կոմիտե
6 նիստ, 6 հարց

Ֆինանսական կարգավորման կոմիտե
20 նիստ, 65 հարց

Նախագծերի կառավարման կոմիտե
29 նիստ, 109 հարց

ԿԲ լիցենզավորման և վերահսկողության կոմիտե
58 նիստ, 578 հարց

ԿԲ ներդրումային հանձնաժողով
6 արձանագրություն, 4 որոշում

SS և SA կոմիտե
3 նիստ, 7 հարց

Գործադիր կոմիտե
40 նիստ, 96 հարց

Ռիսկերի կառավարման կոմիտե
8 նիստ, 15 հարց

Բարեվարքության կոմիտե
5 նիստ, 19 հարց

Աուդիտի կոմիտե
26 նիստ, 58 հարց

ՏՎՅԱԼՆԵՐ

Տվյալները մեզ համար ռազմավարական ակտիվ և անկյունաքարն են մեր բոլոր որոշումների:

Մենք պետք է ունենանք.

- ***ժամանակին, ամբողջական, արժանահավատ և հասանելի տվյալներ, որոնք թույլ կտան պատրաստել և կայացնել տեղեկատվության վրա հիմնված (data driven) որոշումներ,***
- ***տվյալների կառավարման այնպիսի մոտեցումներ, որոնք կոչված են ապահովելու ոչ միայն ներկա, այլև ապագա կարիքները,***
- ***տվյալները որպես հանրային բարիք ընկալելու և համապատասխան քաղաքականություն իրականացնելու հմտություն,***
- ***տվյալների կառավարման սկզբունքները («մեկ տվյալը՝ մեկ անգամ», «հասանելիություն կարիքի դեպքում» և այլն) առօրյա աշխատանքում կիրառող համայնք:***

2025 թվականի ընթացքում տվյալամետ համայնք և մշակույթ ձևավորելու նպատակով աշխատանքներ են տարվել աշխատակիցների կրթման ուղղություններով, որտեղ առանձնացվել են տվյալների կառավարիչների շարունակական կրթման ուղղությունը և ԿԲ աշխատակիցների կրթումը: Տվյալների կառավարիչները ԿԲ ստորաբաժանումների այն աշխատակիցներն են, ովքեր իրենց ստորաբաժանումներում ամենալավն են տիրապետում առկա տվյալներին: Կենտրոնական բանկի ավելի քան 15 կառավարիչների համար կազմակերպվել է 3 դասընթաց՝ նվիրված «Տվյալների սեփականատիրության», «Տվյալների մոդելավորման» և «Տվյալների որակի ապահովման» թեմաներին: Միևնույն ժամանակ, դասընթացի գիտելիքների առավել արդյունավետ օգտագործման նպատակով տվյալների կառավարիչների հետ յուրաքանչյուր ամիս կազմակերպվել են հանդիպումներ:

Տվյալների ավելի արդյունավետ կառավարման նպատակով անցկացվել է սեմինար ԿԲ աշխատակիցների համար՝ նվիրված «Մետատվյալներ» թեմային, ինչպես նաև կազմակերպվել են սեմինարներ տարբեր դեպարտամենտների համար: Միաժամանակ, իրականացվել է «Գիտելիքի սրճարան» փոխգործակցային միջոցառումը՝ նվիրված տվյալների կառավարմանը: Իրականացված աշխատանքների արդյունքում գրանցվել է դասընթացներին և միջոցառումներին բարձր մասնակցություն. ցուցաբերվել է 90% գոհունակության աստիճան:

Հաշվետու տարում մշակվել և հաստատվել են տվյալների կառավարման ընդհանուր

սկզբունքներ, որոնք սահմանում են տվյալների հավաքագրման, մշակման, պահպանման և օգտագործման մոտեցումներ:

Այս սկզբունքները միասին ձևավորում են տվյալների կառավարման ամբողջական շրջանակ, որը՝

- ապահովում է տվյալների հավաքագրում միայն հստակ սահմանված նպատակների համար,
- հստակեցնում է տվյալների սեփականության և պատասխանատվության դերերը,
- երաշխավորում է տվյալների որակը՝ ապահովելով դրանց ճշգրտությունը, ամբողջականությունը և կիրառելիությունը,
- հեշտացնում է համակարգերի և ստորաբաժանումների միջև տվյալների հոսքը,
- սահմանում է տվյալների կենսափուլը՝ ստեղծումից մինչև արխիվացում:

2025 թվականին ՀՀ կենտրոնական բանկն աշխատել է հրապարակվող տեղեկատվության շրջանակների ընդլայնման, հավաքագրվող տեղեկությունների մշակման և ամփոփման գործընթացների համընդհանուր ավտոմատացման, վիճակագրական տվյալների որակի բարելավման, հավաքագրվող վիճակագրության մեթոդաբանության կատարելագործման ու միջազգային չափորոշիչներին դրանց համապատասխանեցման ուղղությամբ:

ՀՀ ԿԲ-ն մշտապես ընդլայնում է տեղեկատվության հավաքագրման աղբյուրները և ծավալները, ինչպես նաև մշակում և հրապարակում է նոր վիճակագրական ցուցանիշներ: Այսպես՝ տարվա ընթացքում հրապարակվել են մի շարք նոր ցուցանիշներ՝ հանրությանը տրամադրելով ՀՀ տնտեսության վերաբերյալ ավելի համապարփակ տեղեկատվություն:

Առաջին անգամ հրապարակվել է Հայաստանի բնակելի անշարժ գույքի գների ինդեքսը (ԲԱԳԳԻ)՝ ՀՀ կադաստրի պետական կոմիտեի բնակելի տների առք ու վաճառքի փաստացի գործարքների տվյալների բազայի հիման վրա: ԲԱԳԳԻ հաշվարկն իրականացվել է ՀՀ վիճակագրության կոմիտեի մասնագետների և ԱՄՀ փորձագետների համատեղ աշխատանքի շնորհիվ: Հաշվարկի համար հիմք են հանդիսացել պաշտոնական վիճակագրության մեթոդաբանության ոլորտում միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Եվրոստատ, ԱՄՀ, ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողով, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) կողմից մշակված մեթոդաբանական ձեռնարկների դրույթները:

Առաջին անգամ հրապարակվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից եռամսյակային պարբերականությամբ իրականացվող հարցումների ամփոփ արդյունքները, որոնք արտացոլում են ֆինանսական շուկայի մասնակիցների սպասումները մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ և օգտագործվում են դրամավարկային և ֆինանսական կայունության քաղաքականությունների մշակման ու իրականացման գործընթացում:

Շարունակվում են աշխատանքներ իրականացվել վիճակագրական ցուցանիշների հաշվարկման և հրապարակման օպերատիվության աստիճանի բարձրացման ուղղությամբ, որի շրջանակներում ընդլայնվել և կատարելագործվել են ոչ ավանդական

վիճակագրական աղբյուրների միջոցով օպերատիվ սպառողական գների ինդեքսի հաշվարկման հետազոտական աշխատանքները: Հաշվարկվում և քաղաքականության մշակմամբ զբաղվող բանկի տարբեր մարմիններին և ստորաբաժանումներին է ներկայացվում օպերատիվ գնաճի ամսական ցուցանիշը՝ որպես ընթացիկ գնաճի ամենահավանական կարճաժամկետ կանխատեսում: Աշխատանքի արդյունքները ներկայացվել են միջազգային կոնֆերանսներում և հետազոտական աշխատաժողովներում: Սույն աշխատանքի շրջանակում նաև Եվրասիական տնտեսական միության երկրների և Իրանի կենտրոնական բանկերի մասնագետների համար կազմակերպվել է «Ոչ ավանդական աղբյուրների միջոցով գնաճի օպերատիվ գնահատումը ՀՀ ԿԲ-ում» թեմայով տարածաշրջանային աշխատաժողով, որի ընթացքում Վիճակագրության վարչության մասնագետները ներկայացրել են Հայաստանի փորձը, արդյունքները և մարտահրավերները՝ կապված առցանց տեղեկատվության հիման վրա օպերատիվ գնաճի հաշվարկման հետազոտության հետ:

Կարևորելով գործարար սուբյեկտների գնագոյացման վարքագծի առանձնահատկությունները՝ առաջին անգամ իրականացվել են հարցումներ իրական հատվածի գործարար սուբյեկտների շրջանում: Հարցումների նպատակն է եղել գնահատել վերջիններիս գնաճային սպասումները, բացահայտել գնագոյացման մեխանիզմները, ինչպես նաև վերլուծել սպասումների դերը գնաճային գործընթացների ձևավորման մեջ: Ստացված արդյունքները կիրառվում են դրամավարկային քաղաքականության վերլուծության շրջանակում, ինչպես նաև նպաստում են կանխատեսումների կատարելագործմանը և քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Վիճակագրական տվյալները որպես հանրային բարիք ընկալելու ռազմավարական նպատակի շրջանակում ԿԲ-ն շարունակում է իրականացնել սպառողների գոհունակության վերաբերյալ հարցումներ[10] և հետևողական է՝ արագորեն ու արդյունավետ կերպով արձագանքելու տվյալներ օգտագործողների կարիքներին՝ նոր ցուցանիշների հաշվարկման ու հրապարակման ուղղությամբ:

10 Հարցումներն անցկացվում են երկու ուղղությամբ. արտաքին՝ ՀՀ ԿԲ-ից դուրս ֆինանսական կազմակերպությունների, մասնագիտական համալսարանների, վերլուծական կենտրոնների և համագործակցող պետական կառույցների, և ներքին՝ ՀՀ ԿԲ ներքին օգտագործողների շրջանում:

ՆԱԽԱԳԻԾ: Տեղեկատվության փոխանակում ՊԵԿ-ի և ֆինանսական կազմակերպությունների միջև

Նպատակ: *Նախագծի նպատակը տվյալների ապահով փոխանակման համար անխափան աշխատող ծրագրային ենթակառուցվածքի տրամադրումն է ՊԵԿ-ին և ֆինանսական կազմակերպություններին, փոխանցվող տվյալների ամբողջականության ապահովումն է, հայտարարագիր ներկայացնելու գործընթացի հեշտացումն է ֆիզիկական անձանց համար և գործընթացի նկատմամբ ՀՀ ԿԲ վերահսկողության ապահովումն է:*

DoD. *Նախագծի իրականացման արդյունքում նախատեսվում է ունենալ՝*

- *ԿԲ նախագահի կողմից հաստատված կանոնակարգ և տեխնիկական նկարագիր «Հարկ վճարողի յուրաքանչյուր բանկային հաշվի ամփոփ տեղեկությունների փոխանակման մասին», որոնք կնկարագրեն կողմերի միջև տեղեկատվության փոխանակումը:*
- *Գործընթացի նկարագիր, տեխնիկական նկարագիր և լիազորագրի նմուշ «Հայտարարատուի բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվությունների փոխանակման մասին», որոնք կնկարագրեն կողմերի միջև տեղեկատվության փոխանակումը:*
- *Ծրագրային միջավայրեր տեղեկատվության փոխանակման համար:*

Նախագծի ժամկետներ. *2024 – 2025*

2025 թ. կատարված աշխատանքները: *Հաստատվել է «Հարկ վճարողի յուրաքանչյուր բանկային հաշվի ամփոփ տեղեկությունների փոխանակման կարգը», որի հիման վրա ներդրվել է տվյալների փոխանցման ծրագրի թեստային միջավայրը: Տարվա վերջին նույն նախագծի շրջանակում տվյալների փոխանցման համակարգը գործարկվել է նաև արտադրական միջավայրում: Առաջին փուլի ընթացքում իրական միջավայր է փոխանցվել շուրջ 7 միլիոն հաղորդագրություն:*

ՆԱԽԱԳԻԾ: Ֆինանսական կազմակերպությունների կողմից արտարժույթի առք ու վաճառքի գործարքների վերաբերյալ տեղեկատվությունն իրականին մոտ ժամանակահատվածում ներկայացնելու նախագիծ


Նպատակ: Նախագծի նպատակը արտարժույթի առք ու վաճառքի գործարքների վերաբերյալ տվյալների ագրեգացված հաշվետվությունից անցումն է նոր՝ իրականին մոտ ժամանակահատվածում հավաքագրված գրանուլյար տվյալների հաշվետվական ձևաչափին: Նախագիծը Կենտրոնական բանկին կտա սեփական կարիքների վրա հիմնված որոշումներ կայացնելու ճկունություն և կստեղծի ենթակառուցվածք՝ բարձր հաճախականություն ունեցող գործարքային տվյալների ստացման համար, որոնք կարող են օգտագործվել ԿԲ ցանկացած շահագրգիռ ստորաբաժանման կողմից:


DoD. Նախագծի արդյունքում նախատեսվում է ունենալ՝

- *Հաստատված կանոնակարգ, որը կնկարագրի արտարժույթի առք ու վաճառքի գործարքների տվյալները, դրանց հավաքագրումը և ԿԲ-ի հետ փոխանակումը:*
- *Իրականին մոտ ժամանակահատվածում տվյալների հավաքագրման ավտոմատացված համակարգ:*
- *Ստացված տվյալների հիման վրա կառուցված և ցուցադրված dashboard Կենտրոնական բանկի տարբեր հատվածներում:*

Նախագծի ժամկետներ. 2024 – 2026

2025 թ. կատարված աշխատանքները: *Հաստատվել է ֆինանսական կազմակերպությունների կողմից արտարժույթի առք ու վաճառքի գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը իրականին մոտ ժամանակահատվածում ներկայացնելու նախագիծը, որի շրջանակում ներգրավվել է արտաքին թիմ: Թիմը իրականացրել է համակարգի ֆունկցիոնալ պահանջների մշակումը, ճարտարապետության և տեխնիկական միջավայրերի ձևավորման աշխատանքները:*





ԳԼՈՒԽ 5

ՉՀ ԿԲ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Մենք պետք է հասնենք բարձր հեղինակության՝ մեր նպատակների իրականացման հաշվետվողականության և գործողությունների թափանցիկության միջոցով:

Հաղորդակցումը իրականացվելու է՝

- ***թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները ներառելով կայացրած բոլոր հանրային նշանակության որոշումների մեջ,***
- ***ապահովելով հանրային քաղաքականության համար հետադարձ կապ և տվյալների համակարգեր,***
- ***ներառելով անհրաժեշտ կրթական բաղադրիչը և դիտարկելով այն որպես հանրային բարիք ու սոցիալական պատասխանատվություն,***
- ***հաղորդակցելով ոչ միայն փաստերը, այլ նաև նպատակներն ու մտադրությունները:***

2025 թվականին Կենտրոնական բանկի հաղորդակցման քաղաքականությունը շարունակել է ձևավորվել ռազմավարական առաջնահերթություններին համահունչ՝ ապահովելով թափանցիկության, հաշվետվողականության, հանրային ներգրավվածության և կրթական բաղադրիչի հետևողական զարգացում:

Հաշվետու տարում Կենտրոնական բանկը շարունակել է բարձրացնել իր գործունեության թափանցիկության աստիճանը՝ ապահովելով հանրային նշանակության որոշումների բաց և հասանելի ներկայացում:

Մասնավորապես՝ ապահովվել է հանրության և ԶԼՄ-ների հետ ակտիվ ու համակարգված հաղորդակցություն՝ տեղեկատվության ժամանակին տարածման և հաշվետվողականության ամրապնդման նպատակով:

Տարվա ընթացքում միջազգային հեղինակավոր 2 պարբերականների՝ Գերմանիայում, Ավստրիայում և Շվեյցարիայում թողարկվող Forbes ամսագրի և ԱՄԷ Khaleej Times շաբաթաթերթի հետ համագործակցությունը ևս նպաստել է ԿԲ քաղաքականությունների և դիրքորոշումների ավելի լայն ներկայացմանը:

Միաժամանակ, 2025 թվականի մայիսի 22-ին գործարկված ԿԲ նոր կայքը՝ իր արդիականացված ձևավորմամբ, բազմալեզու և մոբայլ լուծումներով, էականորեն բարելավել է տեղեկատվության մատչելիությունը՝ ապահովելով ավելի ամբողջական և նպատակային հաղորդակցություն հանրության հետ:

ՄԱՆԴԱՏ

Որո՞նք են ՀՀ կենտրոնական բանկի խնդիրները:

Վերահսկել բանկերի գործունեությունը	157	14.81%
Ապահովել ֆինանսական կայունություն	146	13.78%
Պահպանել կայուն փոխարժեք	143	13.49%
Ապահովել գների կայունություն	102	9.62%
Խրախուսել տնտեսական աճ և զբաղվածություն	96	9.06%
Վարկեր տրամադրել քաղաքացիներին	89	8.40%
Սահմանել վերաֆինանսավորման տոկոսադրույք	88	8.30%
Թողարկել թղթադրամներ	88	8.30%
Վարկեր տրամադրել բանկերին	74	6.98%
Վարկեր տրամադրել կառավարությանը	65	6.13%
ԴՊ	12	1.13%
Ընդամենը	**2406**	**100%**

Միայն 9.6%-ն է ճիշտ նշել, որ ԿԲ-ն պատասխանատու է գների կայունության համար, 13.8%-ը՝ ֆինանսական կայունության:

Համեմատության համար 2024 թ-ին հարցման մասնակիցների 20,2%-ն է նշել, որ ՀՀ-ում գների կայունության համար պատասխանատուն ԿԲ-ն է:

Կրթության մակարդակի բարձրացումը որոշակի դրական է ազդում ցուցանիշի վրա:

Հարցվողի կրթությունը	Միջնակարգ	Բարձրագույն
Ապահովել ֆինանսական կայունություն	11.8%	15%
Ապահովել գների կայունություն	7.2%	10.9%
Վերահսկել բանկերի գործունեությունը	16.5%	14.1%
Պահպանել կայուն փոխարժեք	13.6%	13.2%
Սահմանել վերաֆինանսավորման տոկոսադրույք	8.7%	8.2%
Խրախուսել տնտեսական աճ և զբաղվածություն	9%	9.1%
Թողարկել թղթադրամներ	5.8%	9.9%
Վարկեր տրամադրել քաղաքացիներին	14.5%	5.7%
Վարկեր տրամադրել բանկերին	7.5%	7%
Վարկեր տրամադրել Կառավարությանը	5.5%	6.7%

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

ԿԲ-ն որքանո՞վ է անկախ քաղաքական ազդեցությունից:

Մասամբ անկախ է	130	38.24%
Ընդհանրապես անկախ չէ	87	25.59%
Ամբողջովին անկախ է	79	23.24%
ԴՊ	44	12.94%
Ընդամենը	**340**	**100%**

ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Որքանո՞վ եք վստահում Կենտրոնական բանկին:

Ամբողջովին վստահում եմ	169	49.42%
Մասամբ եմ վստահում	140	40.94%
Ընդհանրապես չեմ վստահում	22	6.43%
ԴՊ	11	3.22%
Ընդամենը	**342**	**100%**

Որքանո՞վ է ԿԲ-ն թափանցիկ ներկայացնում իր քաղաքականությանը վերաբերող որոշումները:

Մասամբ թափանցիկ	143	42.18%
Ամբողջովին թափանցիկ	76	22.42%
ԴՊ	69	20.35%
Ընդհանրապես ոչ թափանցիկ	51	15.04%
Ընդամենը	**339**	**100%**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԱԼՈՒՄ

Ինչպիսի՞ կարծիք ունեք ԿԲ-ի մասին:

Դրական	194	57.06%
Չեզոք	129	37.94%
Բացասական	11	3.24%
ԴՊ	6	1.76%
Ընդամենը	**340**	**100%**

Արդյո՞ք ԿԲ-ն գործում է ի շահ քաղաքացիների:

Մասամբ այո	340	44.51%
Այո	150	38.28%
Ոչ	129	12.46%
ԴՊ	42	4.75%
Ընդամենը	**340**	**100%**

Վերջին 5 տարիների ընթացքում Ձեր կարծիքը ԿԲ-ի մասին

Մնացել է նույնը	138	40.95%
Փոխվել է դեպի լավը	127	37.69%
ԴՊ	41	12.17%
Փոխվել է դեպի վատը	31	9.20%
Ընդամենը	**337**	**100%**

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Որքանո՞վ է արդյունավետ ԿԲ-ի վարած քաղաքականությունը ՀՀ-ում գների կայունության ապահովման մասով:

Մասամբ արդյունավետ է	142	41.16%
Արդյունավետ է	103	29.86%
Ընդհանրապես արդյունավետ չէ	61	17.68%
ԴՊ	39	11.30%
Ընդամենը	**345**	**100%**

ԿԲ-ն որքանո՞վ է կարողանում ֆինանսական համակարգը զերծ պահել ճգնաժամերից:

Մասամբ է կարողանում	202	58.72%
Ամբողջովին կարողանում է	81	23.55%
ԴՊ	31	9.01%
Ընդհանրապես չի կարողանում	30	8.72%
Ընդամենը	**344**	**100%**

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

Ո՞րն է ԿԲ հիմնական մարտահրավերը:

Ֆինանսական համակարգի կայունությունը	140	40.94%
Գների կայունության ապահովումը	99	28.95%
Հասարակության վստահության ամրապնդումը	95	27.78%
Գործազրկության նվազեցումը և տնտեսական աճը	69	20.18%
Քաղաքական մարտահրավերները	32	9.36%
ԴՊ	16	4.68%
Ընդամենը	**451**	**100%**

ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Որքանո՞վ եք տեղեկացված ՀՀ ԿԲ գործունեության մասին:

Ընդհանրապես տեղեկացված չեմ	900	75.19%
Մասամբ տեղեկացված եմ	232	19.38%
Տեղեկացված եմ	65	5.43%
ԴՊ	0	0.00%
Ընդամենը	**1197**	**100%**

Որքանո՞վ է Ձեզ հետաքրքրում ԿԲ-ի և նրա քաղաքականությունների մասին տեղեկությունը:

Ընդհանրապես հետաքրքիր չէ	860	71.49%
Մասամբ հետաքրքիր է	175	14.55%
Հետաքրքրում է	166	13.80%
ԴՊ	2	0.17%
Ընդամենը	**1203**	**100%**

ԿԲ-Ի ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հետևո՞ւմ եք արդյոք ԿԲ-ի վերաբերյալ տեղեկատվությանը

Երբեմն	136	40.84%
Հազվադեպ	102	30.63%
Երբեք	70	21.02%
Միշտ	25	7.51%
Ընդամենը	**322**	**100%**

ԿԲ ո՞ր պաշտոնական տեղեկատվական աղբյուրից եք օգտվում:

Ոչ մեկից	157	47.87%
Ֆեյսբուքյան էջ	104	31.71%
Պաշտոնական կայք	65	19.82%
Յութուբյան ալիք	28	8.54%
Լինքդինյան էջ	10	3.05%
Ընդամենը	**364**	**100%**

Հետևո՞ւմ եք ԿԲ պաշտոնատար անձանց մամուլի ասուլիսներին և հարցազրույցներին:

Ոչ, բայց տեսել եմ լրատվական անդրադարձներ	145	43.67%
Երբեք	97	29.22%
Երբեմն	71	21.39%
Միշտ	19	5.72%
Ընդամենը	**332**	**100%**

ԿԲ ՔՈՆԹԵՆԹԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՎԱՉԱՓ

Որքանո՞վ են հասկանալի ԿԲ-ի հաղորդագրությունները (Մամուլի ասուլիսները, հարցազրույցները):

Լիովին հասկանալի է	125	40.98%
Մասամբ հասկանալի է	124	40.66%
ԴՊ	51	16.72%
Ընդհանրապես հասկանալի չէ	5	1.64%
Ընդամենը	**305**	**100%**

Ի՞նչ բնույթի տեղեկատվություն կցանկանայիք ավելի շատ ստանալ ԿԲ-ից:

Ուսուցողական բնույթի կարճամետրաժ հոլովակներ	145	34.12%
Վիճակագրական տվյալներ	107	25.18%
Հիմնավորումներ որոշումների վերաբերյալ	80	18.82%
Վերլուծական նյութեր	75	17.65%
ԴՊ	18	4.23%
Ընդամենը	**425**	**100%**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Տեղեկատվություն ստանալու համար հիմնականում ո՞ր աղբյուրներից եք օգտվում:

Ֆեյսբուք	554	27.02%
Հեռուստացույց	453	22.10%
Յութուբ	278	13.56%
Լրատվական կայքեր	254	12.39%
Այլ	187	9.12%
Ընկերներ և ընտանիք	154	7.51%
Ռադիո	71	3.46%
Լինկդին	58	2.83%
Օրաթերթ, շաբաթաթերթ, ամսագիր	41	2.00%
Ընդամենը	**2050**	**100%**

Եթե սոցիալական կայքեր, ապա խնդրում ենք նշել՝ որ սոցիալական կայքերից...

Facebook	56	48.28%
Instagram	29	25.00%
Telegram	13	11.21%
Tik Tok	9	7.76%
տարբեր կայքերից	3	2.59%
news.am	2	1.72%
Ընդամենը	**116**	**100%**

Տեղեկատվություն ստանալու համար հիմնականում ո՞ր աղբյուրներից եք օգտվում:


Armenia TV	75	30.99%
Հանրային առաջին հեռուստաընկերություն	65	26.86%
Shant TV	49	20.25%
Տարբեր ալիքներ	13	5.37%
ATV	7	2.89%
Հայկական ալիքներ	6	2.48%
Կենտրոն	5	2.07%
5-րդ ալիք	3	1.24%
Ընդամենը	**233**	**100%**

ԿԲ-ն շարունակել է զարգացնել քաղաքացիների հետ փոխգործակցության մեխանիզմները՝ ապահովելով երկկողմ հաղորդակցություն և խթանելով հանրության ակտիվ ներգրավվածությունը: Զուգահեռաբար, ընդլայնվել է թվային հարթակների լսարանը՝ արտացոլելով հաղորդակցության շարունակական զարգացումը և թիրախային լսարանի աճը:

Միևնույն ժամանակ, հետադարձ կապի քանակական տվյալների վերլուծությունից զատ, փորձարկվել են նաև որակական՝ Կենտրոնական բանկի նկատմամբ վերաբերմունքի սենտիմենտ վերլուծության գործիքներ, որոնց վերջնական ներդրումն ու դրանց հիման վրա հաղորդակցման քաղաքականության մշակման ինստիտուցիոնալացումը նախատեսվում են առաջիկա տարիներին:

Գծապատկեր 3

ԶԼՄ-ներում Կենտրոնական բանկի վերաբերյալ սենտիմենտի գնահատական



ԿԲ հաղորդակցման ռազմավարությունը 2025 թվականին միտված է եղել ոչ միայն փաստերի փոխանցմանը, այլ նաև քաղաքականությունների հիմքում ընկած նպատակների և տրամաբանության ներկայացմանը:

Այս առումով, կարևոր է առանձնացնել կրիպտոակտիվների ոլորտի կարգավորման դաշտի ներդրման ժամանակ հաղորդակցումը ոլորտի ներկայացուցիչների հետ: Մասնավորապես, թե՛ «Կրիպտոակտիվների մասին» օրենքի ընդունումից առաջ, թե՛ դրա ընդունումից հետո՝ Կենտրոնական բանկի համապատասխան կարգավորման փաստաթղթերի հստակեցման յուրաքանչյուր փուլում, կազմակերպվել են հանդիպումներ ինչպես ոլորտը ներկայացնող մասնագիտական միավորումների, այնպես էլ առանձին ներկայացուցիչների հետ՝ վերջիններիս բարձրաձայնած հարցերը քննարկելու, առկա խնդիրներին լուծում տալու, ինչպես նաև սպասվող կարգավորման մոտեցումները պարզաբանելու համար:

Հասարակայնության հետ կապեր. 2025 թ. տվյալներ

ՖԵՅՍԲՈՒՔ


Հետևորդների թիվը

▲ 19041 (2025) 17067 (2024)

Հրապարակումների քանակը

▲ 196 (2025) 194 (2024)

Ըստ երկրների



Հայաստան	93.2%
ԱՄՆ	2.3%
Ռուսաստան	2.0%
Ֆրանսիա	0.6%
Գերմանիա	0.6%
Վրաստան	0.3%
Այլ	1.0%

Ըստ տարիքի



25-34	40.9%
35-44	31.0%
45-54	12.2%
18-24	10.7%
55-64	3.2%
65+	2.0%

ՖԲ հետևորդների թվով արտահայտված ժողովրդագրական տվյալները բացակայում են

ԿԲ պաշտոնական կայք

ՅՈՒԹՈՒԲ

Հետևորդների թիվը

▲ **1237** 2025 **970** 2024


Հրապարակումների քանակը

▲ **55** 2025 **45** 2024

Դիտումների ընդհանուր թիվը

▼ **33701** 2025 **77565** 2024

Ըստ երկրների



Հայաստան	80.7%
Ռուսաստան	1.4%
ԱՄՆ	0.7%
Վրաստան	0.3%
Գերմանիա	0.2%
Այլ	16.7%

Ըստ տարիքի

35-44	27.9%
25-34	18.9%
65+	18.8%
55-64	16.2%
45-54	14.3%
18-24	3.9%
13-17	0%

Ըստ սեռի

տղամարդ	60.8%
կին	39.3%

ԼԻՆՔԴԻՆ

Հետևորդների թիվը

▲ **19506** 2025 **14987** 2024

Մամուլ

Ասուլիսներ և միջոցառումներ
▲ 10 (2025) 9 (2024)

Հարցազրույցներ
▼ 2 (2025) 10 (2024)

Ռեպորտաժներ
▼ 22 (2025) 23 (2024)

ԶԼՄ գրավոր հարցումներ
▼ 59 (2025) 77 (2024)

Միջազգային հեղինակավոր պարբերականների նյութեր / հարցումներ
▶ 2 (2025)

Արձագանքի արագություն՝ օր
▲ 7.6 (2025) 7.2 (2024)

Կայքով ստացված հարցումներ
▼ 318 (2025) 454 (2024)

Սոցցանցերով ստացված հարցումներ
▲ 211 (2025) 209 (2024)

Մամուլի հաղորդագրություններ
▲ 39 (2025) 35 (2024)

ԿԲ-ում ստացված

Ընդհանուր զանգերի քանակ
▲ 13470 (2025) 12024 (2024)

	Հարցում	Խնդրանք	Բողոք	Իրազեկում	Առաջարկություն
2025	▲ 8037	▲ 3952	▲ 1476	▼ 2	▼ 3
2024	7117	3505	1317	52	33

Դիմումների քանակ
▲ 1514 (2025) 1204 (2024)

	Հարցում	Խնդրանք	Բողոք	Իրազեկում	Առաջարկություն
2025	▼ 143	▲ 313	▲ 1023	▼ 28	▼ 7
2024	198	312	652	33	9

ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ


Այցելուներ

2025 թվական

18 537

2024 թվականի համեմատությամբ

15 682 | +18%



աշակերտ/ուսանող	ուսուցիչ/ծնող	անհատներ	այցելուներ ուսումնական հաստատություններից	հյուրեր
8 415	1 546	5 482	1 885	1 209

«ՄԵԿ ՕՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆԻ ՄԿ


179

148
Ձինծառայող/սան/դասախոս

31
Ուսուցիչ



ԱՐՏԱԳՆԱ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



ԿԲ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Հայաստանի ֆինանսական համակարգի հաշտարարի
գրասենյակի կրթական ծրագրերի շրջանակներում

2 175
այցելու

ՖԲ ԷՋԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ


այցելությունների քանակ	հասանելիություն	դիտումները
8 336	**28 810**	**87 140**


ԴԻԼԻՋԱՆԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

այցելությունների քանակ	հասանելիություն	դիտումները
7 751	**24 312**	**75 669**

ԳԼՈՒԽ 6

ՉՀ ԿԲ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՐԺՈՒՅԹԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ, ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄ





Ինչպես նախորդող տարիներին, այնպես էլ հաշվետու տարում կանխիկ դրամի շրջանառության կազմակերպումն ու կարգավորումն իրականացվել են՝ ապահովելով հուսալիության, հարմարավետության, օպերատիվության և անընդհատության սկզբունքները: Կենտրոնական բանկն առևտրային բանկերի միջոցով կանխիկ դրամի նկատմամբ տնտեսության պահանջն անխափան բավարարել է՝ ըստ անհրաժեշտ ծավալների, կառուցվածքի, որակի և ժամկետների:

Հայաստանի Հանրապետությունում առևտրային բանկերի դրամարկղային սպասարկումը Կենտրոնական բանկն իրականացրել է Երևանում գտնվող գլխավոր գրասենյակի դրամարկղի և Դիլիջանի ու Սիսիանի տարածքային դրամարկղային կենտրոնների (այսուհետ՝ ՏԴԿ) միջոցով:

Գծապատկեր 4

Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառությունը 2025 թվականին



Երևանի դրամարկղային կենտրոն
96.2%
Սիսիանի ՏԴԿ
2.0%
Դիլիջանի ՏԴԿ
1.8%

Դրամանենգության դեմ պայքարի շրջանակներում Կենտրոնական բանկը շարունակել է համագործակցությունն իրավապահ մարմինների հետ: Կենտրոնական բանկում իրականացվել են կեղծ դրամանիշերի հայտնաբերման և փորձաքննության աշխատանքներ, որոնց արդյունքներով իրավապահ մարմիններին տրամադրվել են կեղծման եղանակների, կատարման ձևերի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ:

Դրամանենգության դեմ պայքարի շրջանակներում Կենտրոնական բանկը Հայաստանի բանկերի միության հետ համատեղ իրականացրել է գանձապահների ուսուցում: Ուսուցման առաջնային թիրախը համարվել են առևտրային բանկերի դրամարկղային կենտրոնների գանձապահները:

ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

կանխիկ դրամի զանգվածը

▲ 16.8%

ԿԲ ընդհանուր դրամարկղային շրջանառությունը

▼ 20.8%

ԿԲ ընդհանուր դրամարկղային շրջանառությունը

▼ 2,754.0 ՄԼՐԴ
2025

3,476.4 ՄԼՐԴ
2024

նվազում
722.4 ՄԼՐԴ

որից՝
Երևան

▼ 2,650.0 ՄԼՐԴ
2025

3,373.0 ՄԼՐԴ
2024

նվազում
723.0 ՄԼՐԴ

ՏԴԿ-ներ

▲ 104.0 ՄԼՐԴ
2025

103,4 ՄԼՐԴ
2024

աճ
0.6 ՄԼՐԴ

ԿԲ դրամարկղային շրջանառության ծավալը

3,8%

Ելքերը կազմել են ՏԴԿ-ների շրջանառության ընդհանուր ծավալի

59.1%

Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամի տեսակային կառուցվածքում փոփոխություններ 2024 թ-ի համեմատությամբ

1,000 դ	2,000 դ	5,000 դ	10,000 դ	20,000 դ	50,000 դ	100,000 դ
▲ +2.0%	▼ -7.4%	▲ +2.6%	▲ +10.8%	▲ +22.0%	▲ +2.2%	▲ +1.3%
				տեսակարար կշիռը թղթադրամների մեջ 73.9%		

Շրջանառության մեջ մետաղադրամների զանգվածը


37.4 ՄԼՐԴ

2024 թվականի համեմատությամբ
+3.2%

100 դ	200 դ	500 դ
▲ +18.2%	▲ +2.0%	▲ +7.8%
տեսակարար կշիռը մետաղադրամների մեջ 11.6%	տեսակարար կշիռը մետաղադրամների մեջ 20.1%	տեսակարար կշիռը մետաղադրամների մեջ 53.0%

Գծապատկեր 5

ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկ թղթադրամների տեսակային կառուցվածքը 2024-2025 թ. տարեվերջի դրությամբ /քանակային կտրվածքով մլն հատ/



Շրջանառության մեջ դրված հուշադրամների քանակը, հատ

▼ 900 2025 | 3900 2024

Ոսկե հուշադրամներ

▼ 600 2025 | 1100 2024

Արծաթե հուշադրամներ

▼ 300 2025 | 2800 2024

Արտաքին շուկայում իրացված հուշադրամների և ներդրումային դրամների քանակը, հատ

▲ 1.243.772 2025 | 710.739 2024

Ոսկե հուշադրամներ

▼ 299 2025 | 2044 2024

Արծաթե հուշադրամներ


▼ 160 2025 | 1300 2024

Ոսկե ներդրումային դրամներ

▲ 19.450 2025 | 14.806 2024


Արծաթե ներդրումային դրամներ

▲ 1.223.863 2025 | 692.589 2024



ԳԼՈՒԽ 7

ՉՉ ԿԲ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 113
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 114
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 115
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 116

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկատվություն 117
2. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփում 118
3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ 131
4. Տոկոսային եկամուտ 131
5. Տոկոսային ծախս 132
6. Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից 132
7. Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից 132
8. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից 132
9. Այլ եկամուտ 133
10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր 133
11. Այլ ծախսեր 133
12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ 134
13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ 140
14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ 140
15. Ներդրումներ 140
16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ 145
17. Հիմնական միջոցներ 147
18. Ոչ նյութական ակտիվներ 148
19. Այլ ակտիվներ տեղական արժույթով 148
20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ 149
21. Այլ փոխառություններ 149
22. Այլ պարտավորություններ տեղական արժույթով 150
23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության կառավարության հանդեպ 151
24. Թողարկված պարտքային արժեթղթեր 151
25. Կապիտալի կառավարում 151
26. Պայմանական պարտավորություններ 152
27. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն 152
28. Գործարքներ կապակցված կողմերի հետ 156
29. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 158
30. Ֆինանսական գործիքների իրական արժեք 158
31. Ռիսկերի կառավարում 162
32. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 170
33. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն 182

Վստահորեն
կերտելով ապագան

Ernst & Young CJSC
2, Vazgen Sargsyan St.
Kamar Business Center
Yerevan, 0010, Armenia
Tel.: +374 60 50 7777
ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վազգեն Սարգսյան փող., 2 շենք
«Կամար» Բիզնես Կենտրոն
Հեռ.՝ +374 60 50 7777

Անկախ աուդիտորական եզրակացություն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի

Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի («Բանկ») և նրա դուստր ընկերությունների (այսուհետ՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի էթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին: Մենք պահպանել ենք նաև էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այս պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Խմբի 2024 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2025թ. մարտի 28-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Վստահորեն
կերտելով ապագան

Ղեկավարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Աուդիտի կոմիտեի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Աուդիտի կոմիտեն պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:
Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

Վստահորեն
կերտելով ապագան

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Պլանավորում և իրականացնում ենք խմբի աուդիտը Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական միավորների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով՝ որպես համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու հիմք: Մենք պատասխանատու ենք աուդիտորական աշխատանքների ուղղորդման, ղեկավարման և վերանայման համար՝ խմբի աուդիտի իրականացման նպատակով: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Աուդիտի կոմիտեին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն
Աուդիտի բաժնի գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

30 մարտի, 2026 թ.

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Տոկոսային եկամուտ	4	**107,092,618**	97,880,728
Տոկոսային ծախս	5	**(56,483,285)**	(53,702,628)
Զուտ տոկոսային եկամուտ		**50,609,333**	44,178,100
Պարտքային կորուստների գծով ծախս	12, 15	**(3,630,497)**	(18,904,810)
Զուտ տոկոսային եկամուտ պարտքային կորուստների գծով պահուստից հետո		**46,978,836**	25,273,290
Բանկային գործառնություններից միջնորդավճարների գծով եկամուտ		**63,478**	60,325
Միջնորդավճարների գծով ծախս		**(764,805)**	(1,011,746)
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	6	**(7,133,989)**	(7,768,851)
Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից	7	**(558,329)**	349,450
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից	8	**30,645,859**	32,708,232
Այլ եկամուտ	9	**10,032,839**	9,516,567
Արժեզրկումից կորուստ ասոցիացված կազմակերպություններում ներդրումների գծով	15.3	**–**	(13,959,047)
Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	10	**(1,396,288)**	(5,519,044)
Այլ ծախսեր	11	**(27,586,362)**	(23,091,082)
Շահույթ մինչև հարկումը		**50,281,239**	16,558,094
Շահութահարկի գծով ծախս		**(2,622,482)**	(119,970)
Հաշվետու տարվա շահույթ		**47,658,757**	16,438,124
Շահույթը վերագրելի է՝			
Բանկի սեփականատիրոջը		**47,421,513**	16,146,230
Չվերահսկող բաժնեմասին		**237,244**	291,894
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող հոդվածներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից զուտ չիրացված օգուտ		**793,535**	43,756
Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ (վնասի)/եկամտի բաժնեմաս		**(65,632)**	52,251
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ	15	**935**	(39,774)
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ		**728,838**	56,233
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող հոդվածներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն		**271,280**	(33,133)
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ/(վնաս)		**271,280**	(33,133)
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ		**1,000,118**	23,100
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**48,658,875**	16,461,224
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտը վերագրելի է՝			
Բանկի սեփականատիրոջը		**48,416,580**	16,146,575
Չվերահսկող բաժնեմասին		**242,295**	314,649

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. մարտի 30-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից և ստորագրվել՝

Մարտին Գալստյան — Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ

Անուշ Գրիգորյան — Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական տնօրեն

1-33 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	Ծնթգ.	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Ակտիվներ արտարժույթով			
Կանխիկ դրամ		**13,653,100**	14,247,091
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	12.1	**1,130,684,171**	708,954,455
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	13	**800,509,074**	749,528,974
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	14	**109,149**	158,575
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	15.1	**12,010,268**	11,933,770
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	16	**67,839,348**	67,395,555
Այլ ակտիվներ		**70,814**	128,732
Ընդամենը ակտիվներ արտարժույթով		**2,024,875,924**	1,552,347,152
Ակտիվներ տեղական արժույթով			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ	12.2	**1,064,549,317**	1,156,222,367
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	15.2	**119,400,145**	159,104,142
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	15.3	**26,930,576**	21,468,457
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	15.4	**24,492,212**	20,684,983
Հիմնական միջոցներ	17	**60,087,509**	61,489,492
Ոչ նյութական ակտիվներ	18	**2,998,565**	3,711,591
Այլ ակտիվներ	19	**10,765,731**	10,992,486
Ընդամենը ակտիվներ տեղական արժույթով		**1,309,224,055**	1,433,673,518
Ընդամենը ակտիվներ		**3,334,099,979**	2,986,020,670
Պարտավորություններ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	20	**703,316,671**	528,591,755
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	23	**1,121,909**	1,394,968
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	14	**361,548**	–
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	16	**192,583,977**	199,084,273
Այլ փոխառություններ	21	**181,817,469**	188,180,354
Թողարկված պարտքային արժեթղթեր	24	**9,903,707**	10,291,731
Այլ պարտավորություններ		**397,151**	299,528
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով		**1,089,502,432**	927,842,609
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		**1,152,022,629**	986,167,919
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	20	**532,814,899**	594,842,767
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	23	**496,225,179**	427,589,657
Թողարկված պարտքային արժեթղթեր	24	**30,073,132**	27,032,225
Այլ պարտավորություններ	22	**4,701,691**	4,507,141
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով		**2,215,837,530**	2,040,139,709
Ընդամենը պարտավորություններ		**3,305,339,962**	2,967,982,318
Սեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	25	**100,000**	100,000
Գլխավոր պահուստ	25	**63,111,064**	53,626,761
ՀՀ կառավարության կողմից թողարկված մուրհակ	25	**111,583,062**	149,520,272
Այլ պահուստներ	25	**3,571,324**	2,576,257
Կուտակված վնաս		**(152,881,993)**	(190,819,203)
Բանկի սեփականատիրոջը վերագրելի զուտ ակտիվներ		**25,483,457**	15,004,087
Չվերահսկող բաժնեմաս		**3,276,560**	3,034,265
Ընդամենը սեփական կապիտալ		**28,760,017**	18,038,352
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**3,334,099,979**	2,986,020,670

1-33 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Բանկի սեփականատիրոջը վերագրելի							
Հազար ՀՀ դրամ	Թողարկված կապիտալ	Գլխավոր պահուստ	ՀՀ կառավարության կողմից թողարկված մուրհակ	Այլ պահուստներ	Կուտակված վնաս	Ընդամենը	Չվերահսկող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ին	100,000	50,397,515	162,437,256	2,575,912	(203,736,187)	11,774,496	2,101,964	13,876,460
Ընդամենը համապարփակ եկամուտ								
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	–	16,146,230	16,146,230	291,894	16,438,124
Այլ համապարփակ եկամուտ	–	–	–	345	–	345	22,755	23,100
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	–	–	–	345	16,146,230	16,146,575	314,649	16,461,224
2024թ. շահույթից բաշխման ենթակա մասնաբաժին՝ ՀՀ կառավարության կողմից թողարկված մուրհակի հետ հաշվանցման եղանակով *(Ծնթգ. 15.2, 25)*	–	–	(12,916,984)	–	–	(12,916,984)	–	(12,916,984)
Մասհանումներ 2024թ. շահույթից գլխավոր պահուստին	–	3,229,246	–	–	(3,229,246)	–	–	–
Ընդամենը գործառնություններ Բանկի հիմնադրի հետ	–	3,229,246	(12,916,984)	–	(3,229,246)	(12,916,984)	–	(12,916,984)
Դուստր կազմակերպության բաժնետիրական կապիտալի ավելացում	–	–	–	–	–	–	617,652	617,652
Ընդամենը դուստր կազմակերպության բաժնետիրական կապիտալի ավելացում	–	–	–	–	–	–	617,652	617,652
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ին	**100,000**	**53,626,761**	**149,520,272**	**2,576,257**	**(190,819,203)**	**15,004,087**	**3,034,265**	**18,038,352**
Ընդամենը համապարփակ եկամուտ								
Հաշվետու տարվա շահույթ	**–**	**–**	**–**	**–**	**47,421,513**	**47,421,513**	**237,244**	**47,658,757**
Այլ համապարփակ եկամուտ	**–**	**–**	**–**	**995,067**	**–**	**995,067**	**5,051**	**1,000,118**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**–**	**–**	**–**	**995,067**	**47,421,513**	**48,416,580**	**242,295**	**48,658,875**
2025թ. շահույթից բաշխման ենթակա մասնաբաժին՝ ՀՀ կառավարության կողմից թողարկված մուրհակի հետ հաշվանցման եղանակով *(Ծնթգ. 15.2, 25)*	**–**	**–**	**(37,937,210)**	**–**	**–**	**(37,937,210)**	**–**	**(37,937,210)**
Մասհանումներ 2025թ. շահույթից գլխավոր պահուստին	**–**	**9,484,303**	**–**	**–**	**(9,484,303)**	**–**	**–**	**–**
Ընդամենը գործառնություններ Բանկի հիմնադրի հետ	**–**	**9,484,303**	**(37,937,210)**	**–**	**(9,484,303)**	**(37,937,210)**	**–**	**(37,937,210)**
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ին	**100,000**	**63,111,064**	**111,583,062**	**3,571,324**	**(152,881,993)**	**25,483,457**	**3,276,560**	**28,760,017**

1-33 ծանոթագրություններր հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	**Ծնթգ.**	**2025թ.**	2024թ.
Գործառնական գործունեություն			
Շահույթ մինչև հարկումը		**50,281,239**	16,558,094
Ճշգրտումներ՝ հաշվետու տարվա շահույթը զուտ դրամական հոսքերին համաձայնեցնելու նպատակով			
Մաշվածություն և ամորտիզացիա	11, 17, 18	**3,803,279**	3,601,783
Ոչ նյութական ակտիվների արժեզրկում	18	**697,889**	35,000
Վնաս օտարումից		**82,303**	5,134
Տոկոսային եկամուտ	4	**(107,092,618)**	(97,880,728)
Տոկոսային ծախսեր	5	**56,483,285**	53,702,628
Զուտ վնաս արտարժույթի վերագնահատումից	6	**13,097,808**	13,458,226
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերաչափումից	8	**(30,645,859)**	(32,708,232)
Պարտքային կորուստների գծով ծախս	12, 15	**3,630,497**	18,904,810
Արժեզրկումից կորուստ ասոցիացված կազմակերպություններում ներդրումների գծով	15.3	**–**	13,959,047
Եկամուտ ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից	15.3	**(541,474)**	(830,194)
Ստացված տոկոսներ		**102,296,910**	92,267,660
Վճարված տոկոսներ		**(56,332,817)**	(54,561,084)
Վճարված շահութահարկ		**(2,009,616)**	(2,164,263)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		**33,750,826**	24,347,882
Գործառնական ակտիվների զուտ (աճ)/նվազում			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		**(47,542)**	(781,270)
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ և ածանցյալ ֆինանսական գործիքներ		**(23,356,343)**	15,115,388
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով		**92,158,451**	(317,174,993)
Այլ ակտիվներ		**241,987**	(108,616)
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		**165,854,710**	74,713,107
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ		**118,030,072**	208,162,041
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ		**69,148,938**	37,624,087
Այլ պարտավորություններ		**829,991**	34,613
Զուտ դրամական հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից		**456,611,090**	41,932,238
Ներդրումային գործունեություն			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		**(3,430,205)**	(3,324,181)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		**15,600**	21,800
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերում		**(12,223,100)**	(8,821,191)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մարում		**11,247,757**	388,475
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	15,3	**(5,000,684)**	–
Շահաբաժիններ ասոցիացված կազմակերպություններից		**25,155**	–
Զուտ դրամական հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում		**(9,365,477)**	(11,735,097)
Ֆինանսավորման գործունեություն			
Փոխառությունների ստացում	33	**10,198,763**	13,432,118
Փոխառությունների մարում	33	**(30,868,198)**	(25,461,857)
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	33	**12,310,754**	17,455,110
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	33	**(9,388,510)**	(3,000,000)
Դուստր կազմակերպության բաժնետիրական կապիտալի ավելացում (չվերահսկող բաժնեմաս)		**–**	617,652
Վճարումներ վարձակալության գծով	33	**(166,503)**	(115,683)
Զուտ դրամական հոսքեր՝ (օգտագործված)/ստացված ֆինանսավորման գործունեությունից		**(17,913,694)**	2,927,340
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		**(8,380,712)**	(14,165,777)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**420,951,207**	18,958,704
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	29	**719,257,870**	700,299,166
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	29	**1,140,209,077**	719,257,870

1-33 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ «Բանկ» կամ «Կենտրոնական բանկ») իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքին (այսուհետ՝ «Օրենք») և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին համապատասխան:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան փող., 6 շենք: Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը 2025 թվականի ընթացքում կազմել է 767 (2024 թ-ին՝ 779):

Բանկը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Բանկի գործունեության ֆինանսական արդյունքները, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի կառուցվածքը սահմանվում են Բանկի գործառույթներով:

Օրենքի համաձայն՝ Բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումն է: Ի լրումն իր հիմնական խնդրի, Բանկի այլ խնդիրներն են.

- Ապահովել Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ,
- Ստեղծել և զարգացնել գործուն վճարահաշվարկային համակարգ,
- Կազմակերպել և կարգավորել Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի թողարկումը և դրամաշրջանառությունը,
- Կազմակերպել և կարգավորել փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումները,
- Ապահովել ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմաններ,
- Ապահովել ֆինանսական համակարգում ազատ և արդար տնտեսական մրցակցություն և այլն:

Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը.

- Հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ «Կառավարություն») ֆինանսական գործակալ և խորհրդատու,
- Լիցենզավորում է առևտրային բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց և կազմակերպությունները, վերահսկում և կարգավորում է դրանց գործունեությունը,
- Տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները և այլն:

Հայաստանի Հանրապետության սահմանադրության և Օրենքի համաձայն Բանկի բարձրագույն կառավարման մարմինը Խորհուրդն է (այսուհետ՝ «Խորհուրդ»): Խորհուրդը բաղկացած է ութ անդամներից, ներառյալ նախագահ, նախագահի երկու տեղակալներ և հինգ անդամներ: Նախագահը, նախագահի տեղակալները և Խորհրդի այլ անդամները ընտրվում են Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից՝ իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ, վեց տարի ժամկետով:

(ա) Հայաստանի տնտեսական միջավայրը

2025 թվականի ընթացքում ՀՀ-ում 12-ամսյա գնաճն աստիճանաբար արագացել է: Գնաճի նման վարքագծին հիմնականում նպաստել են համաշխարհային տնտեսությունից փոխանցվող գնաճային ճնշումները, որոնք տարեվերջին որոշակիորեն մեղմվել են: Միևնույն ժամանակ, ներմուծվող ոչ պարենային ապրանքներից եկող գնանկումային ճնշումները տարվա ընթացքում աստիճանաբար չեզոքացել են՝ մայիսից մտնելով թույլ գնաճային տիրույթ:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

(ա) Հայաստանի տնտեսական միջավայրը (շարունակություն)

2025 թվականին ՀՀ-ում տնտեսական ակտիվությունը որոշակիորեն ավելացել է՝ պայմանավորված գերազանցապես շինարարության և ծառայությունների ոլորտներում արձանագրված բարձր աճով, ինչի պարագայում տարեկան տնտեսական աճը կազմել է 7.2%, այդ թվում՝ պայմանավորված նաև որոշ ժամանակավոր, ոչ կառուցվածքային գործոնների վերականգնմամբ:

Զուգահեռաբար, շարունակվել է աշխատաշուկայում անհաշվեկշռվածությունների աստիճանական թուլացման գործընթացը՝ արտահայտվելով աշխատավարձերի աճի կայունացմամբ և կոշտ գներով բնութագրվող ծառայությունների գնաճի՝ թիրախից փոքր-ինչ ցածր մակարդակում պահպանմամբ: Այս պայմաններում գնաճային սպասումները շարունակել են կայուն նվազել՝ մոտենալով նպատակային մակարդակին:

Ելնելով ստեղծված իրավիճակից և առաջնորդվելով միջնաժամկետում գների կայունության ապահովման իր հանձնառությամբ, ինչպես նաև առկա անորոշություններից բխող հնարավոր ռիսկերը խելամիտ կառավարելու նպատակով՝ 2025 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է աստիճանաբար կարգավորել դրամավարկային պայմանները՝ նվազեցնելով քաղաքականության տոկոսադրույքը, ընդհանուր առմամբ, 0.5 տոկոսային կետով: Արդյունքում, 12-ամսյա գնաճն ավելացել է՝ 2025 թ. սկզբի 1.5%-ից դեկտեմբերին հասնելով 3.3%-ի:*

Խումբը շարունակում է գնահատել տնտեսական պայմանների փոփոխության ազդեցությունն իր գործունեության, ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

* Տեղեկատվությունը վերցվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 24.02.2026թ. թիվ 32 որոշմամբ հաստատված Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունից (2025թ. 1-ին եռամսյակ – 2025թ. 4-րդ եռամսյակ):

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտներ) համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և իր դուստր կազմակերպությունների համար (այսուհետ միասին՝ «Խումբ»):

(բ) Պատրաստման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների, ներառյալ ածանցյալ ֆինանսական գործիքները: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Այդ դրույթները հետևողականորեն կիրառվել են Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների կողմից ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ:

Բացառիկ դեպքերում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության մանրամասն բացահայտումը կարող է հանգեցնել ՀՀ ամբողջ ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության կորստի: Հետևաբար, չնայած նման գործառնությունների ֆինանսական արդյունքներն արտացոլված են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, Խումբը կարող է միայն սահմանափակ բացահայտումներ ներկայացնել այդ գործառնությունների վերաբերյալ, այն չափով, որքանով այդ տեղեկատվությունը էական չէ Խմբի ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների հասկանալու համար:

(գ) Համախմբման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից հսկվող ներդրման օբյեկտներն են: Խումբը հսկողություն ունի ներդրման օբյեկտի նկատմամբ, երբ այդ ներդրման օբյեկտում իր ներգրավվածության արդյունքում այն ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և ներդրման օբյեկտի նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(գ) Համախմբման հիմունքներ (շարունակություն)

Մասնավորապես, Խումբը հսկողություն ունի միայն այն դեպքում, երբ ունի.

- Կարողություն ուղղորդելու ներդրման օբյեկտի հատույցների վրա էական ազդեցություն ունեցող գործունեությունը,
- Ներդրման օբյեկտում իր ներգրավվածության արդյունքում փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և,
- Ներդրման օբյեկտի նկատմամբ իր իշխանությունն օգտագործելու կարողություն՝ ներդրողի հատույցների գումարն իր ազդեցությանը ենթարկելու նպատակով:

Խմբի ընկերությունների միջև գործարքները, մնացորդները և գործարքներից չիրացված օգուտը բացառվում են, չիրացված վնասը նույնպես բացառվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ ծախսը չի կարող վերականգնվել: Բանկը և վերջինիս բոլոր դուստր կազմակերպությունները կիրառում են հաշվապահական հաշվառման միասնական քաղաքականություն՝ Խմբի քաղաքականությանը համահունչ:

Դուստր կազմակերպության սեփականության բաժնեմասի փոփոխությունը, որը չի հանգեցնում հսկողության փոփոխության, հաշվառվում է որպես սեփական կապիտալի գործարք: Վնասը վերագրելի է չվերահսկող բաժնեմասին նույնիսկ, եթե դա հանգեցնում է բացասական մնացորդի:

Երբ Խումբը կորցնում է վերահսկողությունը դուստր կազմակերպության նկատմամբ, ցանկացած պահպանված ներդրում ճանաչվում է վերահսկողության կորստի ամսաթվի իրական արժեքով:

Խումբը չափում է չվերահսկող բաժնեմասը, որն իրենից ներկայացնում է ներկայիս սեփականության մասնաբաժինը և կրողին տալիս է զուտ ակտիվների նկատմամբ համամասնական իրավունք լուծարման դեպքում՝ յուրաքանչյուր առանձին գործառնության արժեքի սկզբունքով՝ հիմք ընդունելով ձեռքբերվող կազմակերպության զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությունը կամ իրական արժեքը:

Ասոցիացված կազմակերպություններ

Խումբն ունի բաժնեմասեր ասոցիացված կազմակերպություններում, որոնցից ամենախոշորը «ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ-ն է: Ասոցիացված ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները կազմվում են նույն հաշվետու ժամանակաշրջանի համար, ինչ Խմբինը: Ասոցիացված ընկերությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունները, ընդհանուր առմամբ համապատասխանում են Խմբի քաղաքականությանը: Կիրառելի լինելու դեպքում կատարվում են ճշգրտումներ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունները համապատասխանեցնելու և կազմակերպության շահույթի կամ վնասի՝ Խմբի բաժնեմասը ճանաչելու համար:

Ասոցիացված կազմակերպություններն այն կազմակերպություններն են, որոնց նկատմամբ Խումբն ունի նշանակալի ազդեցություն (ուղղակիորեն կամ անուղղակիորեն), սակայն չունի հսկողություն՝ տիրապետելով քվեարկող բաժնետոմսերի 20-ից 50 տոկոսին: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով որպես ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում՝ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Ասոցիացված կազմակերպության հաշվեկշռային արժեքը ներառում է ձեռքբերման պահին որոշված գուդվիլը՝ հանած արժեզրկումից կուտակված կորուստները (առկայության դեպքում): Ասոցիացված կազմակերպություններից ստացված շահաբաժինները նվազեցնում են ասոցիացված կազմակերպություններում ներդրման հաշվեկշռային արժեքը: Ձեռքբերումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի բաժնեմասի այլ փոփոխությունները ճանաչվում են հետևյալ կերպ. (i) ասոցիացված ընկերության շահույթում կամ վնասում Խմբի բաժնեմասը ներառվում է տվյալ տարվա համախմբված շահույթում կամ վնասում՝ «այլ եկամուտ»/«այլ ծախսեր» հոդվածներում, (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում Խմբի բաժնեմասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ առանձին տողով, (iii) ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի՝ Խմբի բաժնեմասի բոլոր այլ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում «այլ եկամուտ»/«այլ ծախսեր» հոդվածներում *(Ծանոթագրություն 9)*:

Այնուամենայնիվ, եթե ասոցիացված կազմակերպության վնասում Խմբի բաժնեմասը հավասար է կամ գերազանցում է ասոցիացված կազմակերպությունում ներդրումը, ներառյալ ցանկացած այլ չապահովված դեբիտորական պարտքերը, Խումբն այլևս չի ճանաչում հետագա վնասներ, բացառությամբ այն դեպքերի, երբ ստանձնել է պարտավորություն կամ կատարել է վճարումներ ասոցիացված կազմակերպության անունից:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(գ) Համախմբման հիմունքներ (շարունակություն)

Ասոցիացված կազմակերպություններ (շարունակություն)

Երբ Խումբը դադարում է ունենալ նշանակալի ազդեցություն, կազմակերպությունում մնացած բաժնեմասը վերագնահատվում է իրական արժեքով, և հաշվեկշռային արժեքի փոփոխությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Ի լրումն, այդ կազմակերպության գծով նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած գումար հաշվառվում է այնպես, կարծես Խումբն ուղղակիորեն օտարել է համապատասխան ակտիվները կամ պարտավորությունները: Դա կարող է նշանակել, որ նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարները վերադասակարգվում են շահույթի կամ վնասի: Եթե ասոցիացված կազմակերպությունում բաժնեմասը նվազում է, սակայն նշանակալի ազդեցությունը պահպանվում է, ապա, կիրառելի լինելու դեպքում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված գումարները համամասնությամբ վերադասակարգվում են շահույթի կամ վնասի:

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի դուստր կազմակերպությունները ներկայացված են ստորև.

Անվանումը	Հիմնադրման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող % 2025թ.	Վերահսկվող % 2024թ.	Հիմնադրման ամսաթիվ
«Արմենիան Քարդ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	**55**	55	մարտ 2000թ.
«Հայինկասացիա» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Դրամական միջոցների փոխադրումներ	**100.00**	100.00	ապրիլ 1998թ.
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիփոթեքային վերաֆինանսավորում	**100.00**	100.00	հունիս 2009թ.
«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիփոթեքային վերաֆինանսավորում	**100.00**	100.00	փետրվար 2010թ.
«Փոքր և միջին բիզնեսի վարկավորման աջակցություն» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վարկավորման աջակցություն	**100.00**	100.00	դեկտեմբեր 2010թ.
«Ավտոտրանսպորտային միջոցների միասնական պատուհան» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Ապահովագրական ենթակառուցվածքներ ի աջակցություն	**100.00**	100.00	դեկտեմբեր 2013թ.
«Ստակ Մանի Տրանսֆեր» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	**100.00**	100.00	դեկտեմբեր 2017թ.

Հետևելով *Ծանոթագրություն 31-ում* բացահայտված Խմբի քաղաքականությանը՝ 2020թ. մարտին Խումբը հայտարարել էր, որ մտադիր էր լուծարման միջոցով օտարել իր ներդրումը կանխիկ դրամական առաքումներ/փոխադրումներ իրականացնող դուստր կազմակերպությունում: 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դուստր կազմակերպությունը դեռևս գտնվում է լուծարման գործընթացում:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառելու ընթացքում ղեկավարությունն օգտագործել է իր դատողությունները և կատարել է գնահատումներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները որոշելիս: Կիրառված էական դատողությունները և գնահատումները հետևյալն են.

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում (շարունակություն)

Իրական արժեք

Եթե ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, այն որոշվում է տարբեր գնահատման մեթոդների, այդ թվում՝ մաթեմատիկական մոդելների կիրառմամբ: Այդ մոդելներում օգտագործվող ելակետային տվյալները հիմնված են դիտելի շուկաների տվյալների վրա, եթե դա հնարավոր է, հակառակ դեպքում իրական արժեքը որոշելու համար կիրառում են դատողություններ (Ծանոթագրություն 30):

Արժեզրկման գնահատում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների բոլոր դասերի գծով արժեզրկումից կորուստների գնահատումը պահանջում է դատողությունների կիրառում, մասնավորապես ապագա դրամական միջոցների հոսքերի գումարի և ժամկետների և գրավի արժեքի գնահատում՝ արժեզրկումից կորուստները և պարտքային ռիսկի նշանակալի աճը որոշելիս: Այդ գնահատումների հիմքում ընկած են մի շարք գործոններ, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Խմբի ակնկալվող պարտքային կորուստների («ԱՊԿ») հաշվարկները բարդ մոդելների արդյունք են, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ ելակետային փոփոխականների ընտրության և դրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՊԿ մոդելների՝ հաշվապահական դատողություններ և գնահատումներ պարունակող տարրերը հետևյալն են.

- Խմբի ներքին վարկային գնահատման մոդելը, որը սահմանում է առանձին դասերի համար դեֆոլտի հավանականությունները,
- Խմբի գնահատման չափանիշները և որակական գնահատումը, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, և հետևաբար, ֆինանսական ակտիվների գծով պահուստները պետք է չափվեն ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող պարտքային կորստի (ԱԿԱՊԿ) հիմունքով,
- ԱՊԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և ելակետային տվյալների ընտրությունը:

Ասոցիացված կազմակերպություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է *Ծանոթագրություն 15.3-ում*:

(ե) Նոր ստանդարտների կիրառում

Խումբը վաղաժամ չի կիրառել հրապարակված, սակայն այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար դեռևս չգործող նոր ստանդարտները, մեկնաբանությունները կամ փոփոխությունները: 2025 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտնող ստանդարտները և փոփոխությունները Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա չեն ունեցել էական ազդեցություն:

(զ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը նաև Բանկի և Խմբի յուրաքանչյուր համախմբված կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է և այն արժույթը, որով ներկայացված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

(է) Արտարժույթի փոխարկում և արտարժութային հոդվածների ներկայացում

Արտարժույթով իրականացված գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով՝ գործարքի օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(է) Արտարժույթի փոխարկում և արտարժութային հոդվածների ներկայացում (շարունակություն)

Արտարժույթի փոխարկումից ստացված օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս): Տարեվերջի փոխարժեքով վերագնահատում կատարելու սկզբունքը չի կիրառվում սկզբնական արժեքով չափվող ոչ դրամային հոդվածների նկատմամբ:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են իրական արժեքով, ներառյալ՝ բաժնային ներդրումները, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

Արտարժույթով իրականացվող գործարքների պայմանագրային փոխարժեքի և այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքի տարբերությունը ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության մեջ:

Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
ՀՀ դրամ / 1 ԱՄՆ դոլար	**381.36**	396.56
ՀՀ դրամ / 1 եվրո	**449.01**	413.89
ՀՀ դրամ / 1 բրիտանական ֆունտ	**515.60**	499.27
ՀՀ դրամ / 1 ՀՓԻ (Հատուկ փոխառության իրավունք)	**522.73**	517.17
ՀՀ դրամ / 1 ճապոնական իեն	**2.447**	2.514
ՀՀ դրամ / 1 ռուսական ռուբլի	**4.87**	3.71

(ը) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական հոսքերի մասին հաշվետվության համար դրամական միջոցները և դրանց համարժեքներն այն միավորներն են, որոնք ազատ փոխարկելի են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և ենթակա են արժեքի փոփոխության ոչ նշանակալի ռիսկի: Խումբը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում արտարժույթով կանխիկ դրամը, բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները, մինչև երեք ամիս մարման ժամկետ ունեցող ավանդները և ԱՄՀ-ում տեղաբաշխված ՀՓԻ միջոցները: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

(թ) Ֆինանսական գործիքներ. չափման հիմնական պայմաններ

Խումբն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները և ածանցյալ գործիքները չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքը բացահայտված է *Ծանոթագրություն 30-ում*:

Իրական արժեքն այն գինն է, որը կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում: Իրական արժեքի լավագույն վկայությունը գործող շուկայում գնանշվող գինն է: Գործող շուկան այն շուկան է, որտեղ ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(թ) Ֆինանսական գործիքներ. չափման հիմնական պայմաններ (շարունակություն)

Գործող շուկայում վաճառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող գնի և Խմբի կողմից պահվող քանակի արտադրյալ: Դա տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայում բնականոն օրական առքուվաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնորոշված գնի վրա: Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական միջոցների հոսքերի մոդելները կամ անկախ կողմերի միջև վերջերս իրականացված գործարքների կամ ներդրման օբյեկտների ֆինանսական տվյալների դիտարկման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են՝ չափելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ:

Սկզբնական չափում

Խումբն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է, ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից՝ չափումն իրականացնելով.

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Եթե սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվների իրական արժեքը համարվում է գործարքի գնից տարբեր, ապա այն չափվում է՝ զեղչելով պայմանագրային դրամական միջոցների հոսքերը գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության համար կիրառվող վերաֆինանսավորման տոկոսադրույքով կամ ոչ ռիսկային տոկոսադրույքով: Իրական արժեքի և անվանական արժեքի միջև տարբերությունը հաշվառվում է որպես վնաս շահույթում կամ վնասում՝ ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման պահին, եթե Բանկը հանդես է գալիս ֆինանսական համակարգի կարգավորողի կարգավիճակում: Այն դեպքերում, երբ Բանկը հանդես է գալիս որպես բաժնետեր, տարբերությունը ճանաչվում է որպես լրացուցիչ ներդրում ասոցիացված կազմակերպությունների սեփական կապիտալում:

Խումբն իր ածանցյալ գործիքները և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը կարող է ֆինանսական գործիքները նախորոշել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի չափման կամ ճանաչման հետ կապված անհամապատասխանությունը:

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր կերպով գնումները և վաճառքները ճանաչվում են վերջնահաշվարկի ամսաթվին: Կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվների գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվի մատակարարում՝ տվյալ շուկայում սովորական կանոններով կամ ընդունված կարգով սահմանված ժամկետներում:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Որպես առևտրային նպատակով պահվող դասակարգված ֆինանսական գործիքները ներառված են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ» դասում: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե ձեռք են բերվել կարճ ժամանակամիջոցում վաճառելու նպատակով: Ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե չեն հանդիսանում հեջավորման նախորոշված և արդյունավետ գործիք: Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների գծով օգուտները կամ վնասները, այդ թվում՝ պարտքային արժեթղթերի առքուվաճառքից գոյացած տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով:

Խումբն իր բնականոն գործունեության ընթացքում արժութային և կապիտալի շուկաներում օգտագործում է տարատեսակ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ ֆորվարդները, ֆյուչերսները և սվոփերը: Այդ ֆինանսական գործիքները պահվում են առևտրային նպատակով և հաշվառվում են իրական արժեքով:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(թ) Ֆինանսական գործիքներ. չափման հիմնական պայմաններ (շարունակություն)

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման կամ գնորոշման մոդելների հիման վրա, որոնք հաշվի են առնում դրանց հիմքում ընկած գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքները և այլ գործոններ:

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված՝ ամորտիզացված արժեքով չափվող միջոցներ և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Խումբը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցները և այլ ֆինանսական ակտիվները չափում է ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև:

Բիզնես մոդելի գնահատում

Խմբի բիզնես մոդելը որոշվում է այն մակարդակով, որը լավագույնս արտացոլում է, թե ինչպես են ֆինանսական ակտիվների խմբերը կառավարվում՝ որոշակի բիզնես նպատակի հասնելու համար:

Խմբի բիզնես մոդելը չի գնահատվում գործիք առ գործիք հիմունքով և որոշվում է այլ ավելի բարձր՝ համախմբված պորտֆելների մակարդակով և հիմնվում է այնպիսի դիտելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- Ինչպես են գնահատվում բիզնես մոդելի և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների արդյունքները և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում առանցքային կառավարչական անձնակազմին,
- Ռիսկերը, որոնք ազդում են բիզնես մոդելի վրա (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների վրա) և, մասնավորապես, թե ինչպես են այդ ռիսկերը կառավարվում,
- Վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները:

Բիզնես մոդելը գնահատվում է ողջամտորեն ակնկալվող սցենարների հիման վրա՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերն իրացվում են Խմբի սկզբնական ակնկալիքներից տարբերվող եղանակով, Խումբը չի փոխում այդ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հաշվի է առնում այդ տեղեկատվությունը հետագայում նոր սկզբնավորված կամ նոր ձեռք բերված ֆինանսական ակտիվները գնահատելիս:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ՝ Խումբը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են:

Այդ գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին և կարող է փոփոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե տեղի են ունենում մայր գումարի մարումներ կամ հավելավճարի/զեղչի ամորտիզացիա):

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(թ) Ֆինանսական գործիքներ. չափման հիմնական պայմաններ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված՝ ամորտիզացված արժեքով չափվող միջոցներ և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են (շարունակություն)

Վարկային պայմանագրում, սովորաբար, տոկոսի ամենանշանակալի տարրերն են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը և պարտքային ռիսկը: Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Խումբը դատողություն է կիրառում և դիտարկում համապատասխան գործոնները, ինչպիսիք են արժույթը, որով արտահայտված է ֆինանսական ակտիվը, և ժամկետը, որի համար սահմանվում է տոկոսադրույքը:

Ի հակադրություն, պայմանագրային պայմանները, որոնց արդյունքում առաջանում է շատ աննշան ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի տատանողականություն, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում պայմանագրային դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ են: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- Ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքելու և թե ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համեմատ: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտները կամ վնասներն այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում են շահույթ կամ վնաս:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում,և շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում որպես կուտակված արժեզրկում ճանաչվում է այն պահուստին հավասար գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով՝ շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասն ակտիվի ապաճանաչումից հետո վերադասակարգվում է որպես շահույթ կամ վնաս:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքներ

Սկզբնական ճանաչումից հետո Խումբը երբեմն ընտրում է իր որոշ բաժնային ներդրումներն անշրջելիորեն դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են ՀՀՄՍ 32 *«Ֆինանսական գործիքներ. Ներկայացում»* ստանդարտի կապիտալի գործիքի սահմանմանը և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(թ) Ֆինանսական գործիքներ. չափման հիմնական պայմաններ (շարունակություն)

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված՝ ամորտիզացված արժեքով չափվող միջոցներ և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքներ (շարունակություն)

Այդ բաժնային գործիքների գծով օգուտը և վնասը երբեք չեն վերադասակարգվում որպես շահույթ կամ վնաս: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ հաստատվում է վճարման իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով, որի դեպքում այդ օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման տեսանկյունից գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթ:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, բացառությամբ բացառիկ դեպքերը, երբ Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ներգրավված փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղադրիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրի արդյունքում Խումբն ունենում է պարտավորություն տրամադրել դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ տիրապետողին, կամ այլ կերպ կատարել պարտավորությունները՝ բացի դրամական միջոցների հաստատուն գումարը կամ այլ ֆինանսական ակտիվները սեփական բաժնային գործիքների հաստատուն քանակով փոխարինելուց: Այդ գործիքները ներառում են ֆինանսական և այլ հաստատությունների ավանդները և հաշիվների մնացորդները, պարտավորությունները Կառավարության և ԱՄՀ-ի հանդեպ, այլ փոխառու միջոցները և թողարկված պարտքային արժեթղթերը:

Սկզբնական ճանաչումից հետո փոխառու միջոցների հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(ժ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ:

Արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր», իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ ֆինանսական և այլ հաստատությունների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է հետգնման պայմանագրի գործողության ընթացքում:

Հետգնման պայմանագրերի ներքո («հակադարձ ռեպո պայմանագրեր») արժեթղթերի ձեռքբերման համար վճարված միջոցները գրանցվում են որպես բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ: Վաճառքի և հետգնման գնի միջև տարբերությունը՝ ճշտված տոկոսադրույքով և գործընկերոջ կողմից ստացվող շահաբաժնի եկամտով, դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում է ռեպո պայմանագրերի ողջ գործողության ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(հ) Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ

Բանկի կողմից թողարկված շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են անվանական արժեքով՝ որպես պարտավորություն դրանց տիրապետողների հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման պահին: Տեղական արժույթով կանխիկը դրամարկղում նվազեցվում է շրջանառության մեջ գտնվող թղթադրամների և մետաղադրամների մնացորդից:

(ղ) Դրամագիտական արժեքներ

Դրամագիտական արժեքները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Դրամագիտական արժեքների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է մետաղադրամների ձեռքբերման ծախսումները և նրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Վաճառքի ժամանակ գնահատված վաճառքից մուտքերի գումարը ճանաչվում է որպես եկամուտ ընթացիկ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, իսկ հաշվեկշռային արժեքի գումարը ճանաչվում է որպես ծախս ընթացիկ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

(խ) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները, բացառությամբ հողի, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով: Սկզբնական արժեքում ներառվում են սարքավորման փոխարինվող մասի ծախսումները, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Նմանապես, խոշոր կապիտալ ներդրումներ կատարելիս ծախսումները ճանաչվում են հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում որպես փոխարինում, եթե բավարարվում են ճանաչման չափանիշները:

Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերը անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, Խումբն այս մասերը ճանաչում է որպես առանձին ակտիվներ՝ իրենց առանձին օգտակար ծառայության ժամկետներով, և համապատասխանաբար հաշվարկում է մաշվածություն:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված բոլոր ծախսումները շահույթում կամ վնասում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

Սկզբնապես ճանաչված հիմնական միջոցի միավորը և ցանկացած նշանակալի մասն ապաճանաչվում է օտարման ժամանակ կամ այն դեպքում, երբ ակտիվի օգտագործումից կամ օտարումից ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես օտարումից զուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է շահույթում կամ վնասում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Մաշվածություն

Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի օգտագործման համար մատչելի դառնալու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է կիրառելով գծային մեթոդը՝ 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների օգտակար ծառայության հետևյալ ժամկետների ընթացքում.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Շենքեր, ներառյալ սպասարկման համակարգեր	**3-80 տարի**	3-80 տարի
Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	**2-20 տարի**	2-15 տարի
Փոխադրամիջոցներ	**8 տարի**	5 տարի
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	**1-5 տարի**	1-5 տարի

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(խ) Հիմնական միջոցներ (շարունակություն)

Մաշվածություն (շարունակություն)

Ակտիվի մնացորդային արժեքն այն գնահատված գումարն է, որը Խումբը կստանա տվյալ պահին ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լիներ այն տարիքի և վիճակի, որն ակնկալվում էր, որ կլիներ դրա օգտակար ծառայության վերջում: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և, անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

(ձ) Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը և արտոնագրերը: Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվների սկզբնական ճանաչումն իրականացվում է սկզբնական արժեքով: Բիզնեսի միավորման արդյունքում ձեռք բերված ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքը վերջինների իրական արժեքն է ձեռքբերման ամսաթվին: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, որը կազմում է մինչև 10 տարի, և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ արժեզրկման հայտանիշի առկայության դեպքում:

Համակարգչային ծրագրերի սպասարկման ծախսերը ճանաչվում են շահույթում կան վնասում կատարվելու ժամանակ:

(կ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ասոցիացված կազմակերպություններում ներդրումների և այլ ոչ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը արժեզրկված լինելու տեսանկյունից: Ներդրումների և այլ ոչ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի ոչ փոխհատուցվող լինելու հայտանիշների առկայության դեպքում իրականացվում է արժեզրկման ստուգում:

Արժեզրկման ստուգումն իրականացվում է համեմատելով ակտիվի հաշվեկշռային արժեքը վերջինիս փոխհատուցվող գումարի հետ, որը որոշվում է որպես իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը որոշվում է գնահատելով ապագա դրամական միջոցների հոսքերը, որոնք ակնկալվում է ստանալ ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից և այլ ոչ ֆինանսական ակտիվներից, և զեղչելով դրանք մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով համապատասխան զեղչման դրույքը:

Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը, ակտիվը համարվում է արժեզրկված, և հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումների և այլ ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկման հակադարձումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(հ) Հարկում

Բանկն ազատված է բոլոր հարկերից և տուրքերից, բացառությամբ ապրանքների ներմուծման համար մաքսային սահմանին վճարման ենթակա հարկերից, մաքսատուրքերից և մաքսավճարներից: Միաժամանակ Բանկը հանդես է գալիս որպես հարկային գործակալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Խմբի դուստր կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հաշվարկում են շահութահարկ և այլ հարկեր ու տուրքեր: Դուստր կազմակերպությունների համար հարկի կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2024թ.-ին՝ 18%):

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(ձ) Թողարկված կապիտալ

Թողարկված կապիտալը Բանկի կանոնադրական կապիտալն է, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը և չի կարող գրավադրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Համաձայն Օրենքի 11.4 հոդվածի՝ Խմբի վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում Կառավարության կողմից տրամադրվող անտոկոս հասարակ մուրհակը ճանաչվում է որպես Կառավարության կողմից թողարկված մուրհակ Խմբի կապիտալում: Օրենքի համաձայն՝ Կենտրոնական բանկի հաշվեկշռում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում հաշվեկշռի հրապարակման պահից երեսուն օրվա ընթացքում Կառավարությունը՝ գերազանցող գումարի չափով, օրենքով սահմանված կարգով, որպես ներդրում Կենտրոնական բանկի կապիտալում, Կենտրոնական բանկին պետք է տրամադրի անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակներ:

Խումբը գտնում է, որ Բանկն իրավունք չունի տարեվերջին պահանջելու Կառավարությունից ստացվելիք գումարները, որոնք ձևավորվել են վնասների հետևանքով՝ վերը նշված Օրենքի համաձայն: Այդ ստացվելիք գումարները ճանաչվում են, երբ Կառավարությունը կայացնում է համապատասխան որոշում վնասի՝ պահուստները գերազանցող չափով գումարը Բանկին փոխհատուցելու մասին:

(ղ) Շահույթի բաշխում

Խմբի շահույթը, որը որոշվում է վերջինիս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակումից հետո, բաշխվում է հետևյալ կերպ.

- Շահույթի 20%-ն ուղղվում է գլխավոր պահուստի համալրմանը՝ մինչև դրա ընդհանուր չափը կազմի առկա դրամական զանգվածի 25%-ը,
- Մասհանումներ պետք է կատարվեն՝ Կառավարության կողմից նախկինում Բանկին տրամադրված մուրհակի մարման ծախսերը ծածկելու նպատակով:

Նշված մասհանումները կատարելուց հետո Խմբի շահույթի մնացորդը փոխանցվում է պետական բյուջե:

Պետական բյուջե վճարման ենթակա Խմբի շահույթի հաշվարկում չեն ընդգրկվում ոսկու, հատուկ փոխառության իրավունքների, արտարժույթների և դրանցով արտահայտված արժեքների վերագնահատումից առաջացած եկամուտների և ծախսերի դրական տարբերությունը՝ ճշգրտված նախորդ ժամանակաշրջանների բացասական արդյունքների հատուցմանն ուղղված գումարների չափով *(Ծանոթագրություն 25)*:

Խումբը գտնում է, որ համաձայն Օրենքի Բանկը հայեցողություն չունի շահույթի բաշխման հետ կապված. գումարները սահմանված են օրենքով, ըստ էության, հանգեցնելով գլխավոր պահուստի համալրումից հետո Կառավարությունից ստացվելիք մուրհակի գումարի ավտոմատ նվազեցման:

Համապատասխանաբար Բանկը ճանաչում է Կառավարության հանդեպ պարտավորություններ մուրհակի արժեքի նվազեցման միջոցով շահույթ ստանալու ժամանակաշրջանում:

(ճ) Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Խումբը առանձնացնում է հետևյալ երեք հաշվետու սեգմենտները, որոնք կառավարվում են առանձին՝ հիմք ընդունելով Խմբի կառավարման և ներքին հաշվետվողականության կառուցվածքը.

- Կենտրոնական բանկի գործառնությունները,
- Դուստր կազմակերպությունների վերաֆինանսավորման գործառնությունները,
- Դուստր կազմակերպությունների այլ գործառնությունները:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (շարունակություն)

(մ) Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, բացառությամբ պարտքային առումով արժեզրկված ակտիվների: Արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ՝ կիրառելի դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս, սակայն հաշվի չեն առնվում ապագա պարտքային կորուստները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, եթե Խումբը վերանայում է վճարումների կամ մուտքերի իր գնահատականները: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը գրանցվում է որպես օգուտ/կորուստ դրամական միջոցների հոսքերի վերանայումից և ներկայացվում է տոկոսային եկամտի/ծախսի կազմում:

Եթե ֆինանսական ակտիվի կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի հաշվառված արժեքը նվազում է արժեզրկումից կորստի պատճառով, տոկոսային եկամուտը շարունակվում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից ստացված տոկոսային եկամուտը Խմբի առևտրային գործառնությունների համար համարվում է երկրորդային և համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվում է իրական արժեքի այլ փոփոխությունների հետ միասին:

(յ) Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ «ԱՄՀ») հետ գործարքների հաշվառում

«ԱՄՀ-ի գործարքները և ֆինանսական կազմակերպումը» ուղեցույցի համաձայն՝ ԱՄՀ-ի յուրաքանչյուր անդամ նշանակում է ֆիսկալ գործակալություն (ֆինանսների նախարարություն, կենտրոնական բանկ կամ համանման կազմակերպություն) ԱՄՀ-ի հետ ֆինանսական գործարքներ կատարելու համար և պահառուի (կենտրոնական բանկ կամ համանման գործակալություն)՝ ԱՄՀ-ի հաշիվները պահելու համար (ԱՄՀ թիվ 1 և 2 հաշիվներ և արժեթղթերի հաշիվ):

Համաձայն «Արժույթի միջազգային հիմնադրամին, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, Միջազգային ֆինանսական կորպորացիային, Զարգացման միջազգային ասոցիացիային, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին, Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը և Կապիտալ ներդրումների վերաբերյալ տարաձայնությունների կարգավորման միջազգային կենտրոնին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկը, ըստ ԱՄՀ-ի հետ կնքված պայմանագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի, հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության ֆիսկալ գործակալ: Բանկը համարվում է նաև Հայաստանի Հանրապետության պահառու ԱՄՀ հետ գործառնությունների համար:

Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկն ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է ֆիսկալ գործակալի գործառույթ, արդյունքում առաջացած ակտիվների և պարտավորությունների գումարները և գործառնությունների արդյունքները արտացոլվում են Կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում: Երբ Կենտրոնական բանկը ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է պահառուի գործառույթ, բոլոր գործառնություններն իրականացվում են Կենտրոնական բանկի թղթակցային հաշիվների միջոցով, սակայն այդ գործառնությունների արդյունքում առաջացող ակտիվների և պարտավորությունների գումարները և համապատասխան շահույթը կամ վնասը չեն արտացոլվում Բանկի՝ ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում *(Ծանոթագրություն 16):*

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՈՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Մի շարք նոր հաշվապահական հաշվառման ստանդարտներ և հաշվապահական հաշվառման ստանդարտների փոփոխություններ գործում են 2026թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների և փոփոխությունների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված հաշվապահական ստանդարտները: Խումբը մտադիր է ընդունել այս նոր ստանդարտները և մեկնաբանությունները, եթե կիրառել են, երբ դրանք ուժի մեջ մտնեն:

Ստորև ներկայացված են նոր և փոփոխված ստանդարտները, որոնք թողարկված են, սակայն դեռևս չեն գործում.

- ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացում և բացահայտում» (ուժի մեջ է մտնում 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, թույլատրվում է վաղաժամ կիրառումը),
- Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ) (ուժի մեջ է մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, թույլատրվում է վաղաժամ կիրառումը միայն ֆինանսական ակտիվների դասակարգման և առնչվող բացահայտումների համար),
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարելավումներ – Բաժին 11 (ուժի մեջ է մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար):

Խումբը դեռևս գնահատում է ազդեցությունները, որոնք փոփոխությունները կունենան Խմբի համախմբված հիմնական ֆինանսական հաշվետվությունների և կից ծանոթագրությունների վրա:

4. ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով		
Նոստրո հաշիվներ	**25,783,645**	24,513,961
Ժամկետային ավանդներ	**914,750**	1,084,349
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**617,993**	375,647
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	**196,461**	201,230
Այլ	**13,404**	46,696
Ընդամենը տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով	**27,526,253**	26,221,883
Տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով		
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ	**76,286,774**	68,778,012
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**2,222,109**	1,794,531
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**1,024,690**	1,056,608
Այլ	**32,792**	29,694
Ընդամենը տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով	**79,566,365**	71,658,845
Ընդամենը տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով	**107,092,618**	97,880,728

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

5. ՏՈԿՈՍԱՅԻՆ ԾԱԽՍ

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Այլ փոխառություններ	**5,939,294**	6,908,851
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	**3,998,574**	5,601,297
Թողարկված պարտքային արժեթղթեր	**473,995**	46,774
Ընդամենը տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով	**10,411,863**	12,556,922
Տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ *(Ծնթգ. 28)*	**42,121,528**	37,826,614
Թողարկված պարտքային արժեթղթեր	**3,198,798**	2,783,276
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	**729,101**	468,144
Այլ	**21,995**	67,672
Ընդամենը տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով	**46,071,422**	41,145,706
Ընդամենը տոկոսային ծախս	**56,483,285**	53,702,628

6. ՉՈՒՏ ՎՆԱՍ ՓՈԽԱՐԺԵՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Չուտ վնաս արտարժույթի վերագնահատումից	**(13,097,808)**	(13,458,226)
Չուտ օգուտ սփոթ գործարքներից	**5,963,819**	5,689,375
Ընդամենը զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	**(7,133,989)**	(7,768,851)

Արտարժույթի վերահաշվարկից ստացված զուտ վնասի կազմում ներառված է 3,595,242 հազար ՀՀ դրամ գումարով արտարժույթի վերահաշվարկից զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով և 1,594,818 հազար ՀՀ դրամ գումարով զուտ վնասը ԱՄՀ-ի հետ մնացորդների գծով (2024թ-ին՝ համապատասխանաբար 29,265,846 հազար ՀՀ դրամի չափով վնասը և 6,918,997 հազար ՀՀ դրամի չափով օգուտը):

7. ՉՈՒՏ (ՎՆԱՍ)/ՕԳՈՒՏ ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՑ

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Չուտ վնաս սվոփ պայմանագրերից ներքին շուկայում	**(503,624)**	–
Չուտ (վնաս)/օգուտ սվոփ պայմանագրերից արտաքին շուկայում	**(54,705)**	349,450
Ընդամենը զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից	**(558,329)**	349,450

8. ՉՈՒՏ ՕԳՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ՝ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՄԻՋՈՑՈՎ ՉԱՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻՑ

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Չուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերի գծով	**26,054,148**	28,266,610
Չուտ օգուտ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերի գծով *(Ծնթգ. 13)*	**4,672,552**	4,569,648
Չուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող փողի շուկայի գործիքների գծով	**56,648**	–
Հավատարմագրային կառավարման վճար	**(137,489)**	(128,026)
Ընդամենը զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից	**30,645,859**	32,708,232

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

9. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Դուստր կազմակերպությունների վճարահաշվարկային ծառայություններ	**7,433,786**	6,681,629
Դրամագիտական արժեքներ	**1,307,117**	1,509,307
Ֆինանսական գործակալության վճար	**3,653**	6,877
Այլ	**1,288,283**	1,318,754
Ընդամենը այլ եկամուտ	**10,032,839**	9,516,567

«Դուստր կազմակերպությունների վճարահաշվարկային ծառայություններ» հոդվածը ներկայացնում է «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի համապատասխան եկամուտը:

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում «Այլ» տողում ներառված 541,474 հազար ՀՀ դրամ գումարը ներկայացնում է ասոցիացված կազմակերպություններում ներդրումների գծով շահույթը ձեռքբերումից հետո (2024թ.՝ 830,194 հազար ՀՀ դրամ) *(Ծանոթագրություն 15.3)*:

10. ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐԻ, ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ և ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Տարվա ընթացքում վաճառված դրամագիտական արժեքների թողարկման ծախսեր	**830,243**	1,083,450
Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	**566,045**	4,435,594
Ընդամենը թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	**1,396,288**	5,519,044

11. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Անձնակազմի գծով ծախսեր և հարակից վճարներ	**12,326,544**	11,045,230
Մաշվածություն և ամորտիզացիա	**3,803,279**	3,601,783
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	**1,360,264**	1,517,152
Վճարահաշվարկային համակարգի բարելավման և սպասարկման ծախսեր	**1,151,198**	560,657
Մասնագիտական ծառայություններ	**356,882**	95,493
Անվտանգության, փոխադրումների և ապահովագրության ծախսեր	**256,517**	260,183
Աուդիտի ծախսեր	**122,310**	109,194
Այլ	**8,209,368**	5,901,390
Ընդամենը այլ ծախսեր	**27,586,362**	23,091,082

2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում «Անձնակազմի գծով ծախսեր և հարակից վճարներ» տողում ներառված են ուսուցման, գործուղման, վերապատրաստման և այլ ծախսերը:

2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում «Այլ» տողում ներառված հիմնական հոդվածները ներկայացնում են Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների՝ թվային հասարակության զարգացման ծախսերը, բաժանորդագրության վճարները, կապի, կոմունալ ծառայությունների վճարները, վարձակալության և գրասենյակային ծախսերը:

2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար աշխատակիցների հատուցումների, վերապատրաստման ծախսերի և հարակից վճարների, աուդիտի, մաշվածության և ամորտիզացիայի, վերանորոգման և տեխնիկական սպասարկման ու վճարահաշվարկային համակարգի զարգացման, սպասարկման և այլ ծախսերի գումարները ներառում են նաև Խմբի դուստր կազմակերպությունների համապատասխան ծախսերի գումարները:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

12. ԲԱՆԿԵՐՈՒՄ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

12.1 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
Նոստրո հաշիվներ	**1,089,843,777**	704,245,241
Ժամկետային ավանդներ	**40,726,962**	4,651,501
Ածանցյալ գործիքների պարտադիր մարժա	**126,277**	127,547
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ	**48,800**	43,606
ԱՊԿ պահուստ	**(61,645)**	(113,440)
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	**1,130,684,171**	708,954,455

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ տեղաբաշխված միջոցներ մեկ բանկում, որի մնացորդը գերազանցում էր բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 829,076,136 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու բանկում, մնացորդի ընդհանուր գումարը՝ 541,415,363 հազար ՀՀ դրամ):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված 48,800 հազար ՀՀ դրամի չափով դրամական միջոցների մնացորդը (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 43,606 հազար ՀՀ դրամի) իրենից ներկայացնում է Բանկի կողմից ներդրումների կառավարման պայմանագրի շրջանակում արտերկրյա արժեթղթերով գործառնությունների գծով հաշվարկների համար պահվող մնացորդը:

Ամորտիզացված արժեքով չափվող՝ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների արժեզրկման գծով պահուստ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ փոփոխությունների վերլուծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում հետևյալն է.

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**	Փուլ 1	Ընդամենը
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով				
Համախառն հաշվեկշռային արժեք հունվարի 1-ի դրությամբ	**709,067,895**	**709,067,895**	692,837,632	692,837,632
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	**1,126,315,681**	**1,126,315,681**	704,416,393	704,416,393
Մարված ակտիվներ	**(704,637,760)**	**(704,637,760)**	(688,186,130)	(688,186,130)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,130,745,816**	**1,130,745,816**	709,067,895	709,067,895

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

12. ԲԱՆԿԵՐՈՒՄ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (շարունակություն)

12.1 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով չափվող՝ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների արժեզրկման գծով պահուստ (շարունակություն)

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**	Փուլ 1	Ընդամենը
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով				
ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ	**113,440**	**113,440**	2,818,946	2,818,946
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	**20,256**	**20,256**	64,349	64,349
Մարված ակտիվներ	**(64,349)**	**(64,349)**	(6,640)	(6,640)
ԱՊԿ հաշվարկման մոդելների և օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	**(7,702)**	**(7,702)**	(2,763,215)	(2,763,215)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**61,645**	**61,645**	113,440	113,440

12.2 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ տեղական արժույթով և այլ ֆինանսական ակտիվներ		
Հետգնման պայմանագրեր	**536,693,238**	651,281,900
Հիփոթեքային վերաֆինանսավորում	**239,176,973**	227,201,011
Վարկեր բանկերին և ֆինանսական հաստատություններին KfW, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	**230,649,677**	230,171,104
Առևտրային բանկերում ավանդներ	**29,813,647**	19,794,540
Վարկեր ռեզիդենտ ֆինանսական հաստատություններին սեփական միջոցներից	**29,379,636**	51,209,483
Այլ վարկեր	**2,226,962**	2,175,719
Արժեզրկման պահուստ	**(3,390,816)**	(25,611,390)
Ընդամենը բանկերում, ֆինանսական հաստատություններում և այլ ֆինանսական ակտիվներում տեղաբաշխված միջոցներ տեղական արժույթով	**1,064,549,317**	1,156,222,367

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և այլ ֆինանսական ակտիվների կենտրոնացում

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երեք բանկի մնացորդները գերազանցում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների ընդհանուր գումարի 10%-ը (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք բանկ): Կենտրոնացման ընդհանուր մնացորդը կազմում է 597,612,328 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 600,620,355 հազար ՀՀ դրամ):

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

12. ԲԱՆԿԵՐՈՒՄ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (շարունակություն)

12.2 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով (շարունակություն)

Հակադարձ հետգնման համաձայնագրերով ստացված գրավ

Հակադարձ հետգնման համաձայնագրերով գրավի առարկա են հանդիսանում արժեթղթերը, որոնք Խումբը կարող է վաճառել կամ վերագրավադրել: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրեր են կնքվել 7 տեղական բանկի հետ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10 տեղական բանկ): Այս պայմանագրերով գրավի առարկա հանդիսացող արժեթղթերի իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	**Իրական արժեքը առ 31 դեկտեմբերի 2025թ.**	Իրական արժեքը առ 31 դեկտեմբերի 2024թ.
ՀՀ կառավարության գանձապետական պարտատոմսեր	**575,216,749**	696,737,999
Ընդամենը	**575,216,749**	696,737,999

Տեղական բանկերին և ֆինանսական հաստատություններին տրամադրված վարկեր

KfW-ի, Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) և Համաշխարհային բանկի հետ կնքված պայմանագրերի շրջանակներում վերջիններիս ֆինանսավորմամբ վարկեր են տրամադրվել ՀՀ առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին հետևյալ ծրագրերի ներքո, որոնք ֆինանսավորվում են KfW-ի, ԵՆԲ-ի, ԱԶԲ-ի և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկի անդամ կազմակերպություն) կողմից.

- *ՓՄՁ աջակցություն.* KfW-ի և Համաշխարհային բանկի ՓՄՁ աջակցության ծրագրերի նպատակն է Հայաստանում զարգացնել ՓՄՁ-ները, մասնավորապես՝ առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով ապահովելու միջոցով միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորումը դարձնել առավել արդյունավետ և շահութաբեր: 2021թ. KfW-ից ստացված վարկային միջոցները ևս ուղղվել են ՓՄՁ-ների վարկավորման խթանմանը, ինչպես նաև COVD-19 համավարակի անբարենպաստ հետևանքների հաղթահարման աջակցությանը: Նշված ծրագրերն իրականացվում են գործընկեր բանկերում և վարկային կազմակերպություններում նոր վարկային գործիքակազմի (տեխնոլոգիաների) ներդրման և առաջատար վարկային մասնագետների ուսուցման և վերապատրաստումների կազմակերպման միջոցով,
- 2012թ. մեկնարկեց նաև KfW-ի կողմից ֆինանսավորվող «Գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագիրը, որի հիմնական նպատակը ՀՀ առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների տրամադրման միջոցով և տեխնիկական աջակցության ապահովմամբ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների, անհատ գյուղացիների վարկավորումն է,
- 2014թ. ընթացքում նոր վարկ է ստացվել ԱԶԲ-ի «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ ֆինանսական համակարգի միջոցով խթանել ձեռներեցության զարգացումը կանանց շրջանում՝ մեծացնելով ազգային արժույթով ֆինանսական միջոցների հասանելիությունը կանանց պատկանող ՓՄՁ-ների համար,
- 2015թ. ընթացքում նոր վարկ է ստացվել Եվրոպական ներդրումային բանկից, որն ամբողջությամբ ուղղվել է գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտներում ՓՄՁ-ների և միջին կապիտալիզացիա ունեցող կազմակերպությունների վարկային միջոցների պահանջարկի բավարարմանը՝ ՀՀ առևտրային բանկերի և րկային կազմակերպությունների միջոցով: Հետագայում ծրագրի հաջորդ փուլի շրջանակում (2017թ.) ներառվեց նաև արտահանման խթանումը, իսկ ծրագրի պահանջներին ավելացավ կլիմայական փոփոխությունների կառավարման տարրը, համաձայն որի ենթավարկառուներից պահանջվում էր ձեռնարկել որոշակի քայլեր շրջակա միջավայրի վրա ազդեցությունը մեղմելու ուղղությամբ: Ծրագրի երրորդ փուլը (2020թ., 2021թ.), ի հավելումն նախորդ երկու փուլերի պայմանների, ներառում է նաև արտադրության ոլորտի վարկավորումը,

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

12. ԲԱՆԿԵՐՈՒՄ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (շարունակություն)

12.2. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով (շարունակություն)

Տեղական բանկերին և ֆինանսական հաստատություններին տրամադրված վարկեր (շարունակություն)

- 2023թ. մեկնարկել է «Հայաստանի տնտեսական դիմակայունություն» վարկային ծրագիրը (4-րդ փուլ), որի հիմնական նպատակը ևս գյուղատնտեսության, արտադրության և զբոսաշրջության ոլորտի ՓՄՁ-ներին ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովումն է՝ կանաչ ներդրումների, կանանց ձեռներեցության խթանման, մարզային զարգացման, ինչպես նաև թվայնացմանն ուղղված նախագծերի ֆինանսավորման նպատակով:
- 2016թ. ընթացքում KfW-ից նոր վարկ է ստացվել «Էներգաարդյունավետություն փոքր և միջին ձեռնարկությունների համար» վարկային ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել և ընդլայնել էներգաարդյունավետ վարկերի առաջարկը Հայաստանի ֆինանսական հաստատություններում և միաժամանակ բավարարել միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների էներգաարդյունավետության ներդրումների ֆինանսավորման պահանջարկը: Ծրագրի նպատակն է նաև նպաստել հայկական ՓՄՁ-ների կողմից էներգետիկ պահանջարկի և ածխաթթու գազերի արտանետման նվազմանը, ինչպես նաև խթանել ձեռնարկությունների մրցունակությունը:
- *Վերականգնվող էներգիայի զարգացում*. KfW-ի կողմից ֆինանսավորվող այս ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել վերականգնվող էներգիայի օգտագործմանը՝ ընդլայնելով մասնավոր ձեռներեցների և ձեռնարկությունների համար վարկային միջոցների մատչելիությունը: Ծրագրի առաջին երկու փուլերի ֆինանսական միջոցներն ուղղվել են մասնավոր փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) կառուցմանն ու վերազինմանը, մինչդեռ երրորդից վեցերորդ փուլերի միջոցներն ուղղվել են ֆիզիկական անձանց և մասնավոր ձեռնարկությունների սեփական կարիքների բավարարման նպատակով կառուցվող փոքր (մինչև 500 ԿՎտ), ինչպես նաև արտադրական նպատակով կառուցվող (լիցենզավորված) մեծ (մինչև 5 ՄՎտ) արևային ֆոտովոլտային կայանների ֆինանսավորմանը և այլ ուղղությունների (բիոգազանգված, քամի և այլ) զարգացմանը: 2025թ. մեկնարկած յոթերորդ փուլի շրջանակում նախատեսվում է ծրագրի միջոցներն, ի լրումն արևային ֆոտովոլտային կայանների ֆինանսավորման, ուղղել նաև ՓՄՁ-ների էներգաարդյունավետ ներդրումների ֆինանսավորմանը:
- *Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում*. 2006թ. KfW-ի կողմից ֆինանսավորվող այս ծրագրի նպատակն է ընդլայնել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տնային տնտեսություններին անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման նպատակով տրամադրվող վարկավորումը՝ խթանելով հատկապես մարզերում վարկավորումը, ինչպես նաև էներգաարդյունավետ բնակարանների ձեռքբերումն ու վերանորոգումը: Այս ծրագրի շրջանակներում Բանկը վարկեր է տրամադրել իր դուստր կազմակերպությանը, որոնք բացառվել են որպես ներխմբային մնացորդներ:

Ծրագրերի շրջանակում Խումբը, կիրառելով տեխնիկական և ֆինանսական չափանիշներ, որպես գործընկեր ընտրում է համապատասխան բանկեր և վարկային կազմակերպություններ և վերջիններիս հետ ստորագրված պայմանագրերի համաձայն տեղաբաշխում է ներգրավված միջոցները: Գործընկեր ֆինանսական հաստատությունները որոշում են վերջնական շահառուներին՝ ստանձնելով տրամադրված վարկերի հետ կապված ռիսկերը: Ստացված վարկերը ներկայացված են «Այլ փոխառություններ»՝ Ծանոթագրություն 21-ում:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

12. ԲԱՆԿԵՐՈՒՄ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (շարունակություն)

12.2. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով (շարունակություն)

Տեղական բանկերին և ֆինանսական հաստատություններին տրամադրված վարկեր (շարունակություն)

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղաբաշխված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքները ըստ ներկայացված ծրագրերի:

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
KFW-ի հետ համաձայնագրերի շրջանակներում		
Մասնավոր փոքր և միջին ձեռնարկությունների աջակցում՝ ՄՓՄՁ	**70,553,220**	72,887,252
Վերականգնվող էներգիայի աջակցություն՝ ՎԷ	**53,048,885**	41,639,826
Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար՝ ԷԱ	**15,517,839**	19,052,034
Գյուղատնտեսության ոլորտի աջակցում՝ ԳՖ	**14,364,739**	12,547,376
ՀԲ-ի հետ համաձայնագրերի շրջանակներում		
Մասնավոր փոքր և միջին ձեռներեցության համար ֆինանսական միջոցների հասանելիություն՝ ՓՄՁՖՄՀ	**3,606,238**	4,994,930
ԱԶԲ-ի հետ համաձայնագրերի շրջանակներում		
Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցում	**6,367,063**	5,035,302
ԵՆԲ-ի հետ համաձայնագրերի շրջանակներում		
Մասնավոր ոլորտի աջակցում	**67,191,693**	74,014,384
Ընդամենը վարկեր բանկերին և ֆինանսական հաստատություններին KfW, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	**230,649,677**	230,171,104

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ KfW-ի, Համաշխարհային բանկի, ԵՆԲ-ի և ԱԶԲ-ի հետ պայմանագրերի շրջանակում վարկեր են տրամադրվել տեղական 15 բանկերի (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 15 տեղական բանկերի) և 11 ֆինանսական հաստատությունների (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 11 ֆինանսական հաստատությունների), որոնց գծով տոկոսադրույքը կազմում է 5.5%-ից 8.5% (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5.5%-ից 8.5%), իսկ կշռված միջին տոկոսադրույքը 6.9% (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6.8%): Ինչպես նշված է Ծանոթագրություն 21-ում, այդ վարկերը ներկայացնում են շուկայի առանձին սեգմենտ և, հետևաբար, սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը դրանք չի զեղչում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորումը ֆինանսական հաստատություններին կատարվել է մինչև 12 տարի մարման ժամկետով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 12 տարի): 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերն ապահովված են գրավով՝ հաճախորդներին տրամադրված վարկային պայմանագրերի շրջանակներում պահանջի իրավունքով՝ 243,335,899 հազար ՀՀ դրամ գումարով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 229,725,850 հազար ՀՀ դրամ):

Առևտրային բանկերում տեղաբաշխված կարճաժամկետ ավանդները ներառում են Խմբի դուստր կազմակերպությունների կողմից առևտրային բանկերում կատարված կարճաժամկետ տեղաբաշխումները:

2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,296,998 հազար ՀՀ դրամ գումարով այլ վարկերն ապահովված են անշարժ գույքով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,450,157 հազար ՀՀ դրամ) և 51,464 հազար ՀՀ դրամ գումարով այլ վարկերը՝ շարժական գույքով և այլ ակտիվներով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 76,612 հազար ՀՀ դրամ):

Ռեզիդենտ ֆինանսական հաստատություններին սեփական միջոցներից տրամադրված վարկերը հանդիսանում են ասոցիացված կազմակերպություններին տրված վարկեր՝ նվազեցված սկզբնական ճանաչումից կորուստների և արժեզրկումից կուտակված կորուստների չափով, որոնք ապահովված են ասոցիացված կազմակերպությունների ակտիվներով:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

12. ԲԱՆԿԵՐՈՒՄ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (շարունակություն)

12.2. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով չափվող՝ բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և այլ ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների և այլ ֆինանսական ակտիվների տեղական արժույթով համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ-ի փոփոխության վերլուծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում հետևյալն է.

	2025թ.				2024թ.		
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ3**	**Ընդամենը**	Փուլ 1	Փուլ 2	Ընդամենը
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություն-ներում տեղաբաշխ-ված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով							
Համախառն հաշվեկշռային արժեքը հունվարի 1-ի դրությամբ	**1,159,536,075**	**22,297,682**	**–**	**1,181,833,757**	859,638,486	–	859,638,486
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	**667,179,087**	**–**	**–**	**667,179,087**	787,775,782	–	787,775,782
Մարված ակտիվներ	**(755,166,138)**	**–**	**–**	**(755,166,138)**	(465,580,511)	–	(465,580,511)
Տեղափոխում փուլ 2	**–**	**–**	**–**	**–**	(22,297,682)	22,297,682	–
Տեղափոխում փուլ 3	**(3,608,891)**	**(22,297,682)**	**25,906,573**	**–**	–	–	–
Դուրսգրումներ	**–**	**–**	**(25,906,573)**	**(25,906,573)**	–	–	–
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,067,940,133**	**–**	**–**	**1,067,940,133**	1,159,536,075	22,297,682	1,181,833,757

	2025թ.				2024թ.		
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**	Փուլ 1	Փուլ 2	Ընդամենը
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություն-ներում տեղաբաշխ-ված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով							
ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ	**3,313,708**	**22,297,682**	**–**	**25,611,390**	4,011,926	–	4,011,926
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	**881,932**	**–**	**–**	**881,932**	904,384	–	904,384
Մարված ակտիվներ	**(156,113)**	**–**	**–**	**(156,113)**	(245,844)	–	(245,844)
Տեղափոխում փուլ 2	**–**	**–**	**–**	**–**	(360,751)	360,751	–
Տեղափոխում փուլ 3	**(3,608,891)**	**(22,297,682)**	**25,906,573**	**–**	–	–	–
ԱՊԿ հաշվարկման մոդելների և օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	**2,960,180**	**–**	**–**	**2,960,180**	(996,007)	21,936,931	20,940,924
Դուրսգրումներ	**–**	**–**	**(25,906,573)**	**(25,906,573)**	–	–	–
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,390,816**	**–**	**–**	**3,390,816**	3,313,708	22,297,682	25,611,390

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների մոդելի շրջանակում նախկինում 2-րդ փուլում դասակարգված, ասոցիացված կազմակերպությանը տրամադրված վարկը փոխանցվել է 3-րդ փուլ՝ արժեզրկման օբյեկտիվ վկայությունների ի հայտ գալու պատճառով: Հետագայում Խումբը որոշել է, որ չմարված պայմանագրային դրամական հոսքերի վերականգնման վերաբերյալ ողջամիտ ակնկալիք չկա:

Հետևաբար, վարկը դուրս է գրվել համապատասխան կորուստների պահուստի հաշվին՝ Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունների և ՖՀՄՍ 9-ի պահանջների համաձայն:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

13. ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ՝ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՄԻՋՈՑՈՎ ՉԱՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ արտարժույթով		
Սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր	**678,285,193**	645,739,482
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր	**104,474,939**	103,789,492
Արտերկրյա փողի շուկայի գործիքներ	**17,748,942**	–
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով	**800,509,074**	749,528,974

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային արժեթղթերը հիմնականում իրենցից ներկայացնում են ԱՄՆ գանձապետական մուրհակներ և եվրոպական և այլ զարգացած երկրների կառավարությունների և պետական ֆինանսական հաստատությունների կողմից թողարկված արժեթղթեր:

Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արժեթղթերն իրենցից ներկայացնում են միջազգային ֆինանսական հաստատությունների հայեցողական կառավարման ներքո գտնվող ակտիվներ՝ համաձայն ներդրումային կառավարման պայմանագրի:

14. ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		
Արտարժութային սվոփ պայմանագրեր արտաքին շուկայում	**109,149**	158,575
Ընդամենը ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**109,149**	158,575

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		
Արտարժութային սվոփ պայմանագրեր ներքին շուկայում	**361,548**	–
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**361,548**	–

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ածանցյալ ֆինանսական պարտավորություններում ներառված ներքին շուկայում արտարժութային սվոփ պայմանագրերը իրենցից ներկայացնում են Խմբի դուստր կազմակերպություններից մեկի արտարժութային սվոփ պայմանագրերը:

15. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

15.1. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Բաժնային ներդրումներ		
Արտերկրյա արժեթղթեր	**2,826,529**	2,552,857
SWIFT	**3,223**	3,223
Ընդամենը բաժնային ներդրումներ	**2,829,752**	2,556,080
Պարտքային գործիքներ		
Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով	**624,235**	842,971
ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր	**8,556,281**	8,534,719
Ընդամենը պարտքային գործիքներ	**9,180,516**	9,377,690
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով	**12,010,268**	11,933,770

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

15. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (շարունակություն)

15.1. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով (շարունակություն)

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտերկրյա արժեթղթերի կազմում ներառված են բաժնային ներդրումներ՝ դասակարգված որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով, որոնք հանդիսանում են Խմբի դուստր կազմակերպություններից մեկի ներդրումը զարգացման հիմնադրամում, որի նախաձեռնողն ու կառավարողը KfW-ն է: Զարգացման հիմնադրամը ստեղծվել է Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանի, ներառյալ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումն ու բարեկեցությունը խթանելու համար՝ լրացուցիչ զարգացման ֆինանսավորման կայուն ապահովման միջոցով:

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով պարտքային արժեթղթերը, որոնք դասակարգված են որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումներ արտարժույթով, թողարկված են մեկ տեղական բանկի կողմից:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արտարժույթով պարտքային արժեթղթերի իրական արժեքի և համապատասխան ԱՊԿ փոփոխությունների վերլուծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում հետևյալն է.

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**	Փուլ 1	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր արտարժույթով – ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր				
Իրական արժեք հունվարի 1-ի դրությամբ	**8,534,719**	**8,534,719**	1,798,687	1,798,687
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	**1,210,042**	**1,210,042**	3,637,486	3,637,486
Վերադասակարգում	**–**	**–**	3,113,312	3,113,312
Մարված ակտիվներ	**(1,188,480)**	**(1,188,480)**	(14,766)	(14,766)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,556,281**	**8,556,281**	8,534,719	8,534,719

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**	Փուլ 1	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր արտարժույթով – ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր				
ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ	**58,228**	**58,228**	21,543	21,543
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	**9,791**	**9,791**	11,284	11,284
Վերադասակարգում	**–**	**–**	37,639	37,639
Մարված ակտիվներ	**(4,995)**	**(4,995)**	–	–
ԱՊԿ հաշվարկման մոդելների և օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	**2,745**	**2,745**	(12,238)	(12,238)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**65,769**	**65,769**	58,228	58,228

15. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (շարունակություն)

15.1. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ արտարժույթով (շարունակություն)

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**	Փուլ 1	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր արտարժույթով – կորպորատիվ պարտատոմսեր				
Իրական արժեք հունվարի 1-ի դրությամբ	**842,971**	**842,971**	454,011	454,011
Վերադասակարգում	**–**	**–**	407,188	407,188
Մարված ակտիվներ	**(218,736)**	**(218,736)**	(18,228)	(18,228)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**624,235**	**624,235**	842,971	842,971

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**	Փուլ 1	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր արտարժույթով – կորպորատիվ պարտատոմսեր				
ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ	**7,617**	**7,617**	5,133	5,133
Վերադասակարգում	**–**	**–**	4,726	4,726
Մարված ակտիվներ	**(1,673)**	**(1,673)**	–	–
ԱՊԿ հաշվարկման մոդելների և օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	**(1,570)**	**(1,570)**	(2,242)	(2,242)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,374**	**4,374**	7,617	7,617

15.2. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Պարտքային գործիքներ		
ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր	**7,817,083**	9,583,870
ՀՀ կառավարության կողմից թողարկված մուրհակ *(Ծնթգ. 25)*	**149,520,272**	162,437,256
ՀՀ կառավարության կողմից թողարկված մուրհակի մարմանը հաշվանցման ձևով բաշխման ենթակա շահույթի մասնաբաժին *(Ծնթգ. 25)*	**(37,937,210)**	(12,916,984)
Ընդամենը պարտքային գործիքներ	**119,400,145**	159,104,142

Ղեկավարությունը գտնում է, որ մուրհակի հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրա իրական արժեքին հիմնականում վերջինիս կարճաժամկետ լինելու պատճառով *(Ծնթգ. 25)*:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

15. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ (շարունակություն)

15.2. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող տեղական արժույթով պարտքային գործիքների իրական արժեքի և համապատասխան ԱՊԿ փոփոխությունների վերլուծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում հետևյալն է.

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**	Փուլ 1	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր տեղական արժույթով – ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր				
Իրական արժեքը հունվարի 1-ի դրությամբ	**9,583,870**	**9,583,870**	9,291,332	9,291,332
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	**306,972**	**306,972**	581,158	581,158
Մարված ակտիվներ	**(2,073,759)**	**(2,073,759)**	(288,620)	(288,620)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,817,083**	**7,817,083**	9,583,870	9,583,870

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**	Փուլ 1	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր տեղական արժույթով – ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր				
ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ	**34,563**	**34,563**	33,958	33,958
Մարված ակտիվներ	**(6,428)**	**(6,428)**	–	–
ԱՊԿ հաշվարկման մոդելների և օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	**1,195**	**1,195**	605	605
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**29,330**	**29,330**	34,563	34,563

15.3. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

2022թ. հունվարին Խմբի դուստր կազմակերպություններից մեկը ներդրում է կատարել «ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ-ի՝ ՀՀ-ում գործող առևտրային բանկի բաժնետիրական կապիտալում՝ ձեռք բերելով բաժնետոմսերի 25.001959%: Ավելի ուշ 2022թ.-ին դուստր կազմակերպությունը ձեռք է բերել յուրաքանչյուրը 824,651 ՀՀ դրամ անվանական արժեքով լրացուցիչ 38,805 հատ սովորական բաժնետոմսեր, ինչի արդյունքում կազմակերպության բաժնեմասը նվազել է՝ կազմելով 25.000485%: Տվյալ պահին ներդրման ընդհանուր հաշվեկշռային արժեքը կազմել է 32,000,583 հազար ՀՀ դրամ:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման հայտանիշների առկայությամբ պայմանավորված Խումբն իրականացրել է խոշոր ասոցիացված կազմակերպության արժեզրկման ստուգում:

Որոշելու համար, թե արդյոք ներդրման օբյեկտի հաշվեկշռային արժեքը փոխհատուցվող է, Խումբն իրականացրել է գնահատում՝ օգտագործելով շուկայի բազմապատկիչները՝ ասոցիացված կազմակերպության իրական արժեքը գնահատելու համար: Օգտագործված հիմնական բազմապատկիչը գնի և կապիտալի հարաբերակցության գործակիցն է, որը հիմնված է Հայաստանի բանկային համակարգի համադրելի բանկերի տվյալների վրա՝ ճշգրտված հսկողության բացակայության մասով: Այդ բազմապատկիչների կիրառումը ցույց է տալիս, որ առկա է հնարավոր արժեզրկում, քանի որ շուկայական արժեքի վրա հիմնված փոխհատուցվող գումարը ցածր է ներդրման հաշվեկշռային արժեքից:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

15. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ (շարունակություն)

15.3. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում (շարունակություն)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվել է արժեզրկումից կորուստ 13,959,047 հազար ՀՀ դրամի չափով և 2,512,628 հազար ՀՀ դրամ գումարով համապատասխան հետաձգված հարկային ակտիվ՝ որպես հարկային եկամուտ:

2025թ. փետրվարին դուստր կազմակերպությունը 5,000,684 հազար ՀՀ դրամ լրացուցիչ ներդրում է կատարել՝ ձեռք բերելու ասոցիացված կազմակերպության՝ յուրաքանչյուրը 824,651 ՀՀ դրամ անվանական արժեքով 6,064 հատ սովորական բաժնետոմսեր՝ ավելացնելով իր բաժնեմասնակցությունը մինչև 25.000651%:

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար Խումբը ճշգրտել է ասոցիացված կազմակերպությունից ստացված ֆինանսական արդյունքները՝ դրանք համապատասխանեցնելու Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը՝ առավելապես կիրառելով լրացուցիչ ակնկալվող պարտքային կորուստների մասհանումներ՝ թերի պահուստավորված վարկերի մասով: Այս ճշգրտումների արդյունքում ասոցիացված կազմակերպության հաշվետու տարվա շահույթը հիմնականում չեզոքացվել է, ինչի հետևանքով տարվա համար կապիտալում ճանաչման ենթակա էական շահույթ կամ վնաս չի առաջացել:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը կազմել է 24,635,673 հազար ՀՀ դրամ (2024 թվականի դեկտեմբերի 31՝ 19,715,030 հազար ՀՀ դրամ):

Ղեկավարության գնահատմամբ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրման մնացորդային հաշվեկշռային արժեքի նկատմամբ արժեզրկման նոր հայտանիշներ չեն հայտնաբերվել:

Ստորև աղյուսակում ներկայացված է ասոցիացված կազմակերպություններում հաշվառվող ներդրումների հաշվեկշռային արժեքի և շահույթում և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում մասնաբաժնի ընդհանուր վերլուծությունը:

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Հաշվեկշռային արժեքը հունվարի 1-ի դրությամբ	**21,468,457**	34,533,590
Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում	**5,000,684**	–
Մասնաբաժինը՝		
– Շահույթում	**541,474**	830,194
– Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում	**(80,039)**	63,720
– Արժեզրկում	**–**	(13,959,047)
Հաշվեկշռային արժեքը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**26,930,576**	21,468,457

15.4. Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ տեղական արժեքով

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Պարտքային գործիքներ		
ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր	**24,566,652**	20,761,962
ԱՊԿ պահուստ	**(74,440)**	(76,979)
Ընդամենը պարտքային գործիքներ	**24,492,212**	20,684,983

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական արժույթով արտահայտված և որպես ամորտիզացված արժեքով չափվող դասակարգված արժեթղթերն իրենցից ներկայացնում են ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական պարտատոմսեր:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

15. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ (շարունակություն)

15.4. Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ տեղական արժեքով (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով չափվող տեղական արժույթով ներդրումային գործիքների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ փոփոխությունների վերլուծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում հետևյալն է.

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**	Փուլ 1	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ տեղական արժույթով – ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր				
Համախառն հաշվեկշռային արժեքը հունվարի 1-ի դրությամբ	**20,761,962**	**20,761,962**	16,391,747	16,391,747
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	**8,079,126**	**8,079,126**	4,370,215	4,370,215
Մարված ակտիվներ	**(4,274,436)**	**(4,274,436)**	–	–
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**24,566,652**	**24,566,652**	20,761,962	20,761,962

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փուլ 1**	**Ընդամենը**	Փուլ 1	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներ արտարժույթով – ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր				
ԱՊԿ հունվարի 1-ի դրությամբ	**76,979**	**76,979**	63,571	63,571
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	**9,166**	**9,166**	9,231	9,231
Մարված ակտիվներ	**(9,231)**	**(9,231)**	–	–
ԱՊԿ հաշվարկման մոդելների և օգտագործվող ելակետային տվյալների փոփոխություններ	**(2,474)**	**(2,474)**	4,177	4,177
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**74,440**	**74,440**	76,979	76,979

16. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՏ

ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ		
Բաժնեմասը ԱՄՀ-ում (անդամակցություն)	**67,327,624**	66,611,496
ԱՄՀ-ում ՀՓԻ միջոցներ	**483,045**	765,538
Հաշվեգրված տոկոսներ	**28,679**	18,521
Ընդամենը ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	**67,839,348**	67,395,555

Հայաստանի Հանրապետությունը ԱՄՀ-ի անդամ է: Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության՝ ԱՄՀ-ում անդամակցության բաժնեմասի պահառու:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

16. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՏ (շարունակություն)

ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ

Բաժնեմասի հաշվեկշիռն ակտիվի հատուկ տեսակ է: Բաժնեմասերը լինում են տարբեր՝ կախված յուրաքանչյուր երկրի տնտեսության չափից, և որոշվում են ԱՄՀ-ի կառավարիչների խորհրդի կողմից: Բաժնեմասով որոշվում են ԱՄՀ-ում անդամ երկրի ձայնի իրավունքը, ԱՄՀ-ի ֆինանսական միջոցների հասանելիության սահմանաչափերը և մասնակցի մասնաբաժինը ԱՄՀ-ի հաշվարկային միավորի՝ ՀՓԻ-ների տեղաբաշխում իրականացնելիս: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բաժնեմասը ԱՄՀ-ում կազմել է 128,800 հազար ՀՓԻ կամ 67,327,624 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ-ի նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը (2024թ.՝ 128,800 հազար ՀՓԻ կամ 66,611,496 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ-ի նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը): Անդամակցության բաժնեմասն անտոկոս է և ոչ ընթացիկ ակտիվ է: Հայաստանի Հանրապետության բաժնեմասի համար վճարումը կատարվել է ԱՄՀ-ին Կառավարության կողմից թողարկված անտոկոս հասարակ մուրհակի տեսքով:

Բանկն ԱՄՀ-ում ՀՓԻ-ով արտահայտված ընթացիկ հաշիվն օգտագործում է ԱՄՀ-ի հետ գործարքներ կատարելիս: Այդ ընթացիկ հաշիվը տոկոսային է. տոկոսները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով շաբաթական կտրվածքով ԱՄՀ-ի կողմից հրապարակվող ՀՓԻ տոկոսադրույքը:

Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Արժեթղթերի հաշիվ	**65,000,000**	65,000,000
ԱՄՀ-ի հանդեպ ՀՀ դրամով պարտավորությունների ճշգրտման հաշիվ	**(1,045,639)**	1,027,450
Թիվ 1 հաշիվ	**17,451,460**	22,879,965
Թիվ 2 հաշիվ	**61,622**	59,589
ՀՓԻ տեղաբաշխում	**110,524,811**	109,349,218
Հաշվեգրված տոկոսներ	**591,723**	768,051
Ընդամենը պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	**192,583,977**	199,084,273

Արժեթղթերի հաշիվը, ճշգրտման հաշիվը և թիվ 1 հաշիվն իրենցից ներկայացնում են Բանկի պարտավորությունները Երկարաձգվող ֆինանսավորման ծրագրի (EFF), Պահուստային ծրագրի (SBA) շրջանակում և անդամակցության բաժնեմասի հետ կապված, այս հաշիվները պահվում են ՀՀ դրամով, այնուամենայնիվ, կախված են ՀՓԻ/ՀՀ դրամ փոխարժեքից:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ հաշիվներում ներառված են EFF ծրագրի շրջանակում ստացված վարկերի մնացորդը 4,084,067 հազար ՀՀ դրամի չափով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,097,230 հազար ՀՀ դրամ) և SBA շրջանակում ստացված վարկերի մնացորդը՝ 10,073,215 հազար ՀՀ դրամի չափով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 13,275,556 հազար ՀՀ դրամ): Ներկայումս ԱՄՀ-ի հետ բոլոր հիմնական հաշվարկներն իրականացվում են թիվ 1 հաշվի միջոցով: Թիվ 2 հաշիվն ԱՄՀ-ի կողմից օգտագործվում է վարչական նպատակների համար:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՀ-ի հանդեպ Բանկի պարտավորությունների մի մասը և անդամակցության գումարը ծածկվում են հասարակ մուրհակով՝ 65,000,000 հազար ՀՀ դրամի (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 65,000,000 հազար ՀՀ դրամի) չափով:

Բացառությամբ անդամակցության բաժնեմասի և ՀՓԻ տեղաբաշխման մասով պարտավորության, 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտավորություններն ԱՄՀ-ի հանդեպ իրենցից ներկայացնում են պարտավորությունները EFF ծրագրի և SBA ծրագրի շրջանակում:

SBA (Stand-by Arrangement) վարկը կարճաժամկետ աջակցություն է տրամադրում վճարային հաշվեկշռի խնդիրներ ունեցող երկրներին: SBA վարկի տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2026թ. փետրվարից 2027թ. մայիս ընկած ժամանակահատվածում (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2025թ. օգոստոսից 2027թ. մայիս ընկած ժամանակահատվածում):

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

16. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՏ (շարունակություն)

Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ (շարունակություն)

EFF ծրագրի շրջանակում ֆինանսական աջակցությունը տրամադրվում է երկրներին՝ միջնաժամկետ վճարային խնդիրները հաղթահարելու համար: EFF վարկի տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2026թ. հունիսից 2027թ. հունիս ընկած ժամանակահատվածում (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2025թ. մայիսից 2027թ. հունիս ընկած ժամանակահատվածում):

ԱՄՀ անդամ երկրների միջազգային պահուստներն ավելացնելու նպատակով՝ ԱՄՀ-ն ՀՓԻ տեղաբաշխում է իրականացնում անդամ երկրներին: ՀՓԻ տեղաբաշխման տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով որպես ՀՓԻ տոկոսադրույքը: ՀՓԻ տեղաբաշխումը չունի սահմանված մարման ժամկետ, սակայն կարող է չեղարկվել ԱՄՀ-ի կողմից:

17. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հազար ՀՀ դրամ	**Հող և շենքեր, ներառյալ սպասարկման համակարգեր**	**Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ**	**Փոխադրամիջոցներ**	**Անավարտ շինարարություն**	**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ**	**Ընդամենը**
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	72,398,363	28,343,635	620,079	474,180	511,474	102,347,731
Ավելացումներ	51,145	3,695,505	46,710	100,753	492,758	4,386,871
Օտարումներ	(73,267)	(498,535)	(106,500)	–	(407,293)	(1,085,595)
Տեղափոխումներ	203,603	–	–	(203,603)	–	–
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	72,579,844	31,540,605	560,289	371,330	596,939	105,649,007
Ավելացումներ	**51,847**	**962,605**	**24,851**	**616,239**	**358,084**	**2,013,626**
Օտարումներ	**(9,027)**	**(572,554)**	**(256,437)**	**–**	**(489,422)**	**(1,327,440)**
Տեղափոխումներ	**423,454**	**368,925**	**–**	**(792,379)**	**–**	**–**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**73,046,118**	**32,299,581**	**328,703**	**195,190**	**465,601**	**106,335,193**
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	24,245,258	17,078,516	419,034	–	434,590	42,177,398
Տարվա մաշվածության ծախս	1,275,976	1,474,288	46,111	–	142,327	2,938,702
Օտարումներ	(11,188)	(442,352)	(97,980)	–	(405,065)	(956,585)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	25,510,046	18,110,452	367,165	–	171,852	44,159,515
Տարվա մաշվածության ծախս	**1,178,298**	**1,503,111**	**15,841**	**–**	**139,333**	**2,836,583**
Օտարումներ	**(8,937)**	**(465,689)**	**(154,730)**	**–**	**(119,058)**	**(748,414)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**26,679,407**	**19,147,874**	**228,276**	**–**	**192,127**	**46,247,684**
Հաշվեկշռային արժեք						
2025թ. դեկտեմբերի 31-ին	**46,366,711**	**13,151,707**	**100,427**	**195,190**	**273,474**	**60,087,509**
2024թ. դեկտեմբերի 31-ին	47,069,798	13,430,153	193,124	371,330	425,087	61,489,492

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

18. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր և արտոնագրեր	Անավարտ պայմանագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	6,168,979	765,141	6,934,120
Ավելացումներ	1,679,175	27,902	1,707,077
Օտարումներ	(34,020)	–	(34,020)
Արժեզրկում	–	(35,000)	(35,000)
Տեղափոխումներ	24,489	(24,489)	–
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	7,838,623	733,554	8,572,177
Ավելացումներ	**656,254**	**198,983**	**855,237**
Օտարումներ	**(215,018)**	**–**	**(215,018)**
Արժեզրկում	**–**	**(697,889)**	**(697,889)**
Տեղափոխումներ	**166,665**	**(166,665)**	**–**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**8,446,524**	**67,983**	**8,514,507**
Ամորտիզացիա			
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	4,197,505	–	4,197,505
Տարվա ամորտիզացիայի ծախս	663,081	–	663,081
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	4,860,586	–	4,860,586
Տարվա ամորտիզացիայի ծախս	**966,696**	**–**	**966,696**
Օտարումներ	**(311,340)**	**–**	**(311,340)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**5,515,942**	**–**	**5,515,942**
Հաշվեկշռային արժեք			
2025թ. դեկտեմբերի 31-ին	**2,930,582**	**67,983**	**2,998,565**
2024թ. դեկտեմբերի 31-ին	2,978,037	733,554	3,711,591

19. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ ՏԵՂԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹՈՎ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Դրամագիտական արժեքներ	**4,164,202**	4,433,878
Հետաձգված հարկային ակտիվ	**2,146,961**	2,207,728
Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր	**2,062,878**	2,463,775
Այլ	**2,391,782**	1,887,430
ԱՊԿ պահուստ	**(92)**	(325)
Ընդամենը այլ ակտիվներ տեղական արժույթով	**10,765,731**	10,992,486

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

20. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՆԴՆԵՐ և ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Պարտավորություններ արտարժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	**668,878,621**	504,531,838
Ասոցիացված կազմակերպությունների լորո հաշիվներ *(Ծնթգ. 28)*	**30,321,391**	21,097,179
Այլ կապակցված կողմերի ընթացիկ հաշիվներ *(Ծնթգ. 28)*	**8,126**	3,112
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	**4,108,533**	2,959,626
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**703,316,671**	528,591,755
Պարտավորություններ տեղական արժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	**505,785,052**	542,492,248
Ասոցիացված կազմակերպությունների լորո և այլ հաշիվներ *(Ծնթգ. 28)*	**15,057,040**	31,826,171
Կապակցված կողմերի ընթացիկ հաշիվներ *(Ծնթգ. 28)*	**3,598**	8,414
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ և ժամկետային ավանդներ	**11,969,209**	20,515,934
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով	**532,814,899**	594,842,767
Ընդամենը ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	**1,236,131,570**	1,123,434,522

Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդների կենտրոնացում

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երկու բանկի մնացորդները գերազանցել են Խմբի ֆինանսական և այլ հաստատությունների ավանդների և հաշիվների մնացորդների ընդհանուր գումարի 10%-ը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմել է 370,831,547 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու բանկ՝ 496,873,544 հազար ՀՀ դրամ ընդհանուր մնացորդով):

21. ԱՅԼ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Վարկեր KfW-ից	**102,781,315**	104,052,352
Վարկեր ԵՆԲ-ից	**55,810,724**	57,383,964
Վարկեր Համաշխարհային բանկից	**11,637,118**	13,057,808
Վարկեր ԱԶԲ-ից	**3,741,396**	3,962,829
Վարկեր ՖԶԳ-ից	**7,846,916**	9,723,401
Ընդամենը այլ փոխառություններ	**181,817,469**	188,180,354

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ KfW-ից ստացված վարկերի մնացորդները ըստ ծրագրերի.

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Մասնավոր փոքր և միջին ձեռնարկությունների աջակցում՝ ՄՓՄՁ	**40,448,250**	41,697,077
Վերականգնվող էներգիայի աջակցություն՝ ՎԷ	**32,920,300**	30,438,449
Գյուղատնտեսության ոլորտի աջակցում՝ ԳՖ	**6,414,658**	7,440,335
Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար՝ ԷԱ	**6,286,871**	7,322,401
Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում՝ ԲՖ	**16,711,236**	17,154,090
Ընդամենը վարկեր KfW-ից	**102,781,315**	104,052,352

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

21. ԱՅԼ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

KfW-ի կողմից Բանկին տրամադրվել են վարկեր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական համագործակցության միջկառավարական պայմանագրի շրջանակներում, որոնց նպատակը վարկային հատուկ ծրագրերի ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի միջոցով *(Ծնթգ. 12)*: Վարկերը ստացվել են եվրոյով, ենթակա են մարման 2026թ-ից 2048թ. ընկած ժամանակաշրջանում (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2025թ-ից 2048թ.), տոկոսադրույքը կազմում է 0.75%-ից 3.83% (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 0.75%-ից 3.8425%): Միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 2.77% (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3.05%):

Բանկին տրամադրվել է վարկ Համաշխարհային բանկի կողմից, որի նպատակը փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների միջոցով *(Ծնթգ. 12)*: Վարկը ստացվել է ԱՄՆ դոլարով, ենթակա է մարման 2026թ-ից 2035թ. ընկած ժամանակաշրջանում (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2025թ-ից 2035թ.), լողացող տոկոսադրույքը կազմում է 5.07% (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5.38%):

ԱԶԲ-ի կողմից տրամադրվել է վարկ՝ առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների միջոցով կանանց պատկանող փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման նպատակով *(Ծնթգ. 12)*: Վարկը ստացվել է ՀՓԻ-ով, ենթակա է մարման 2026թ-ից 2044թ. ընկած ժամանակաշրջանում (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2025թ-ից 2044թ.), տոկոսադրույքը կազմում է 2.36% (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2.36%):

Բանկին տրամադրվել են վարկեր Եվրոպական ներդրումային բանկի կողմից, որոնց նպատակը գյուղատնտեսության, զբոսաշրջության և արտադրության ոլորտների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների միջոցով *(Ծնթգ. 12)*: Վարկերը ստացվել են ԱՄՆ դոլարով, ենթակա են մարման 2026թ-ից 2035թ. ընկած ժամանակաշրջանում (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2025թ-ից 2034թ.), տոկոսադրույքը կազմում է 1.453%-ից 5.17% (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1.453%-ից 5.17%): Միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 3.67% (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3.27%):

Խմբի դուստր կազմակերպություններից մեկը վարկ է ստացել Ֆրանսիական Զարգացման Գործակալությունից (ՖԶԳ): Վարկը ստացվել է ԱՄՆ դոլարով, ենթակա է մարման 2026թ-ից 2034թ. ընկած ժամանակաշրջանում (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2025թ-ից մինչև 2034թ.), տոկոսադրույքը կազմում է 1.94% - 4.3% (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1.77% - 4.3%): 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ վարկի գծով մնացորդը կազմում է 7,846,916 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,723,401 հազար ՀՀ դրամ):

Միջազգային կառույցների կողմից տնտեսության տարբեր հատվածների և հիփոթեքային շուկայի զարգացման նպատակով փոքր և միջին բիզնեսներին տրամադրված ֆինանսավորման այս տեսակի համար շուկա գոյություն չունի: Այս վարկերը շուկայի առանձին մաս են և, հետևաբար, սկզբնական ճանաչման պահին Խումբը չի գեղչել:

22. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹՈՎ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Այլ պարտավորություններ տեղական արժույթով		
Կրեդիտորական պարտքեր	**4,077,766**	3,823,752
Այլ պարտավորություններ	**623,925**	683,389
Ընդամենը այլ պարտավորություններ տեղական արժույթով	**4,701,691**	4,507,141

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

23. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ.**	31 դեկտեմբերի 2024թ.
Պարտավորություններ արտարժույթով		
Կառավարության ընթացիկ հաշիվներ	**1,121,909**	1,394,968
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**1,121,909**	1,394,968
Պարտավորություններ տեղական արժույթով		
Ժամկետային ավանդներ	**462,513,008**	378,399,033
Կառավարության ընթացիկ հաշիվներ	**33,712,171**	49,190,624
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով	**496,225,179**	427,589,657
Ընդամենը պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	**497,347,088**	428,984,625

Կառավարության ժամկետային ավանդների ժամկետայնությունը մինչև 4 ամիս է, տոկոսադրույքը կազմում է 6.55%-ից 6.8% (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7.7%-ից 7.8%):

24. ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի դուստր կազմակերպությունն ուներ թողարկված 29,536,720 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, 3 և 5 տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր և 26,000,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 7 տարի ժամկետայնությամբ կանաչ պարտատոմսեր (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 26,627,230 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, 3 տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր և 26,000,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 7 տարի ժամկետայնությամբ կանաչ պարտատոմսեր): Կանաչ պարտատոմսերը թողարկվել և տեղաբաշխվել են Ֆրանսիայի օրենսդրության համաձայն: Կանաչ պարտատոմսերը տեղաբաշխվել են Զարգացման ֆրանսիական գործակալությանը՝ Ֆրանսիայի Euroclear հարթակում փակ տեղաբաշխման միջոցով:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամով պարտատոմսերի միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 9%-ից 12%, իսկ ԱՄՆ դոլարով պարտատոմսերինը՝ 4.5% (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ՀՀ դրամով պարտատոմսեր՝ 9.5%-ից 12% և ԱՄՆ դոլարով պարտատոմսեր՝ 4.5%):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում է 30,073,132 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 27,032,225 հազար ՀՀ դրամ), իսկ ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը՝ 9,903,707 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,291,731 հազար ՀՀ դրամ):

25. ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Խմբի կապիտալն իրենից ներկայացնում է Խմբի ակտիվների մնացորդային արժեքը՝ պարտավորությունների չափով նվազեցում կատարելուց հետո: Բանկը կապիտալը կառավարում է Օրենքի համաձայն: Բանկի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների կողմից սահմանված պահանջներ:

Համաձայն Օրենքի՝ Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 100,000 հազար ՀՀ դրամ: Բանկի կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Կապիտալը կառավարելիս Բանկի նպատակն է պահպանել կապիտալի համապատասխան մակարդակ՝ Բանկի տնտեսական անկախությունը և իր գործառույթներն իրականացնելու կարողությունն ապահովելու համար: Բանկի ղեկավարությունը կառավարման ներքո գտնվող ողջ կապիտալը դիտարկում է որպես սեփական կապիտալ, ինչպես ներկայացված է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Բանկի կապիտալի բաղադրիչների կառավարման նպատակները և քաղաքականությունը սահմանված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի (այսուհետ՝ «Խորհուրդ») որոշումներով հաստատված համապատասխան ներքին կանոնակարգերով: Իր գործառույթների իրականացման հետ կապված ֆինանսական ռիսկերը ծածկելու նպատակով միջոցների և պահուստների ձևավորումը կատարվում է Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերին և Օրենքին համապատասխան:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

25. ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Գլխավոր պահուստը ձևավորվում է Օրենքի համաձայն և ենթակա չէ բաշխման: Գլխավոր պահուստը ձևավորվում է բանկային գործունեության արդյունքում առաջացող ընդհանուր ռիսկերը (հնարավոր վնասները) ծածկելու համար: Կառավարության կողմից թողարկված մուրհակն իրենից ներկայացնում է Կառավարության ներդրումը ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակի տեսքով, որը կատարվում է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասի՝ պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում:

Օրենքի 12-րդ կետի համաձայն՝ Բանկը 2024թ. շահույթի 20%-ի՝ 3,229,246 հազար ՀՀ դրամի չափով մասհանում էր կատարել գլխավոր պահուստին: 2024թ. շահույթի մնացած՝ 12,916,984 հազար ՀՀ դրամը ենթակա էր բաշխման ՀՀ կառավարության կողմից թողարկված մուրհակի հետ հաշվանցման միջոցով: 2025թ. ընթացքում Կառավարությունը թողարկել է նոր անտոկոս հասարակ մուրհակ 149,520,272 հազար ՀՀ դրամ արժեքով, որը փոխարինել է 162,437,256 հազար ՀՀ դրամ արժեքով նախորդ մուրհակը միևնույն պայմաններով (2024թ ընթացքում ՀՀ կառավարությունը թողարկել էր անտոկոս հասարակ մուրհակ 162,437,256 հազար ՀՀ դրամ արժեքով, որը փոխարինել էր 204,071,927 հազար ՀՀ դրամ արժեքով նախորդ մուրհակը): Նոր մուրհակի թողարկումը ոչ դրամական գործարք է:

Օրենքի 12-րդ կետի համաձայն՝ Բանկը 2025թ. շահույթի 20%-ի՝ 9,484,303 հազար ՀՀ դրամի չափով մասհանում է կատարել գլխավոր պահուստին: 2025թ. շահույթի մնացած՝ 37,937,210 հազար ՀՀ դրամը ենթակա է բաշխման ՀՀ կառավարության կողմից թողարկված մուրհակի հետ հաշվանցման միջոցով:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Այլ պահուստներ» հոդվածն իրենից ներկայացնում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը՝ 2,314,611 ՀՀ դրամի չափով (դրական ազդեցություն) (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,253,912 հազար ՀՀ դրամ (դրական ազդեցություն)) և ասոցիացված կազմակերպությունների՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի զուտ մասնաբաժինը 1,256,713 հազար ՀՀ դրամի չափով (դրական ազդեցություն) (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,322,345 հազար ՀՀ դրամ (դրական ազդեցություն)):

26. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կապիտալ բնույթի պայմանագրային հանձնառություններ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալ բնույթի պայմանագրային հանձնառությունները, որոնք վերաբերում են Խմբի ոչ ընթացիկ ակտիվներին, կազմում են 508,251 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 16,138 հազար ՀՀ դրամ):

Իրավական պարտավորություններ

Խմբի ղեկավարությանը հայտնի չէ Խմբի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

27. ՍԵԳՄԵՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Խումբը կազմված է հետևյալ երեք գործառնական սեգմենտներից՝ ելնելով իրենց գործառութային գործունեությունից.

ԿԲ գործառնություններ	Այս սեգմենտը ներառում է Կենտրոնական բանկի բոլոր գործառնությունները:
Դուստր կազմակերպությունների վերաֆինանսավորման գործառնություններ	Այս սեգմենտը ներառում է հիփոթեքային վերաֆինանսավորման գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունները:
Դուստր կազմակերպությունների այլ գործառնություններ	Այս սեգմենտը ներառում է այլ դուստր կազմակերպությունների գործառնությունները՝ ներառյալ վճարահաշվարկային ծառայություններ, ինկասացիոն ծառայություն, վարկավորման աջակցություն, ապահովագրական ենթակառուցվածքների աջակցություն:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

27. ՍԵԳՄԵՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Յուրաքանչյուր հաշվետու սեգմենտի ակտիվների և պարտավորությունների համադրումը Խմբի ակտիվների և պարտավորությունների հետ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազար ՀՀ դրամ	**ԿԲ գործառնու-թյուններ**	**Դուստր կազմ. վերաֆի-նանսավորման գործառնու-թյուններ**	**Դուստր կազմ. այլ գործառնու-թյուններ**	**Ընդամենը հաշվետու սեգմենտներ**	**Համախմբման ազդեցություն**	**Ընդամենը**
Ակտիվներ	**3,198,558,769**	**333,989,539**	**19,574,691**	**3,552,122,999**	**(218,023,020)**	**3,334,099,979**
Պարտավորություններ	**3,258,202,281**	**81,356,425**	**953,669**	**3,340,512,375**	**(35,172,413)**	**3,305,339,962**

Խոշոր ասոցիացված կազմակերպությունում ներդրման հաշվեկշռային արժեքը ներկայացված է «Դուստր կազմակերպությունների վերաֆինանսավորման գործառնություններ» սեգմենտում:

Յուրաքանչյուր հաշվետու սեգմենտի ակտիվների և պարտավորությունների համադրումը Խմբի ակտիվների և պարտավորությունների հետ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազար ՀՀ դրամ	**ԿԲ գործառնու-թյուններ**	**Դուստր կազմ. վերաֆի-նանսավորման գործառնու-թյուններ**	**Դուստր կազմ. այլ գործառնու-թյուններ**	**Ընդամենը հաշվետու սեգմենտներ**	**Համախմբման ազդեցություն**	**Ընդամենը**
Ակտիվներ	2,868,380,540	314,957,418	18,451,713	3,201,789,671	(215,769,001)	**2,986,020,670**
Պարտավորություններ	2,925,999,110	78,884,068	964,023	3,005,847,201	(37,864,883)	**2,967,982,318**

Բանկի «Ակտիվներ» տողում ներառված Բանկի կապիտալ ներդրումները՝ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Ներդրումներ իրավաբանական անձանց կապիտալում	**5,500,000**	754,908
Շենքերի և շինությունների կառուցում և կապիտալ վերանորոգում	**39,319**	120,389
Տրանսպորտային միջոցների ձեռքբերում	**24,850**	35,260
Այլ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	**724,111**	1,239,842
Ընդամենը կապիտալ ներդրումներ	**6,288,280**	2,150,399

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

27. ՍԵԳՄԵՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Յուրաքանչյուր հաշվետու սեգմենտի շահույթի/վնասի համադրումը Խմբի շահույթի/վնասի հետ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազար ՀՀ դրամ	ԿԲ գործառնություններ	Դուստր կազմ. վերաֆինանսավորման գործառնություններ	Դուստր կազմ. այլ գործառնություններ	Ընդամենը հաշվետու սեգմենտ	Համախմբման ազդեցություն	Ընդամենը
Տոկոսային եկամուտ	**88,286,799**	**20,620,006**	**229,261**	**109,136,066**	**(2,043,448)**	**107,092,618**
Տոկոսային ծախս	**(52,483,276)**	**(6,036,580)**	**(7,094)**	**(58,526,950)**	**2,043,665**	**(56,483,285)**
Պարտքային կորուստների գծով ծախս	**(3,621,410)**	**(9,305)**	**(2,194)**	**(3,632,909)**	**2,412**	**(3,630,497)**
Բանկային գործառնություններից միջնորդավճարների գծով եկամուտ	**65,418**	**–**	**–**	**65,418**	**(1,940)**	**63,478**
Միջնորդավճարների գծով ծախս	**(534,940)**	**(39,834)**	**(191,971)**	**(766,745)**	**1,940**	**(764,805)**
Զուտ (վնաս)/օգուտ փոխարժեքային տարբերություններից	**(7,263,173)**	**155,072**	**(25,888)**	**(7,133,989)**	**–**	**(7,133,989)**
Զուտ վնաս ածանցյալ գործիքներից	**(54,705)**	**(503,624)**	**–**	**(558,329)**	**–**	**(558,329)**
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից	**30,645,859**	**–**	**–**	**30,645,859**	**–**	**30,645,859**
Այլ եկամուտ	**1,654,089**	**–**	**7,841,727**	**9,495,816**	**537,023**	**10,032,839**
Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	**(1,396,288)**	**–**	**–**	**(1,396,288)**	**–**	**(1,396,288)**
Մաշվածություն և ամորտիզացիա	**(2,071,298)**	**(66,380)**	**(1,675,894)**	**(3,813,572)**	**10,293**	**(3,803,279)**
Այլ ծախսեր (բացառությամբ մաշվածություն և ամորտիզացիա)	**(17,510,509)**	**(644,524)**	**(5,631,613)**	**(23,786,646)**	**3,563**	**(23,783,083)**
Շահույթ մինչև հարկումը	**35,716,566**	**13,474,831**	**536,334**	**49,727,731**	**553,508**	**50,281,239**
Շահութահարկի գծով ծախս	**–**	**(2,449,377)**	**(173,105)**	**(2,622,482)**	**–**	**(2,622,482)**
Հաշվետու տարվա շահույթ	**35,716,566**	**11,025,454**	**363,229**	**47,105,249**	**553,508**	**47,658,757**

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

27. ՍԵԳՄԵՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Յուրաքանչյուր հաշվետու սեգմենտի շահույթի/վնասի համադրումը Խմբի շահույթի/վնասի հետ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազար ՀՀ դրամ	ԿԲ գործառնություններ	Դուստր կազմ. Վերաֆինանսավորման գործառնություններ	Դուստր կազմ. այլ գործառնություններ	Ընդամենը հաշվետու սեգմենտ	Համախմբման ազդեցություն	Ընդամենը
Տոկոսային եկամուտ	81,291,818	18,355,470	161,591	99,808,879	(1,928,151)	97,880,728
Տոկոսային ծախս	(50,453,585)	(5,115,595)	(61,885)	(55,631,065)	1,928,437	(53,702,628)
Պարտքային կորստների գծով ծախս	(18,983,552)	88,391	(8,382)	(18,903,543)	(1,267)	(18,904,810)
Բանկային գործառնություններից միջնորդավճարների գծով եկամուտ	62,265	–	–	62,265	(1,940)	60,325
Միջնորդավճարների գծով ծախս	(400,167)	(38,359)	(575,160)	(1,013,686)	1,940	(1,011,746)
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(7,730,393)	(30,725)	(7,733)	(7,768,851)	–	(7,768,851)
Զուտ օգուտ ածանցյալ գործիքներից	349,450	–	–	349,450	–	349,450
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից	32,708,232	–	–	32,708,232	–	32,708,232
Այլ եկամուտ	1,762,279	679,767	6,927,605	9,369,651	146,916	9,516,567
Արժեզրկումից կորուստ ասոցիացված կազմակերպություններում ներդրումների գծով	–	(13,959,047)	–	(13,959,047)	–	(13,959,047)
Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	(5,519,044)	–	–	(5,519,044)	–	(5,519,044)
Մաշվածություն և ամորտիզացիա	(2,212,160)	(65,198)	(1,334,719)	(3,612,077)	10,294	(3,601,783)
Այլ ծախսեր (բացառությամբ մաշվածություն և ամորտիզացիա)	(14,503,080)	(554,728)	(4,435,055)	(19,492,863)	3,564	(19,489,299)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	**16,372,063**	**(640,024)**	**666,262**	**16,398,301**	**159,793**	**16,558,094**
Շահութահարկի գծով ծախս	–	107,623	(227,593)	(119,970)	–	(119,970)
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)	**16,372,063**	**(532,401)**	**438,669**	**16,278,331**	**159,793**	**16,438,124**

Ստորև աղյուսակում ներկայացվում են «Այլ ծախսեր» տողում ներառված Բանկի վարչական ծախսերը՝ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն.

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	**8,405,151**	7,654,028
Աշխատակիցների սոցիալական ապահովություն	**426,025**	368,279
Անձնակազմի գործուղում, ուսուցում և վերապատրաստում	**476,397**	425,135
Ներկայացուցչական ծախսեր	**30,094**	30,173
Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում	**15,375**	29,635
Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր	**24,579**	25,079
Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր	**48,406**	59,236
Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր	**16,127**	17,728
Ընդամենը վարչական ծախսերը	**9,442,154**	8,609,293

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

28. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Գործարքներ ղեկավար անձնակազմի անդամների հետ

Ղեկավար անձնակազմը բաղկացած է Կենտրոնական բանկի Խորհրդի անդամներից: Ստորև ներկայացված է «Անձնակազմի գծով ծախսեր և հարակից վճարներ» հոդվածում ներառված ղեկավար անձնակազմի անդամների կարճաժամկետ ընդհանուր վարձատրությունը (Ծանոթագրություն 11):

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Ղեկավար անձնակազմ	**422,076**	396,353
Ընդամենը	**422,076**	396,353

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամներին տրամադրված վարկերի մնացորդը կազմել է 167,538 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 190,630 հազար ՀՀ դրամ): 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը ճանաչել է 5,846 հազար ՀՀ դրամի չափով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,720 հազար ՀՀ դրամ) տոկոսային եկամուտ ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների գծով:

Գործարքներ Հայաստանի Հանրապետության կառավարության հետ

Ստորև ներկայացված են Կառավարության հետ գործարքների մնացորդները և պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույքները:

	31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Մնացորդ**	**Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք**	Մնացորդ	Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն				
Ակտիվներ				
ՀՀ կառավարության արժեթղթեր տեղական արժույթով *(Ծնթգ. 15.2, 15.4)*	**32,383,735**	**10%**	30,345,832	10.15%
ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր արտարժույթով *(Ծնթգ. 15.1)*	**8,556,281**	**3.61%**	8,534,719	4.25%
	40,940,016		38,880,551	
ՀՀ կառավարության կողմից թողարկված մուրհակ *(Ծնթգ. 15.2)*				
Մնացորդը հունվարի 1-ին	**149,520,272**		162,437,256	
Շահույթից բաշխման ենթակա մասնաբաժին՝ Կառավարության կողմից թողարկված մուրհակի հետ հաշվանցման եղանակով *(Ծնթգ. 15.2, 25)*	**(37,937,210)**		(12,916,984)	
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**111,583,062**		149,520,272	
Ակտիվները դեկտեմբերի 31-ի դրությամբ	**152,523,078**		188,400,823	
Պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ (տեղական արժույթով, *Ծնթգ. 23*)	**496,225,179**	**7.48%**	427,589,657	8.05%
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ (արտարժույթով, *Ծնթգ. 23*)	**1,121,909**		1,394,968	
Պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ	**497,347,088**		428,984,625	

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

28. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ (շարունակություն)

Գործարքներ Հայաստանի Հանրապետության կառավարության հետ (շարունակություն)

Տեղական արժույթով ՀՀ կառավարության հանդեպ պարտավորություններում ներառված ավանդների շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**378,399,033**	367,026,690
Ավելացում	**4,113,000,000**	2,804,000,000
Տոկոսային ծախս	**41,783,469**	37,103,274
Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը)	**(4,070,669,494)**	(2,829,730,931)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**462,513,008**	378,399,033

Կառավարության հետ գործարքների գծով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ Կառավարության արժեթղթերից	**3,814,947**	3,183,684
Տոկոսային ծախս *(Ծնթգ. 5)*	**(42,121,528)**	(37,826,614)

Գործարքներ ասոցիացված կազմակերպությունների հետ

Ստորև բերված աղյուսակներում ներառված տեղեկատվությունը վերաբերում է ասոցիացված կազմակերպությունների հետ գործարքների արդյունքներին և մնացորդներին.

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2025թ. Մնացորդ**	31 դեկտեմբերի 2024թ. Մնացորդ
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն		
Ակտիվներ		
Հետգնման պայմանագրեր	**104,130,141**	112,135,852
Վարկեր ռեզիդենտ ֆինանսական հաստատություններին սեփական միջոցներից	**29,379,636**	51,209,483
Հիփոթեքային վերաֆինանսավորում	**26,736,588**	24,390,664
Վարկեր բանկերին և ֆինանսական հաստատություններին KfW, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	**2,617,104**	3,741,768
Ընդամենը ակտիվներ	**162,863,469**	191,477,767
Պարտավորություններ		
Ասոցիացված կազմակերպությունների լորո և այլ հաշիվներ արտարժույթով *(Ծնթգ. 20)*	**30,321,391**	21,097,179
Ասոցիացված կազմակերպությունների լորո և այլ հաշիվներ տեղական արժույթով *(Ծնթգ. 20)*	**15,057,040**	31,826,171
Ընդամենը պարտավորություններ	**45,378,431**	52,923,350

Հազար ՀՀ դրամ	**2025թ.**	2024թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ	**13,601,200**	15,565,120
Տոկոսային ծախսեր	**(12,315)**	(15,864)

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

28. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ (շարունակություն)

Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև բերված աղյուսակներում ներառված տեղեկատվությունը վերաբերում է այլ կապակցված կողմերի հետ գործարքների արդյունքներին և մնացորդներին, որոնց կառավարման մարմիններում Բանկն ունի ներկայացուցիչներ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2025թ. Մնացորդ	31 դեկտեմբերի 2024թ. Մնացորդ
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն		
Պարտավորություններ		
Ընթացիկ հաշիվներ (տեղական արժույթով, *Ծնթգ. 20*)	**3,598**	8,414
Ընթացիկ հաշիվներ (արտարժույթով, *Ծնթգ. 20*)	**8,126**	3,112
Ընդամենը	**11,724**	11,526

29. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում տարեվերջի դրությամբ արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են հետևյալ հոդվածներից.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Նոստրո հաշիվներ *(Ծնթգ. 12)*	**1,089,843,777**	704,245,241
Ժամկետային ավանդներ	**36,229,155**	–
Կանխիկ դրամ	**13,653,100**	14,247,091
ԱՄՀ-ում ՀՓԻ միջոցներ *(Ծնթգ. 16)*	**483,045**	765,538
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**1,140,209,077**	719,257,870

30. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի, հետևյալ կերպ. (ա) մակարդակ 1՝ գնահատումներ գործող շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գներով, (բ) մակարդակ 2՝ գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալները ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտարկելի են, (գ) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն շուկայի դիտարկելի տվյալների վրա (այն է՝ ոչ դիտարկելի ելակետային տվյալներ)։ Ֆինանսական գործիքները դասակարգելիս Ղեկավարությունը կիրառում է դատողություն՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան։ Եթե իրական արժեքի գնահատման համար օգտագործվում են նշանակալի ճշգրտում պահանջող դիտարկելի ելակետային տվյալներ, ապա տվյալ գնահատումը մակարդակ 3-ի գնահատում է։ Գնահատման ելակետային տվյալների նշանակալիությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական գնահատման համադրությամբ։

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ

Իրական արժեքի պարբերական գնահատումներն այն գնահատումներն են, որոնք հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում։ Իրական արժեքի պարբերական գնահատումների դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի ներկայացված է ստորև։

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

30. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ (շարունակություն)

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ (շարունակություն)

	31 դեկտեմբերի 2025թ.				31 դեկտեմբերի 2024թ.			
Հազար ՀՀ դրամ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ								
Ֆինանսական ակտիվներ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ								
Սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր *(Ծնթգ.13)*	**678,285,193**	**–**	**–**	**678,285,193**	645,739,482	–	–	645,739,482
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր *(Ծնթգ.13)*	**104,474,939**	**–**	**–**	**104,474,939**	103,789,492	–	–	103,789,492
Արտերկրյա փողի շուկայի գործիքներ	**–**	**17,748,942**	**–**	**17,748,942**	–	–	–	–
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ								
Արտերկրյա արժեթղթեր *(Ծնթգ.15.1)*	**333,751**	**2,492,778**	**–**	**2,826,529**	320,116	2,232,741	–	2,552,857
ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր *(Ծնթգ.15.2)*	**–**	**7,817,083**	**–**	**7,817,083**	–	9,583,870	–	9,583,870
ՀՀ Կառավարության կողմից թողարկված մուրհակ *(Ծնթգ.15.2)*	**–**	**111,583,062**	**–**	**111,583,062**	–	149,520,272	–	149,520,272
Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով *(Ծնթգ.15.2)*	**–**	**624,235**	**–**	**624,235**	–	842,971	–	842,971
ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր *(Ծնթգ.15.1)*	**–**	**8,556,281**	**–**	**8,556,281**	–	8,534,719	–	8,534,719
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ								
Արտարժութային սվոփ պայմանագրեր արտաքին շուկայում *(Ծնթգ.14)*	**–**	**109,149**	**–**	**109,149**	–	158,575	–	158,575
Ընդամենը ակտիվներ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	**783,093,883**	**148,931,530**	**–**	**932,025,413**	749,849,090	170,873,148	–	920,722,238

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

30. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ (շարունակություն)

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ (շարունակություն)

	31 դեկտեմբերի 2025թ.				31 դեկտեմբերի 2024թ.			
Հազար ՀՀ դրամ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ								
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ								
Արտարժութային սվոփ պայմանագրեր ներքին շուկայում *(Ծնթգ. 14)*	–	**361,548**	–	**361,548**	–	–	–	–
Ընդամենը պարտավորություններ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	–	**361,548**	–	**361,548**	–	–	–	–

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև։

Հազար ՀՀ դրամ	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Օգտագործված ելակետային տվյալներ
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր			
Արտերկրյա արժեթղթեր *(Ծնթգ.15.1)*	**2,492,778**	Ձեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդ (ՁԴՄՀՄ)	Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ եվրո
Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով *(Ծնթգ.15.1)*	**624,235**		Գնանշված գներ
ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր *(Ծնթգ.15.1)*	**8,556,281**		Գնանշված գներ
ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր *(Ծնթգ.15.2)*	**7,817,083**	ՁԴՄՀՄ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Կառավարության կողմից թողարկված մուրհակ *(Ծնթգ.15.2)*	**111,583,062**	ՁԴՄՀՄ	Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ ՀՀ դրամ
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ			
Արտերկրյա փողի շուկայի գործիքներ *(Ծնթգ. 13)*	**17,748,942**	ՁԴՄՀՄ	BIS տոկոսադրույք
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ			
Արտարժութային սվոփ պայմանագրեր արտաքին շուկայում *(Ծնթգ. 14)*	**109,149**	ՁԴՄՀՄ	ԱՄՆ դոլարի OIS կոր, Արտարժույթի սփոթ փոխարժեքներ, Արտարժույթի ֆորվարդ կետեր
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Արտարժութային սվոփ պայմանագրեր ներքին շուկայում *(Ծնթգ. 14)*	**(361,548)**	ՁԴՄՀՄ	Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ ՀՀ դրամ
Ընդամենը պարբերական հիմունքով իրական արժեքով չափումներ 2-րդ մակարդակում	**148,569,982**		

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

30. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ (շարունակություն)

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ (շարունակություն)

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև:

Հազար ՀՀ դրամ	**Իրական արժեք**	**Գնահատման մեթոդ**	**Օգտագործված ելակետային տվյալներ**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր			
Արտերկրյա արժեթղթեր *(Ծնթգ.15.1)*	2,232,741	Ձեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդ (ՁԴՄՀՄ)	Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ եվրո
Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով *(Ծնթգ.15.1)*	842,971		Գնանշված գներ
ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր *(Ծնթգ.15.1)*	8,534,719		Գնանշված գներ
ՀՀ կառավարության գանձապետական արժեթղթեր *(Ծնթգ.15.2)*	9,583,870	ՁԴՄՀՄ	Պետական պարտատոմսերի եկամտաբերու-թյան կոր
Կառավարության կողմից թողարկված մուրհակ *(Ծնթգ.15.2)*	149,520,272	ՁԴՄՀՄ	Ոչ ռիսկային տոկոսադրույք՝ ՀՀ դրամ
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ			
Արտարժութային սվոփ պայմանագրեր արտաքին շուկայում *(Ծնթգ. 14)*	158,575	ՁԴՄՀՄ	ԱՄՆ դոլարի OIS կոր, Արտարժույթի սփոթ փոխարժեք-ներ, Արտարժույթի ֆորվարդ կետեր
Ընդամենը պարբերական հիմունքով իրական արժեքով չափումներ 2-րդ մակարդակում	**170,873,148**		

(բ) Ակտիվներ և պարտավորություններ, որոնք չեն չափվում իրական արժեքով, սակայն որոնց իրական արժեքը բացահայտվում է

Խմբի ղեկավարությունը կարծում է, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքի մոտարկումն է՝ պայմանավորված դրանց մարման ժամկետներով և գործիքների բնույթով: Իրական արժեքի հիերարխիայում այդ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներառված են մակարդակ 2-ում:

Իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակի իրական արժեքները գնահատվել են օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը: Գործող շուկայում չգնանշված՝ լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է որպես դրանց հաշվեկշռային արժեքին հավասար: Չգնանշված՝ ֆիքսված տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է հիմք ընդունելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերը՝ զեղչված համանման պարտքային ռիսկ և մարման մնացած ժամկետ ունեցող նոր գործիքների համար շուկայում գործող ընթացիկ տոկոսադրույքներով:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ներածություն

Խմբի գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Ռիսկերի կառավարումը Խումբն իրականացնում է բացահայտման, գնահատման, մոտեցումների, մշտադիտարկման և հաշվետվողականության մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման այդ գործընթացը չափազանց կարևոր է Խմբի հիմնական գործառույթների իրականացման համար, և Խմբում յուրաքանչյուր անհատ պատասխանատու է իր պարտականություններին առնչվող ռիսկերի ազդեցության մասով: Խմբի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Վերջինս ներառում է առևտրային և ոչ առևտրային ռիսկեր: Խմբի գործունեությունը ենթարկվում է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի կառավարման գործընթացը չի ընդգրկում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի, տեխնոլոգիաների և ոլորտի փոփոխությունը: Նման ռիսկերը վերահսկվում են Խմբի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացի միջոցով:

Խորհուրդը վերջնական պատասխանատու է ռիսկերի կառավարման համար, սակայն գոյություն ունեն ռիսկերի կառավարման և մշտադիտարկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Խորհուրդը

Խորհուրդը հաշվետու է ռիսկերի կառավարման ընդհանուր մոտեցումների, ռազմավարության և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Ինստիտուցիոնալ հիմքերը

ՀՀ միջազգային պահուստները Բանկի պահանջներն են ոչ ռեզիդենտների նկատմամբ՝ արտահայտված ազատ փոխարկելի արտարժույթով: Պահուստներն արտացոլվում են Խմբի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Բանկը պահուստների կառավարումն իրականացնում է Օրենքի 52-րդ հոդվածում նշված սկզբունքներին համապատասխան՝ ներդրումներ կատարելով Խորհրդի կողմից հաստատված ներդրումային քաղաքականությանը և ռիսկերի կառավարման հայեցակարգին համապատասխան:

Պահուստները նախատեսված են արտաքին վճարային/առևտրային անհավասարակշռությունները ֆինանսավորելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների անխոչընդոտ կատարումն ապահովելու համար: Բանկը պահուստներն օգտագործում է ՀՀ Կառավարության և պետական գործակալությունների արտարժութային սպասարկման համար, օրինակ՝ արտարժույթի փոխարկման կամ արտաքին պարտքի գծով վճարումների համար:

Բանկն ունի որոշումների կայացման եռամակարդակ համակարգ, ըստ որի Խորհրդի կողմից սահմանվում է «Ակտիվների ռազմավարական տեղաբաշխումը», այսինքն՝ պահուստների կառավարման հիմնական սկզբունքները ներդրումային հորիզոնի համար, մինչդեռ ներդրումային հանձնաժողովին տրվել է պահուստների կառավարման գործընթացի կատարման և մշտադիտարկման գործադիր իրավասություն: Պորտֆելի կառավարիչները, իրենց հերթին, կայացնում են պորտֆելի կառավարման վերաբերյալ որոշումներ՝ ուղենիշերից տակտիկական շեղումների շրջանակներում՝ համաձայն Խորհրդի կողմից սահմանված ուղենիշերի և ակտիվ ռիսկի հանդուրժողականության մակարդակների:

Կառավարում և վերահսկողություն

Ըստ Բանկի կառուցվածքի՝ ՀՀ միջազգային պահուստների կառավարման համար պատասխանատու է Ֆինանսական շուկաների դեպարտամենտը: Ֆինանսական գործառնությունների վարչությունը իրականացնում է պահուստների ամենօրյա կառավարման հետ կապված գործառնություններ: Ռիսկերի կառավարման վարչությունը պատասխանատու է ռիսկերի գնահատման և բացահայտման համար, սահմանաչափերի պահպանման մշտադիտարկման, միջազգային պահուստների կառավարման կատարողականի գնահատման և հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև աջակցում է ակտիվների ռազմավարական տեղաբաշխմանը և ուղենիշների մշակմանը:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Կառավարում և վերահսկողություն

Պահուստների կառավարման հետ կապված խնդիրներն առնվազն եռամսյակային պարբերականությամբ քննարկվում են Բանկի Ներդրումային հանձնաժողովի կողմից, որում ընդգրկված են միջազգային պահուստների կառավարման գործընթացում ներգրավված մասնագետներ: Պահուստների կառավարման կատարողականի և ռիսկի պրոֆիլի վերաբերյալ Ռիսկերի կառավարման վարչությունը եռամսյակային պարբերականությամբ զեկուցում է Ներդրումային հանձնաժողովին և կիսամյակային պարբերականությամբ՝ Խորհրդին: Բանկը յուրաքանչյուր եռամսյակ Կառավարությանն է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է այն:

Ակտիվների տեղաբաշխում և ռիսկերի կառավարում

Համաձայն Օրենքի 52-րդ հոդվածի՝ ՀՀ միջազգային պահուստները կառավարվում են իրացվելիության և անվտանգության պատշաճ մակարդակի ապահովման սկզբունքով: Այս նպատակով Բանկի Ռիսկերի կառավարման վարչությունը մշակում է ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և ներդրումային ուղենիշների նախագծերը, որոնք հաստատվում են Բանկի Խորհրդի կողմից: Ներդրումային ուղենիշները համապատասխանում են ներդրումային գործընթացը կարգավորող բոլոր սահմանաչափերին և պահանջներին, ինչպես նաև ակտիվների այն կառուցվածքը, որը համապատասխանում է Խորհրդի կողմից պահուստների կառավարմանը ներկայացվող սկզբունքներին:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է կրել վնաս հաճախորդների կամ պայմանագրի կողմերի կողմից պարտականությունների չկատարման կամ պարտքային որակի վատթարացման պատճառով: Խումբը վերահսկում և կառավարում է պարտքային ռիսկը սահմանելով սահմանաչափեր պայմանագրի կողմերի կողմից պահանջներին համապատասխանության համար և ռիսկի չափի համար, որը պատրաստ է ընդունել առանձին պայմանագրի կողմերի, աշխարհագրական կամ ոլորտային կենտրոնացումների հետ կապված, ինչպես նաև սահմանված սահմանաչափերի պահպանման վերահսկողության միջոցով:

Խումբը մշակել է վարկային որակի ստուգման ընթացակարգ՝ ապահովելու գործընկերների վճարունակության հնարավոր փոփոխությունների վաղաժամկետ հայտնաբերումը: Միջազգային պահուստների վարկային որակը գնահատելու համար Բանկը գնահատում է գործընկերների վարկունակությունը՝ հիմք ընդունելով միջազգային հեղինակավոր վարկանիշային կազմակերպությունների կողմից շնորհված վարկանիշները:

Խումբը սահմանում է նվազագույն ընդունելի վարկանիշներ թույլատրելի թողարկողների, գործիքների և գործընկերների համար: Այդ վարկանիշները չեն կարող ցածր լինել որոշակի սահմանված նվազագույն մակարդակից, որը պարբերաբար վերանայվում է:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքներից առաջացող պարտքային ռիսկը ցանկացած պահի կառավարվում է գործընկերոջ վարկունակության սահմանափակման կիրառությամբ:

Պարտքային ռիսկի առավելագույն չափը՝ առանց գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի, ներառյալ ածանցյալ գործիքների, պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը, նախքան ռիսկի նվազեցումը հաշվանցման գլխավոր պայմանագրի և գրավի պայմանագրի միջոցով, լավագույնս ներկայացվում է դրանց հաշվեկշռային արժեքով:

Երբ ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով, հաշվեկշռային արժեքն արտացոլում է ընթացիկ, բայց ոչ առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին, որը կարող է առաջանալ ապագայում՝ արժեքների փոփոխությունների արդյունքում:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր դասի պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է համապատասխան ծանոթագրություններում:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Պարտքային ռիսկն ըստ ֆինանսական ակտիվների դասերի

Խմբի ֆինանսական ակտիվները, բացառությամբ բաժնային ներդրումների, դասակարգվում են ըստ Խմբի պայմանագրային կողմերին «Fitch IBCA», «Moody's» և «Standard & Poor's» վարկանիշային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշներից նվազագույնի: Ստորև ներկայացված են վարկանիշներն ըստ «Moody's» վարկանշային գործակալության կոդերի՝ օգտագործելով վարկանիշների համապատասխանության աղյուսակները: AAA վարկանիշն օգտագործվում է չափազանց հուսալի միջազգային ֆինանսական հաստատությունների նույնականացման համար:

		31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Վարկանիշ**	**Գումար**	**%-ը ֆինանսա-կան ակտիվ-ներում**	**Գումար**	**%-ը ֆինանսա-կան ակտիվ-ներում**
Ֆինանսական ակտիվներ					
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով (Փուլ 1)					
Նոստրո հաշիվներ	P-1	**1,084,348,853**	**95.9**	693,316,878	97.8
	P-2	**1,788,082**	**0.2**	460,734	0.1
	P-3	**–**	**–**	897,595	0.1
	NP	**69,950**	**0.0**	240,158	0.0
	Վարկանիշ առկա չէ	**3,636,892**	**0.3**	9,329,876	1.4
Ժամկետային ավանդներ	P-1	**36,296,828**	**3.2**	–	–
	Վարկանիշ առկա չէ	**2,303,622**	**0.2**	2,395,412	0.3
	NP	**2,126,512**	**0.2**	2,256,089	0.3
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ և ածանցյալ ֆինանսական գործիքների պարտադիր մարժա	P-1	**170,601**	**0.0**	171,153	0.0
	NP	**4,476**	**0.0**	–	–
ԱՊԿ պահուստ		**(61,645)**	**–**	(113,440)	–
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		**1,130,684,171**	**100.0**	708,954,455	100.0
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ					
Սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր	Aaa	**183,143,477**	**22.9**	507,214,023	67.7
	Aa1-Aa3	**440,393,268**	**55.0**	123,037,545	16.4
	A1	**54,748,448**	**6.8**	15,487,914	2.1
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր					
	Aaa	**95,076,060**	**11.9**	80,077,637	10.7
	Aa1-Aa3	**9,398,879**	**1.2**	23,711,855	3.1
Արտերկրյա փողի շուկայի գործիքներ	Վարկանիշ առկա չէ	**17,748,942**	**2.2**	–	–
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		**800,509,074**	**100.0**	749,528,974	100.0
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, բացառությամբ բաժնային ներդրումների (Փուլ 1)					
ՀՀ կառավարության արժեթղթեր	Ba3	**7,817,083**	**6.0**	9,583,870	5.7
Կառավարության կողմից թողարկված մուրհակ	Ba3	**111,583,062**	**86.8**	149,520,272	88.7
Կորպորատիվ պարտատոմսեր արտարժույթով	Վարկանիշ առկա չէ	**624,235**	**0.5**	842,971	0.5
ՀՀ կառավարության եվրոպարտատոմսեր	Ba3	**8,556,281**	**6.7**	8,534,719	5.1
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, բացառությամբ բաժնային ներդրումների		**128,580,661**	**100.0**	168,481,832	100.0
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ (Փուլ 1)					
ՀՀ կառավարության արժեթղթեր	Ba3	**24,566,652**	**100.0**	20,761,962	100.0
ԱՊԿ պահուստ		**(74,440)**	**–**	(76,979)	–
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		**24,492,212**	**100.0**	20,684,983	100.0

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Պարտքային ռիսկն ըստ ֆինանսական ակտիվների դասերի (շարունակություն)

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկանիշ չունեցող դասում ներառված ընթացիկ հաշիվները և ժամկետային ավանդները կազմել են համապատասխանաբար 483,840 հազար ՀՀ դրամ և 2,303,622 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,419,337 հազար ՀՀ դրամ և 2,395,412 հազար ՀՀ դրամ) և իրենցից ներկայացնում են Խմբի դուստր կազմակերպությունների կողմից տեղական առևտրային բանկերում ընթացիկ հաշիվներ և ներդրված ավանդներ:

		31 դեկտեմբերի 2025		31 դեկտեմբերի 2024		
Հազար ՀՀ դրամ	**Վարկանիշ**	**Փուլ 1**	**%-ը ֆինանսական ակտիվներում**	Փուլ 1	Փուլ 2	%-ը ֆինանսական ակտիվներում
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ						
	Ba3	**268,352,298**	**50.0**	302,366,458	–	46.4
	B1-B2	**91,115,097**	**17.0**	115,839,205	–	17.8
Հետգնման պայմանագրեր	Վարկանիշ առկա չէ	**177,225,843**	**33.0**	233,076,237	–	35.8
Ընդամենը		**536,693,238**	**100.0**	651,281,900	–	100.0
Վարկեր բանկերին և ֆինանսական հաստատություններին KfW, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	Ba3	**104,471,593**	**45.3**	99,901,314	–	43.4
	B1-B2	**40,746,432**	**17.7**	49,574,568	–	21.5
	Վարկանիշ առկա չէ	**85,431,652**	**37.0**	80,695,222	–	35.1
Ընդամենը		**230,649,677**	**100.0**	230,171,104	–	100.0
	Ba3	**104,435,327**	**43.7**	73,041,027	–	32.1
	B1-B2	**61,458,380**	**25.7**	86,372,524	–	38.0
Հիփոթեքային վերաֆինանսավորում	Վարկանիշ առկա չէ	**73,283,266**	**30.6**	67,787,460	–	29.9
Ընդամենը		**239,176,973**	**100.0**	227,201,011	–	100.0
Վարկեր ռեզիդենտ ֆինանսական հաստատություններին սեփական միջոցներից	Վարկանիշ առկա չէ	**29,379,636**	**100.0**	28,911,801	22,297,682	100.0
Ընդամենը		**29,379,636**	**100.0**	28,911,801	22,297,682	100.0
	Ba3	**12,654,111**	**42.4**	7,901,269	–	39.9
	B1-B2	**6,816,806**	**22.9**	7,804,114	–	39.4
Առևտրային բանկերում ավանդներ	Վարկանիշ առկա չէ	**10,342,730**	**34.7**	4,089,157	–	20.7
Ընդամենը		**29,813,647**	**100.0**	19,794,540	–	100.0
Այլ վարկեր	Վարկանիշ առկա չէ	**2,226,962**	**100.0**	2,175,719	–	100.0
Ընդամենը		**2,226,962**	**100.0**	2,175,719	–	100.0
ԱՊԿ պահուստ		**(3,390,816)**	**–**	(3,313,708)	(22,297,682)	–
Ընդամենը բանկերում, ֆինանսական հաստատություններում և այլ ֆինանսական ակտիվներում տեղաբաշխված միջոցներ տեղական արժույթով		**1,064,549,317**	**–**	1,156,222,367	–	–

Բանկը որոշումներ է կայացնում տեղական բանկերում և ֆինանսական հաստատություններում միջոցների տեղաբաշխման վերաբերյալ՝ հաշվի առնելով իր՝ որպես բանկային ոլորտի կարգավորողի և վերջին ատյանի վարկատուի դերը և, այդ իսկ պատճառով, չի շնորհում վարկանիշներ տեղական բանկերին և ֆինանսական հաստատություններին: Այսպիսով, այդ ակտիվների պարտքային որակի վերլուծությունը սահմանափակվում է համապատասխան գործարքի փուլով:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Արժեզրկման գնահատում

Խումբը ԱՊԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՊԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

Դեֆոլտի հավանականություն (PD)	Դեֆոլտի հավանականությունը որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատականն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պայուսակում է:
Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեք (EAD)	Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, չկատարված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:
Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD)	Դեֆոլտի դեպքում կորստի չափը դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

ԱՊԿ պահուստը հիմնվում է պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստ կամ ԱԿԱՊԿ), եթե առկա չէ պարտքային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարտքային կորուստի վրա (12ամԱՊԿ): 12ամԱՊԿ-ը ԱԿԱՊԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՊԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՊԿ-ն, այնպես էլ 12ամԱՊԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պայուսակի բնույթից:

Խումբը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտի տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա Խումբը խմբավորում է իր վարկերը ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1.	Սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՊԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
Փուլ 2.	Երբ գործիքի պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների (ԱԿԱՊԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
Փուլ 3.	Ակտիվը համարվում է պարտքային առումով արժեզրկված: Խումբը ձևակերպում է ԱԿԱՊԿ պահուստ:
Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները (POCI).	Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՊԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատականը:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Արժեզրկման գնահատում (շարունակություն)

Դեֆոլտի սահմանում և վերականգնում

Խումբը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել դեֆոլտի և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ պայմանագրի կողմի վարկանիշը նվազում է Խմբի կողմից նախապես սահմանված վարկանիշից: Անկախ վարկանիշի փոփոխությունից, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից, համարվում է, որ տեղի է ունեցել դեֆոլտ ֆինանսական գործիքի գծով:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Խումբը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են վկայել փոխառուի վճարում կատարելու քիչ հավանականության մասին: Եթե այդպիսի դեպք է տեղի ունենում, Խումբը մանրամասն ուսումնասիրում է, արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և, հետևաբար, դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է: Այդպիսի դեպքերը ներառում են.

- Փոխառուի կողմից պարտականությունների չկատարման կամ դրա հավանականության մասին վկայող ներքին վարկանիշը,
- Խմբի կողմից շտապ ֆինանսավորում պահանջող փոխառու,
- Գրավի առարկայի արժեքի էական նվազումը, այն դեպքում, երբ վարկի վերադարձն ակնկալվում է գրավի առարկայի վաճառքի միջոցով,
- Կովենանտի խախտում, որը չի զիջվել Խմբի կողմից,
- Պարտապանի (կամ պարտապանի խմբում ներառված որևէ իրավաբանական անձի) դիմումը սնանկության ճանաչման վերաբերյալ,
- Պարտապանի ցուցակված պարտքի գծով վճարումների կամ բաժնետոմսերի առքուվաճառքի կասեցումը առաջնային ֆոնդային բորսայում՝ պարտապանի ֆինանսական դժվարությունների մասին կասկածների կամ փաստերի:

Խմբի քաղաքականության համաձայն՝ ֆինանսական գործիքը համարվում է վերականգնված և, հետևաբար, վերադասակարգվում է 3-րդ փուլից այն դեպքում, երբ դեֆոլտի չափանիշներից ոչ մեկը առկա չի եղել առնվազն վեց հաջորդական ամիսների ընթացքում: Ակտիվի վերականգնումից հետո այն 2-րդ կամ 1-ին փուլ դասելու մասին որոշում կայացնելը կախված է վերանայված վարկանիշից վերականգնման պահին և այն հանգամանքից, թե արդյոք այն վկայում է սկզբնական ճանաչման պահից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճի մասին:

Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթաց

Այն պայմանագրի կողմերի համար, որոնք ունեն միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշ, կիրառվում է «Moody's» վարկանիշային գործակալության տեղափոխումների տարեկան անցումային աղյուսակը:

Այն պայմանագրի կողմերի համար, որոնք չունեն միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշ, դեֆոլտի հավանականությունը գնահատվում է ֆինանսական կայունության ներքին ինդեքսի հիման վրա՝ վարկանիշ ունեցող պայմանագրի կողմերի դեֆոլտի հավանականության էքստրապոլյացիայի միջոցով:

Պարտքի գումարը դեֆոլտի պահին

Պարտքի գումարը դեֆոլտի պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Արժեզրկման գնահատում (շարունակություն)

Կորուստը դեֆոլտի դեպքում

Ֆինանսական ակտիվների յուրաքանչյուր խմբի համար դեֆոլտի դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործվում են տվյալ ֆինանսական գործիքի պարտքի առաջնայնության կարգավիճակին համապատասխանող վերադարձի դրույքները («Moody's») կամ գտնվելու վայրի երկրի վերադարձի դրույքները (ԱՄՀ):

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Խումբը շարունակաբար մշտադիտարկում է բոլոր ակտիվները, որոնց գծով կարող են ճանաչվել ակնկալվող պարտքային կորուստներ: Որոշելու համար, արդյոք գործիքի կամ գործիքների պորտֆելի գծով կառաջանան 12-ամսյա կամ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, Խումբը գնահատում է, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Խումբը համարում է, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է այն դեպքում, երբ պայմանագրի կողմի վարկանիշը փոփոխվել է մեկ կետով սկզբնական ճանաչումից հետո՝ ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգերի համաձայն:

Պարտքային ռիսկի նշանակալի աճի գնահատումը տեղական առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների համար, որոնք չունեն միջազգային վարկանիշ, հիմնվում է անհատական գործիքների վարքի և առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների ֆինանսական կայունության ընդհանուր ցուցանիշների վրա: Համակարգային ռիսկերի մակրոպրուդենցիալ վերլուծությունը ևս մեկ գործիք է որոշակի ակտիվների 1-ին փուլից 2-րդ փուլ տեղափոխելու հնարավորությունը գնահատելու համար:

Անկախ վարկանիշների փոփոխություններից՝ համարվում է, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե պայմանագրով նախատեսված վճարումներն ավելի քան 30 օր ժամկետանց են:

Դուրսգրումներ

Ֆինանսական ակտիվները դուրս են գրվում ամբողջությամբ կամ մասնակիորեն այն դեպքում, երբ Խումբը այլևս չունի ակտիվի ամբողջական կամ դրա որևէ մասի վերականգնման ողջամիտ ակնկալիք: Եթե դուրսգրվող գումարը գերազանցում է կուտակված արժեզրկման պահուստը, տարբերությունը ճանաչվում է որպես լրացուցիչ արժեզրկման կորուստ, որը ներկայացվում է որպես պահուստի ավելացում՝ կիրառված ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ: Ցանկացած հետագա վերականգնումներ հաշվառվում են որպես պարտքային կորուստների ծախսի նվազեցում:

Հետևյալ դեպքերը ներկայացնում են հանգամանքների օրինակներ, որոնք կարող են հանգեցնել ամբողջական կամ մասնակի դուրսգրման.

- Վարկառուն հայտարարվել է սնանկ կամ վճարունակ չէ, հատկապես չապահովված պահանջների դեպքում, երբ առկա չեն բավարար միջոցներ չապահովված վարկատուների պահանջները բավարարելու համար,
- Կան արտաքին վկայություններ, որ ակնկալվող դրամական հոսքերը անշրջելիորեն նվազել են, և համապատասխանաբար, Խումբը չունի վերականգնման ողջամիտ ակնկալիք:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Արժեզրկման գնահատում (շարունակություն)

Ապագայամետ տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Խումբը որպես ելակետային տվյալներ օգտագործում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ.

- ՀՆԱ աճը,
- Գործազրկության ցուցանիշը,
- ՍԳԻ,
- Միջազգային պահուստները,
- Դրամավարկային քաղաքականության դրույքը,
- Բաժնետոմսերի ինդեքսի գինը,
- Արտարժույթի փոխարժեքները,
- Վարկ/ՀՆԱ հարաբերակցությունը,
- Այլ մակրոտնտեսական գործոններ՝ ելնելով յուրաքանչյուր երկրի առանձնահատկություններից:

ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող ելակետային տվյալները և մոդելները հնարավոր է, որ չարտացոլեն շուկայի բոլոր բնութագրերը ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ: Այս առումով ժամանակ առ ժամանակ որպես ժամանակավոր ճշգրտումներ կատարվում են որակական ճշգրտումներ կամ վերագնահատումներ՝ տարբերությունների էական լինելու դեպքում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային բանկերի հետ Խումբն ուներ հակադարձ հետգնման պայմանագրեր, որոնք ներառված են հաշվանցման գլխավոր համաձայնություններում և դեֆոլտի դեպքում ենթակա են կատարման: Խումբը կատարել է նաև մարժային ավանդներ՝ որպես ապահովություն ածանցյալ գործիքների գծով դիրքերի համար:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող հաշվանցման ենթակա ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

Ֆինանսական ակտիվների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆինանսական գործիքներ (դրամական միջոցներից տարբեր գրավ)	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ *(Ծնթգ. 12)*	**536,693,238**	**–**	**536,693,238**	**536,693,238**	**–**	**–**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**536,693,238**	**–**	**536,693,238**	**536,693,238**	**–**	**–**

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող հաշվանցման ենթակա ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ

Ֆինանսական ակտիվների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումարներ	Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆինանսական գործիքներ (դրամական միջոցներից տարբեր գրավ)	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ *(Ծնթգ. 12)*	651,281,900	–	651,281,900	651,281,900	–	–
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**651,281,900**	**–**	**651,281,900**	**651,281,900**	**–**	**–**

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Ստորև ներկայացված են Խմբի ակտիվները և պարտավորությունները՝ ըստ աշխարհագրական կենտրոնացման:

	31 դեկտեմբերի 2025թ.				31 դեկտեմբերի 2024թ.			
Հազար ՀՀ դրամ	**Հայաստան**	**ՏՀՀԿ**	**ԱՊՀ և այլ երկրներ**	**Ընդամենը**	Հայաստան	ՏՀՀԿ	ԱՊՀ և այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ								
Կանխիկ դրամ	**13,653,100**	**–**	**–**	**13,653,100**	14,247,091	–	–	14,247,091
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	**4,922,779**	**1,120,517,457**	**5,243,935**	**1,130,684,171**	12,234,947	694,281,202	2,438,306	708,954,455
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով	**1,064,549,317**	**–**	**–**	**1,064,549,317**	1,156,222,367	–	–	1,156,222,367
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**–**	**788,038,660**	**12,470,414**	**800,509,074**	–	749,528,974	–	749,528,974
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**–**	**109,149**	**–**	**109,149**	–	158,575	–	158,575
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**128,580,661**	**2,829,752**	**–**	**131,410,413**	168,481,832	2,556,080	–	171,037,912
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**24,492,212**	**–**	**–**	**24,492,212**	20,684,983	–	–	20,684,983
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	**26,930,576**	**–**	**–**	**26,930,576**	21,468,457	–	–	21,468,457
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	**–**	**67,839,348**	**–**	**67,839,348**	–	67,395,555	–	67,395,555
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	**63,086,074**	**–**	**–**	**63,086,074**	65,201,083	–	–	65,201,083
Այլ ակտիվներ	**10,765,731**	**70,814**	**–**	**10,836,545**	10,992,486	7,936	120,796	11,121,218
Ընդամենը ակտիվներ	**1,336,980,450**	**1,979,405,180**	**17,714,349**	**3,334,099,979**	1,469,533,246	1,513,928,322	2,559,102	2,986,020,670
Պարտավորություններ								
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	**1,152,022,629**	**–**	**–**	**1,152,022,629**	986,167,919	–	–	986,167,919
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	**1,229,813,712**	**5,650,249**	**667,609**	**1,236,131,570**	1,119,344,084	2,623,016	1,467,422	1,123,434,522
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**361,548**	**–**	**–**	**361,548**	–	–	–	–
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	**497,347,088**	**–**	**–**	**497,347,088**	428,984,625	–	–	428,984,625
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	**–**	**192,583,977**	**–**	**192,583,977**	–	199,084,273	–	199,084,273
Այլ փոխառություններ	**–**	**178,076,073**	**3,741,396**	**181,817,469**	–	184,217,525	3,962,829	188,180,354
Թողարկված պարտքային արժեթղթեր	**39,976,839**	**–**	**–**	**39,976,839**	37,323,956	–	–	37,323,956
Այլ պարտավորություններ	**4,753,426**	**269,546**	**75,870**	**5,098,842**	4,716,702	5,000	84,967	4,806,669
Ընդամենը պարտավորություններ	**2,924,275,242**	**376,579,845**	**4,484,875**	**3,305,339,962**	2,576,537,286	385,929,814	5,515,218	2,967,982,318
Զուտ ակտիվներ	**(1,587,294,792)**	**1,602,825,335**	**13,229,474**	**28,760,017**	(1,107,004,040)	1,127,998,508	(2,956,116)	18,038,352

Իրացվելիության ռիսկ և ֆինանսական միջոցների կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամկետում: Բանկը, որպես Կառավարության բանկային գործակալ և երկրի գլխավոր դրամավարկային մարմին, պատասխանատու է պետական պարտքի սպասարկման և Կառավարության արտաքին վճարումների սպասարկման համար: Այդ նպատակով պահուստների կառավարման ռազմավարական ուղեցույցները սահմանվում են՝ հաշվի առնելով կանխիկի և իրացվելիության ծավալների ճիշտ կառավարումը:

ՀՀ միջազգային պահուստները բաժանվում են երկու պայուսակների՝ հիմք ընդունելով միջազգային պահուստների կառավարման նպատակները: Պորտֆելները ձևավորվում և կառավարվում են անվտանգության և իրացվելիության առաջնային կառավարման չափանիշներին համապատասխան՝ ապահովելու համար պորտֆելների նպատակների իրականացումը ներդրումային հորիզոնի ընթացքում:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսական միջոցների կառավարում (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ պայմանագրով նախատեսված մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև աղյուսակներում ներկայացվում են 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտավորությունները՝ ըստ պայմանագրով նախատեսված մինչև մարումը մնացած ժամկետների: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված պարտավորությունների գումարները պայմանագրային չզեղչված դրամական միջոցների հոսքեր են: Այդ չզեղչված դրամական միջոցների հոսքերը տարբերվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված գումարից, քանի որ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարը հիմնված է զեղչված դրամական միջոցների հոսքերի վրա: Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառված են պայմանագրերի համաձայն վճարվելիք կամ ստացվելիք գումարներում: Առանց սահմանված մարման ժամկետի ԱՄՀ-ի հանդեպ պարտավորություններում ներառված են կրեդիտորական պարտքերը, որոնց համար մարման ժամկետ սահմանված չէ, որոնք սակայն ենթակա են վճարման անդամակցության դադարեցման կամ ԱՄՀ-ի ՀՓԻ բաժնի լուծարման դեպքում: Նմանապես, ԱՄՀ-ում անդամակցության բաժնեմասը չունի սահմանված մարման ժամկետ և համարվում է ոչ ընթացիկ ակտիվ *(Ծանոթագրություն 32)*:

	31 դեկտեմբերի 2025թ.						
Հազար ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Առանց սահմանված մարման ժամկետի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	**1,152,022,629**	**–**	**–**	**–**	**–**	**–**	**1,152,022,629**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	**1,236,302,841**	**–**	**–**	**–**	**–**	**–**	**1,236,302,841**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	**115,853,396**	**104,489,897**	**284,046,798**	**–**	**–**	**–**	**504,390,091**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	**–**	**2,530,458**	**10,879,465**	**15,823,470**	**46,880,874**	**177,834,972**	**253,949,239**
Այլ փոխառություններ	**2,122,379**	**451,678**	**23,874,733**	**99,510,290**	**84,066,150**	**–**	**210,025,230**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**–**	**5,550,000**	**7,618,190**	**24,715,193**	**10,361,551**	**–**	**48,244,934**
Ածանցյալ պարտավորություններ							
Ստացվելիք պայմանագրային գումարներ	**–**	**(3,973,771)**	**–**	**(2,185,499)**	**–**	**–**	**(6,159,270)**
Վճարվելիք պայմանագրային գումարներ	**–**	**4,317,064**	**–**	**2,548,374**	**–**	**–**	**6,865,438**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**2,506,301,245**	**113,365,326**	**326,419,186**	**140,411,828**	**141,308,575**	**177,834,972**	**3,405,641,132**

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսական միջոցների կառավարում (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ պայմանագրով նախատեսված մինչև մարումը մնացած ժամկետների (շարունակություն)

	31 դեկտեմբերի 2024թ.						
Հազար ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Առանց սահմանված մարման ժամկետի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	986,167,919	–	–	–	–	–	986,167,919
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	1,123,435,082	–	–	–	–	–	1,123,435,082
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	139,297,704	293,176,892	–	–	–	–	432,474,596
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	–	840,626	12,037,000	26,352,162	47,371,860	175,902,411	262,504,059
Այլ փոխառություններ	2,044,870	476,087	25,428,527	97,940,867	94,582,565	–	220,472,916
Թողարկված պարտքային արժեթղթեր	–	550,000	12,888,975	24,405,901	11,238,510	–	49,083,386
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**2,250,945,575**	**295,043,605**	**50,354,502**	**148,698,930**	**153,192,935**	**175,902,411**	**3,074,137,958**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական գների, այդ թվում՝ տոկոսադրույքների, փոխարժեքի և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Խումբը դասակարգում է շուկայական ռիսկն ըստ առևտրային և ոչ առևտրային պայուսակների:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույքների փոփոխության արդյունքում:

Եռամակարդակ կառավարման ներքո Բանկի Խորհուրդը սահմանում է ընդհանուր ռիսկի հանդուրժողականությունը, այսինքն՝ ներդրումային հորիզոնի ընթացքում ընդունելի տոկոսադրույքային ռիսկի մակարդակը: Խորհուրդը նաև պատասխանատու է ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և ուղենիշերի սահմանման սկզբունքների ձևակերպման, ինչպես նաև միջազգային պահուստների ակտիվների ռազմավարական տեղաբաշխման տարեկան արդյունքների հաստատման համար:

Օպտիմալ պայուսակի ընտրության նպատակով եկամտաբերության և ռիսկայնության գնահատումն իրականացվում է ապագա հնարավոր սցենարների մշակման միջոցով՝ մասնավորապես օգտագործելով VAR մոդելի սիմուլյացիաների միջոցով ստացված եկամտաբերության կորի արդյունքները, ինչպես նաև սեփական և շուկայի այլ մասնակիցների փորձագիտական կանխատեսումները տոկոսադրույքների և վարկային սպրեդների վերաբերյալ:

Ռիսկի մշտադիտարկման և կառավարման նպատակով Ֆինանսական շուկաների դեպարտամենտի Ռիսկերի կառավարման վարչության կողմից կիրառվում են միջազգային պրակտիկայում ընդունված մի շարք ցուցանիշներ. Ռիսկային արժեքի մեթոդ (VaR), Պայմանական Ռիսկային արժեքի մեթոդ (CVaR), Առանցքային կետի դյուրացիա, Ինֆորմացիոն գործակից, Սպրեդ դյուրացիա, PCA դյուրացիա, հետևման սխալ և այլն:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Տոկոսադրույքի ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է Խմբի սեփական կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է վերագնահատելով 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատուն տոկոսադրույքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունների հետևանքների տեսանկյունից: Սեփական կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի մարման ժամկետների: Սեփական կապիտալի զգայունությունը հիմնված է եկամտաբերության կորի զուգահեռ փոփոխությունների ենթադրության վրա:

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Եկամտաբերու-թյան կորի փոփոխությունը, բ.կ.**	**Ազդեցությունը սեփական կապիտալի վրա**	Եկամտաբերու-թյան կորի փոփոխությունը, բ.կ.	Ազդեցությունը սեփական կապիտալի վրա
Արժույթ				
ՀՀ դրամ	**+150**	**(380,719)**	+150	(430,083)
ՀՀ դրամ	**-150**	**382,214**	-150	473,376
ԱՄՆ դոլար	**+125**	**1,251,491**	+125	2,027,406
ԱՄՆ դոլար	**-25**	**586,117**	-25	1,306,329

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի շահույթի զգայունությունը, որը հաշվարկվում է վերագնահատելով 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները՝ ելնելով տոկոսադրույքների փոփոխության ենթադրությունից: Աղյուսակում բացահայտված գումարներն արտահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթով:

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Բազիսային կետերի փոփոխություն**	**Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում)**	Բազիսային կետերի փոփոխություն	Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում)
Արժույթ				
ԱՄՆ դոլար	**+125/-50**	**(6,633,365)/ 2,653,346**	+125/-50	(6,378,860)/ 2,551,544
Եվրո	**+50/-50**	**(1,119,013)/ 1,119,013**	+50/-50	(991,719)/ 991,719
Բրիտանական ֆունտ	**+125/-125**	**(8,060)/ 8,060**	+125/-125	(32,340)/ 32,340
Չինական յուան	**+150/-150**	**(21,565)/ 21,565**	+150/-150	(87,172)/87,172

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի նաև լողացող տոկոսադրույքով պարտավորություններ:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Տոկոսադրույքի ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է Խմբի շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, որը հաշվարկվում է ելնելով Խմբի կողմից ստացված փոխառությունների տոկոսադրույքների փոփոխության ենթադրությունից:

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Բազիսային կետերի փոփոխություն**	**Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ)**	Բազիսային կետերի փոփոխություն	Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ)
Արժույթ				
ԱՄՆ դոլար	**+/-31**	**38,554/(38,554)**	+/-71	96,378/(96,378)
ՀՓԻ	**+/-58**	**116,051/(116,051)**	+/-138	367,841/(367,841)
Եվրո	**+/-20**	**35,833/(35,833)**	+/-20	145,244/(145,244)

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Բանկի Խորհուրդը պատասխանատու է միջազգային պահուստների արժույթների կշիռների հաստատման համար՝ առնվազն տարեկան հաճախականությամբ:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Արտարժույթի ռիսկ (շարունակություն)

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները՝ դասակարգված ըստ արժույթների.

	31 դեկտեմբերի 2025թ.				
Հազար ՀՀ դրամ	**ԱՄՆ դոլար**	**Եվրո**	**ՀՓԻ**	**Այլ**	**Ընդամենը**
Ակտիվներ արտարժույթով					
Կանխիկ դրամ	**13,591,480**	**54,113**	**–**	**7,507**	**13,653,100**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	**871,723,391**	**238,458,121**	**–**	**20,502,659**	**1,130,684,171**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**570,345,775**	**213,203,755**	**–**	**16,959,544**	**800,509,074**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**109,149**	**–**	**–**	**–**	**109,149**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**9,514,267**	**2,496,001**	**–**	**–**	**12,010,268**
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	**–**	**–**	**67,839,348**	**–**	**67,839,348**
Այլ ակտիվներ	**58,163**	**12,089**	**–**	**562**	**70,814**
Ընդամենը ակտիվներ արտարժույթով	**1,465,342,225**	**454,224,079**	**67,839,348**	**37,470,272**	**2,024,875,924**
Պարտավորություններ արտարժույթով					
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	**550,624,138**	**152,677,411**	**–**	**15,122**	**703,316,671**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**361,548**	**–**	**–**	**–**	**361,548**
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	**541,299**	**3,783**	**–**	**576,827**	**1,121,909**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	**–**	**–**	**192,583,977**	**–**	**192,583,977**
Այլ փոխառություններ	**75,294,758**	**102,781,315**	**3,741,396**	**–**	**181,817,469**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**9,903,707**	**–**	**–**	**–**	**9,903,707**
Այլ պարտավորություններ	**314,679**	**11,941**	**–**	**70,531**	**397,151**
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**637,040,129**	**255,474,450**	**196,325,373**	**662,480**	**1,089,502,432**
Զուտ արտարժութային դիրք	**828,302,096**	**198,749,629**	**(128,486,025)**	**36,807,792**	**935,373,492**

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Արտարժույթի ռիսկ (շարունակություն)

	31 դեկտեմբերի 2024թ.				
Հազար ՀՀ դրամ	**ԱՄՆ դոլար**	**Եվրո**	**ՀՓԻ**	**Այլ**	**Ընդամենը**
Ակտիվներ արտարժույթով					
Կանխիկ դրամ	14,191,490	49,880	–	5,721	14,247,091
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	468,845,937	214,794,408	–	25,314,110	708,954,455
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	524,124,357	191,057,871	–	34,346,746	749,528,974
Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	158,575	–	–	–	158,575
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	9,697,806	2,235,964	–	–	11,933,770
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	–	–	67,395,555	–	67,395,555
Այլ ակտիվներ	122,661	6,071	–	–	128,732
Ընդամենը ակտիվներ արտարժույթով	**1,017,140,826**	**408,144,194**	**67,395,555**	**59,666,577**	**1,552,347,152**
Պարտավորություններ արտարժույթով					
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	409,755,402	118,822,219	–	14,134	528,591,755
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	571,303	16,610	–	807,055	1,394,968
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	–	–	199,084,273	–	199,084,273
Այլ փոխառություններ	80,165,173	104,052,352	3,962,829	–	188,180,354
Թողարկված պարտքային արժեթղթեր	10,291,731	–	–	–	10,291,731
Այլ պարտավորություններ	219,891	220	–	79,417	299,528
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**501,003,500**	**222,891,401**	**203,047,102**	**900,606**	**927,842,609**
Զուտ արտարժութային դիրք	**516,137,326**	**185,252,793**	**(135,651,547)**	**58,765,971**	**624,504,543**

Այլ արտարժույթը ներկայացնում է հիմնականում ճապոնական իենով և չինական յուանով արտահայտված մնացորդները:

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փոխարժեքի աճ %**	**Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)**	Փոխարժեքի աճ %	Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)
Արժույթ				
ԱՄՆ դոլար	**2.00%**	**16,566,042**	10.00%	51,629,821
Եվրո	**3.00%**	**5,962,481**	13.50%	24,987,715
Բրիտանական ֆունտ	**3.00%**	**218,963**	16.00%	3,062,805
Ճապոնական իեն	**6.00%**	**896,220**	13.50%	2,460,961
Ռուսական ռուբլի	**8.00%**	**326,672**	20.00%	323,432
ՀՓԻ	**2.00%**	**(2,569,720)**	12.00%	(16,278,186)

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Արտարժույթի ռիսկ (շարունակություն)

	2025թ.		2024թ.	
Հազար ՀՀ դրամ	**Փոխարժեքի նվազում %**	**Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)**	Փոխարժեքի նվազում %	Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)
Արժույթ				
ԱՄՆ դոլար	**(2.00)%**	**(16,566,042)**	(10.00)%	(51,629,821)
Եվրո	**(3.00)%**	**(5,962,481)**	(13.50)%	(24,987,715)
Բրիտանական ֆունտ	**(3.00)%**	**(218,963)**	(16.00)%	(3,062,805)
Ճապոնական իեն	**(6.00)%**	**(896,220)**	(13.50)%	(2,460,961)
Ռուսական ռուբլի	**(8.00)%**	**(326,672)**	(20.00)%	(323,432)
ՀՓԻ	**(2.00)%**	**2,569,720**	(12.00)%	16,278,186

Փոխարժեքների ակնկալվող փոփոխությունը Խմբի կողմից որոշվել է վերլուծելով տարեկան ստանդարտ շեղումները՝ հիմք ընդունելով համապատասխան փոխարժեքների պատմական շուկայական տվյալները:

Պահուստների արժութային կազմը հիմնականում արտացոլում է պայուսակների նպատակներից բխող արժութային կառուցվածքը: Կարճաժամկետ իրացվելիության տրանշի արժութային կառուցվածքը ենթակա է վերանայման տարեկան առնվազն երկու անգամ:

Ոչ ֆինանսական, ներառյալ՝ գործառնական ռիսկերի կառավարում

ՀՀ կենտրոնական բանկում (այսուհետ՝ Բանկ) ոչ ֆինանսական ռիսկերի կառավարման գործառույթները համակարգվում են Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից, որի առաքելությունն է Բանկում ռիսկերի կառավարման դրական մշակույթի ձևավորումը և միասնական քաղաքականության, կարգերի և մեթոդաբանության սահմանման, ռիսկերի կառավարման գործընթացում ռիսկերի սեփականատերերին աջակցության, ռիսկերի մոնիտորինգի և հաշվետվողականության միջոցով ոչ ֆինանսական ռիսկերի կառավարման ապահովումը:

Բանկի ռիսկերի կառավարման վերահսկողությունն իրականացվում է Ռիսկերի կառավարման կոմիտեի կողմից (այսուհետ՝ ՌԿԿ), որը նախագահում է ՀՀ ԿԲ նախագահը:

ՌԿԿ-ի նպատակն է աջակցել ՀՀ ԿԲ նախագահին արդյունավետ կառավարել Բանկի ֆինանսական, ոչ ֆինանսական և ռազմավարական ռիսկերը: ՌԿԿ-ի իրավասությունների շրջանակը չի ներառում հանրային քաղաքականության ռիսկերը, ինչպես նաև միջազգային պահուստների կառավարման հետ կապված ֆինանսական ռիսկերը:

Ոչ ֆինանսական ռիսկերը գնահատելիս՝ հաշվի են առնվում դրանց առաջացման հավանականությունը և Բանկի վրա ազդեցությունը:

Բանկն առաջնորդվում է ռիսկերի գնահատման սանդղակով, որը սահմանում է ռիսկերի էականության գնահատման չափանիշները:

Ռիսկերի գնահատման գործընթացի շրջանակում գնահատվում են ներհատուկ ռիսկերը, այդ ռիսկերի նկատմամբ կիրառելի հսկողական միջավայրի արդյունավետությունը և մնացորդային ռիսկը՝ հաշվի առնելով հսկողական միջավայրի գնահատված արդյունավետությունը:

Գործառնական ռիսկ-հսկողություն դուստր կազմակերպությունների նկատմամբ

Ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 2-ում, Բանկն ունի բաժնային ներդրումներ մի քանի դուստր կազմակերպություններում, որոնք զբաղվում են ֆինանսական հատվածի զարգացմամբ և ենթակառուցվածքային գործունեությամբ: Այդ ներդրումների նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության ֆինանսական հատվածի զարգացմանը՝ ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը և բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով, որը, ինչպես նշված է Օրենքում, Բանկի խնդիրներից մեկն է:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

Գործառնական ռիսկ-հսկողություն դուստր կազմակերպությունների նկատմամբ (շարունակություն)

Բանկը դուստր կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում է հետևյալ կերպ.

- Բաժնետերերի ժողովներին մասնակցություն,
- Դուստր կազմակերպությունների ղեկավարների նշանակում (յուրաքանչյուր դուստր կազմակերպության Տնօրենների խորհուրդը նշանակվում է բաժնետերերի կողմից, և յուրաքանչյուր դուստր կազմակերպության Տնօրենների խորհուրդը նշանակում է Գործադիր տնօրենի),
- Առնվազն յուրաքանչյուր տարի դուստր կազմակերպությունների գործունեության արդյունքների վերլուծություն՝ ֆինանսական տեղեկատվության դիտարկման միջոցով, ներառյալ դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտի արդյունքների դիտարկումը,
- Դուստր կազմակերպությունների հետագա ռազմավարական զարգացման վերլուծություն, անհրաժեշտության դեպքում նաև ներդրումների դադարեցման ռազմավարության մշակում:

2015թ-ին Բանկը որդեգրել է հնարավոր ինստիտուցիոնալ ներդրողների հետ իր դուստր ընկերություններում ներդրումների օտարման վերաբերյալ բանակցություններն ակտիվացնելու քաղաքականություն:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

32. ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում կամ ավելի ուշ փոխհատուցվող կամ մարվող պայմանագրային գումարների վերաբերյալ:

	31 դեկտեմբերի 2025թ.		
Հազար ՀՀ դրամ	**Ընթացիկ**	**Ոչ ընթացիկ**	**Ընդամենը**
Ակտիվներ			
Կանխիկ դրամ	**13,653,100**	**–**	**13,653,100**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	**1,128,186,391**	**2,497,780**	**1,130,684,171**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**800,509,074**	**–**	**800,509,074**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**109,149**	**–**	**109,149**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով	**658,841,417**	**405,707,900**	**1,064,549,317**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**112,222,460**	**19,187,953**	**131,410,413**
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**7,901,983**	**16,590,229**	**24,492,212**
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	**–**	**26,930,576**	**26,930,576**
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	**511,724**	**67,327,624**	**67,839,348**
Հիմնական միջոցներ	**–**	**60,087,509**	**60,087,509**
Ոչ նյութական ակտիվներ	**–**	**2,998,565**	**2,998,565**
Այլ ակտիվներ	**6,937,198**	**3,899,347**	**10,836,545**
Ընդամենը ակտիվներ	**2,728,872,496**	**605,227,483**	**3,334,099,979**
Պարտավորություններ			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	**1,152,022,629**	**–**	**1,152,022,629**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	**1,236,131,570**	**–**	**1,236,131,570**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**361,548**	**–**	**361,548**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	**497,347,088**	**–**	**497,347,088**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	**10,668,169**	**181,915,808**	**192,583,977**
Այլ փոխառություններ	**21,825,036**	**159,992,433**	**181,817,469**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**10,524,759**	**29,452,080**	**39,976,839**
Այլ պարտավորություններ	**4,900,533**	**198,309**	**5,098,842**
Ընդամենը պարտավորություններ	**2,933,781,332**	**371,558,630**	**3,305,339,962**
Զուտ դիրքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(204,908,836)**	**233,668,853**	**28,760,017**

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

32. ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

	31 դեկտեմբերի 2024թ.		
Հազար ՀՀ դրամ	**Ընթացիկ**	**Ոչ ընթացիկ**	**Ընդամենը**
Ակտիվներ			
Կանխիկ դրամ	14,247,091	–	14,247,091
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	704,352,045	4,602,410	708,954,455
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	749,528,974	–	749,528,974
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	158,575	–	158,575
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և այլ ֆինանսական ակտիվներ տեղական արժույթով	748,128,597	408,093,770	1,156,222,367
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	153,944,177	17,093,735	171,037,912
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	4,195,758	16,489,225	20,684,983
Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում	–	21,468,457	21,468,457
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	784,059	66,611,496	67,395,555
Հիմնական միջոցներ	–	61,489,492	61,489,492
Ոչ նյութական ակտիվներ	–	3,711,591	3,711,591
Այլ ակտիվներ	8,092,510	3,028,708	11,121,218
Ընդամենը ակտիվներ	**2,383,431,786**	**602,588,884**	**2,986,020,670**
Պարտավորություններ			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	986,167,919	–	986,167,919
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	1,123,434,522	–	1,123,434,522
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	428,984,625	–	428,984,625
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	9,082,259	190,002,014	199,084,273
Այլ փոխառություններ	22,922,091	165,258,263	188,180,354
Թողարկված պարտքային արժեթղթեր	9,826,229	27,497,727	37,323,956
Այլ պարտավորություններ	4,371,979	434,690	4,806,669
Ընդամենը պարտավորություններ	**2,584,789,624**	**383,192,694**	**2,967,982,318**
Զուտ դիրքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(201,357,838)**	**219,396,190**	**18,038,352**

Օրենքի համաձայն՝ Կենտրոնական բանկի հաշվեկշռում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում հաշվեկշռի հրապարակման պահից երեսուն օրվա ընթացքում Կառավարությունը՝ գերազանցող գումարի չափով, օրենքով սահմանված կարգով, որպես ներդրում Կենտրոնական բանկի կապիտալում, Կենտրոնական բանկին է տրամադրում անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակներ:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

33. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	Այլ փոխառություններ	Թողարկված պարտքային արժեթղթեր	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը պարտավորություններ ֆինանսավորման գործունեությունից
Հաշվեկշռային արժեքը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	216,245,204	204,803,977	22,639,296	90,294	443,778,771
Փոխառությունների ստացում	–	13,432,118	–	–	13,432,118
Փոխառությունների մարում	(6,579,274)	(18,882,583)	–	–	(25,461,857)
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	–	–	17,455,110	–	17,455,110
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	–	–	(3,000,000)	–	(3,000,000)
Վճարումներ վարձակալության գծով	–	–	–	(115,683)	(115,683)
Արտարժույթի վերագնահատում	(10,246,251)	(10,899,512)	–	–	(21,145,763)
Այլ	(335,406)	(273,646)	229,550	490,373	110,871
Հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	199,084,273	188,180,354	37,323,956	464,984	425,053,567
Հաշվեկշռային արժեքը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	**199,084,273**	**188,180,354**	**37,323,956**	**464,984**	**425,053,567**
Փոխառությունների ստացում	**–**	**10,198,763**	**–**	**–**	**10,198,763**
Փոխառությունների մարում	**(8,469,631)**	**(22,398,567)**	**–**	**–**	**(30,868,198)**
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	**–**	**–**	**12,310,754**	**–**	**12,310,754**
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	**–**	**–**	**(9,388,510)**	**–**	**(9,388,510)**
Վճարումներ վարձակալության գծով	**–**	**–**	**–**	**(166,503)**	**(166,503)**
Արտարժույթի վերագնահատում	**2,136,294**	**5,840,354**	**–**	**–**	**7,976,648**
Այլ	**(166,959)**	**(3,435)**	**(269,361)**	**(3,199)**	**(442,954)**
Հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**192,583,977**	**181,817,469**	**39,976,839**	**295,282**	**414,673,567**

«Այլ» տողը ներառում է հաշվեգրված, սակայն դեռևս չվճարված տոկոսները: Խումբը վճարված տոկոսները դասակարգում է որպես դրամական հոսքեր գործառնական գործունեությունից:



© The Central Bank of Armenia 2026